

ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(76-րդ տարի) Թիվ-5 (1663)

Մայիս 2022

Բովանդակություն



«Դրոշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Սկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ <https://www.droshak.am>
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ



1- Առաջնորդող

Խաղաղությունը մուրալ, թե՛ նվաճել (Էջ 1-2)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան

Մոսկվա, թե՛ Բրյուսել (Էջ 3-5)

Գեորգ Յակոբճեան

Մի՛ շեղեք սլաքները (Էջ 6)

Անի Մելքոնյան

Կոլաբորացիոնիզմը և դրա հետևանքները հայ
իրականության մեջ (Էջ 7-10)

3- Գաղափարաքաղաքական

Արարատ Հակոբյան

Մայիսի 28-ի պատմական խորհուրդն ու դասերը
(անկախության 104-ամյակի առթիվ) (Էջ 11-14)

4- Քաղաքական

Աւօ Գաթրճեան

Համաթուրքականության-համաթուրանականու-
թեան գաղափարախօսութիւնը սերմանող թուրք
ղեկավարներու և գործիչներու վարքագիծը (մաս
2) (Էջ 15-22)

5- Պատմության լուսարձակ

Վանիկ Վիրաբյան

Մահմեդական բնակչության 1919 թ.
հակահայկական խռովության ճնշումը Չոդ-
Բասարգեչարի շրջանում և հայկական
պետականության ամբողջականության
վերահաստատումը (մաս 1) (Էջ 23-27)

Արմեն Յ. Մարուքյան

Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտի
նշանակությունը և նրա հերոսները (Էջ 28-31)

6- Հայ կյանք

Դավիթ Գասպարյան

Չարենցը հրատարակիչ (Էջ 32-40)

7- Ընթերցումներ

Վրէժ-Արմեն

Արժանաւոր դէմք մը, գիրք մը, հեղինակ մը
(Էջ 41-44)

Խաղաղությունը մուրալ, թե՛ նվաճել

Հայոց պետականության վերականգնման՝ մայիսի 28-ով թվագրվող տոնը այս օրերին մղում է խորհելու պետության ու պետականության գաղափարի շուրջ: Ընդհանուր հասկացողությամբ պետությունը որոշակի տարածքի վրա ապրող ժողովրդի վարչաքաղաքական կազմակերպությունն է, նրա բանակն ու ոստիկանությունը, պետականության խորհրդանիշները և այլն: Իրականում այս առարկայական երևույթների կողքին ավելի էական է ոչ նյութական և անշոշափելի մեկ այլ գործոն՝ պետականության գիտակցությունը: Երբ աշխարհի գերագոր տերությունների ներկայացուցիչներն անգամ անդրադառնում են իրենց պետությունների գոյությանը սպառնացող վտանգներին, ակնհայտ է դառնում, որ ռազմական, տնտեսական կամ այլ ներուժը հարաբերական գործոն է մտքի, գաղափարի, ծրագրի և նպատակի ուժի համեմատ:

Հնարավոր կլինե՞ր արդյոք 900-ամյա անէացումից հետո հայոց պետականության վերածնունդը, եթե պատմական ասպարեզում չհայտնվեին պետականության ստեղծման գաղափարին հետամուտ սերունդներ՝ օժտված անմնացորդ նվիրվածությամբ և իդեալների կենսագործմանը ձգտելու ինքնամոռաց կամքով: Մի պահ մոտվի պատմության այդ շղթայից դուրս բերենք ազգային-ազատագրական հեղափոխության հավերժական բանակի հիմնադիր Քրիստափոր Միքայելյանին, պետականակերտ Արամին, Ռուբենին, Դրոյին և նրանց գործակիցներին. հնարավոր կդառնա՞ր արդյոք հայոց նոր պետականության ծնունդը:

Հակառակ կողմից նույն տեսակետի ճշմարտացիությունն է փաստում այս սերնդից հարյուր տարի հետո եկած սերունդը (իսկ ավելի ստույգ՝ սերնդի մի հատվածը), որը երեսնամյա կայացած հայոց մի պետությունը հասցրեց կործանման եզրին, իսկ մյուսը տանում է ինքնիշխանության սահմանափակման: Պատահական չէ, որ այս նոր իշխանությունն իր գործունեությունը ծավալեց՝ գրոհելով գիտակցական համակարգի՝ պատմության, մշակույթի, հոգևոր ինքնության, ազգային ինքնագիտակցության հիմնապյունների և ազգային տեսլականների վրա:

Այո, ծանր փորձություններն ու փորձանքները, որ հայոց պետականության ղեկին տիրացած բախտախնդիրները բերեցին ապակողմնորոշված ժողովրդի գլխին, նրանց մոտ ստեղծեցին այն տպավորությունը, որ երեք տասնամյակ անկախության և պետականության կայացման պայքար մղած ժողովուրդը համակերպվել է իրենց պարտվողական ծրագրերին, և հասարակական դաշտում տրամադրությունները նպաստավոր են՝ մեկնարկելու ծանր պարտությունների ու ճակատագրական զիջումների երկրորդ փուլը:

Հանրապետության թիվ մեկ պաշտոնյայի՝ վերջին շրջանի ելույթները հենց այդ կապիտուլյացիայի ծրագրի մոտալուտ իրականացմանը հանրությանը նախապատրաստելու նպատակն էին հետապնդում,

որքան էլ որ փորձ է արվում սկիզբ առած գործընթացներն ամբողջովին չբացահայտելու, ներկայացնելու դրանք մշուշոտ ու խեղաթյուրված:

Թշնամու և պատվիրատուների առջև ծնված իշխանությունը հայտարարում է Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման հիմնական նպատակի մասին, սակայն ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է մոտ երեք տասնամյակ գերությունից ազատագրված երկիրը կրկին Ադրբեյջանին հանձնելուն, որի դեպքում Արցախը, իհարկե, հայաթափ կլինի՝ արժանապատվ Նախիջևանի ճակատագրին: Մեր պահանջների նշանդրի իջեցման անհրաժեշտության մասին ակնարկող վարչապետը Հայաստանի ու Ադրբեյջանի միջև սահմանազատումն ու սահմանագծումը ներկայացնում է որպես մի պարզ ու անհրաժեշտ գործողություն, այնինչ ակնհայտ է, որ այս գործընթացը ևս իրականացվելու է թելադրող հակառակորդի ծրագրով՝ Հայաստանն ու Արցախը կտրելով իրարից, Ադրբեյջանին թողնելով Հայաստանի այն տարածքները, ուր ներխուժել է թշնամին, ինչպես և գնալու են հավելյալ նորանոր զիջումների: Իշխանությունը լռում է Հայաստանի ինքնիշխան տարածքով լկտիացած թշնամուն հանձնվելիք միջանցքի մասին, այնինչ ակնհայտ է, որ այս դավադրության շուրջ ևս գոյություն ունի գաղտնի համաձայնություն:

Սահմանագծման ծրագիր է նախապատրաստվում նաև Թուրքիայի հետ, մի բան, որ չարեցին անգամ կոմունիստ ղեկավարները խորհրդային գաղութատիրության 70 տարիներին: Այս քայլով հակազգային իշխանությունը կօրինականացնի 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, կթաղի հայոց պահանջատիրությունն ու Սևրի դաշնագիրը և, ըստ էության, Թուրքիայի ներկա և ապագա իշխանությունների ուսերից կթոթափի հայությանն առնչվող բոլոր հոգները: Չմոռանա՞ք նաև, որ, հավաստիացնելով հայթորքական հարաբերությունների կարգավորման գործընթացում նախապայմանների բացակայության մասին, Հայաստանի ղեկավարն արդեն իսկ հրապարակայնորեն ընդունել է դրանք՝ հայտարարելով, որ Հայաստանի օրակարգում ցեղասպանության հարց չկա, ընդունելով Արցախը որևէ կարգավիճակով կամ առանց կարգավիճակի Ադրբեյջանի կազմում թողնելու պահանջը: Թուրքիայի հետ սահմանագծումը կնշանակի նաև վերջինիս տարածքային ամբողջականության ճանաչում:

Այս ամենի դիմաց Նիկոլ Փաշինյանը հայ ժողովրդին խոստանում է խաղաղություն, ինչը նույնպիսի խաբեություն է, ինչպես նրա բոլոր մյուս խոստումները:

Կարելի է հավատալ, թե Ադրբեյջանի ու Թուրքիայի ղեկավարների ձեռքի խաղալիք հայ ղեկավարը կարող է այս գործիչներին պարտադրել խաղաղություն: 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը, ըստ էության, նույնպիսի խաղաղության պայմանագիր էր, սակայն Ադրբեյջանն ու Թուրքիան պահպանեցին դրա պայմանները: Ստանալով երազածից շատ

ավելին՝ Ադրբեջանն այնուհետ գործ մտցրեց Հայաստանի ինքնիշխան տարածք, հրահրեց ռազմական բախումներ, նորանոր պահանջներ առաջադրեց Հայաստանի իշխանությանը: Հիշենք, որ Ադրբեջանը նախկինում էլ բազմիցս խախտել է պայմանավորվածություններն ու պայմանագրերը (անգամ 1994 թ. զինադադարի պայմանագիրը խախտելով՝ երկու պատերազմ է սկսել), իսկ Թուրքիան աշխարհում հայտնի է որպես միջազգային պայմանագրերն ու պարտավորությունները խախտող բացառիկ երկիր: Այլապես ինչո՞ւ Հայաստանի ղեկավարի աթոռից կառչած անձը չկարողացավ հակառակորդին խաղաղություն պարտադրել 2020 թ. աշնանը: Ակնհայտ է, որ, նոր զիջումներ պարտադրելով և նոր առավելություններ ու բնագծեր ձեռք բերելով, թուրքական տանդեմը ձգտելու է նորանոր նվաճումների: Կարող է Հայաստանի վարչապետը հրապարակայնորեն հայտարարել, որ այս նոր պայմանագրի կնքումից հետո ինքը կկարողանա պաշտպանել Հայաստանի սահմաններն ու իրավունքները և խաղաղություն պարտադրել ագրեսիվ հարևաններին: Իհարկե, ծիծաղելի կլինի նման բան ակնկալելը, իսկ եթե, այնուամենայնիվ, վարչապետը նման խոստումներ տա, ինչ ուժի կամ գործոնների միջոցով պիտի կարողանա իրականացնել Հայաստանի ինքնիշխանության երաշխավորի իր պարտականությունը: Թուրքերի ու ադրբեջանցիների վախից պատերազմից հետո նա ոչ միայն չի այցելել Արցախ, այլև խզել է Հայաստանի տարբեր կառավարչական օղակների կապն ու գործակցությունը հայոց երկրորդ պետության հետ: Նա ոչ միայն չի համարձակվում վերակազմակերպել ու ուղքի հանել բանակը, այլև 2022 թ. վախճեցավ անգամ շնորհավորել պաշտպանության բանակի տոնը: Հայտնի է, որ որքան թույլ է ղեկավարությունը, այնքան մեծ է թշնամու գայթակղությունը՝ հրահրելու նոր պատերազմ, այնպես որ գործող իշխանության հետագա պաշտոնավարումը մեծացնում է նոր պատերազմների հավանականությունը: Պատահական չէ, որ Հայաստանում բարձրացած իշխանավորության լայնածավալ շարժումը կրում է ազգային-ազատագրական բնույթ: Ցավով պետք է արձանագրել, որ հայ ժողովուրդը թուրք-ադրբեջանական ագրեսիային դիմակայության սկիզբն ու նախապայմանը համարում է Հայաստանի օտարա-հպատակ իշխանությունների հեռացումը:

Խնդիրն առավել արդիական ու հրատապ է դառնում ներկայիս համաշխարհային իրողությունների պայմաններում, երբ նոր աշխարհակարգ է ձևավորվում, իսկ բազում կախումներ ունեցող Հայաստանի իշխանությունները ճակատագրական այս ճամփաբաժանին հարկադրված են ընտրություն կատարել՝ ելնելով ոչ թե Հայաստանի շահերից, այլ իրենց կրած արտաքին ազդեցությունների չափից:

Նկատենք, որ 1988 թ. սկսված արցախյան ազատագրական պայքարն ընդունելի չէր արտաքին որևէ ուժի համար, սակայն, փոխելով հաստատված

ստատուս քվոն, հայությունը բոլորին ստիպեց հաշվի նստել նոր կացության հետ: 2020 թ. խայտառակ պարտությունից հետո Հայաստանի իշխանությունների մեղքով տարածաշրջանում ձևավորվեց միանգամայն նոր կացություն, որից ելնելով էլ՝ թե՛ ուղղակիորեն ներգրավված և թե՛ արտաքին ուժերը թելադրում են համապատասխան լուծումներ: Այս պարտադրանքը բխում է երկու կարևոր հանգամանքից՝ Հայաստանի թուլական, ապագային իշխանությունների՝ զիջումների գնալու պատրաստականությունից և Անդրկովկասից Ռուսաստանին վերջնականապես դուրս մղելու, Թուրքիայի դեմքով տարածաշրջանում ռազմական գեր-իշխանություն հաստատելու ՆԱՏՕ-ի ցանկությունից:

Ազգային-ազատագրական նորօրյա շարժումը, դեռևս չհասնելով իր վերջնապատակին, արդեն իսկ փաստել է, որ հայ ժողովրդի համար անընդունելի է իշխանության պարտվողական քաղաքականությունը: Հասնելով հաղթանակի և երկրում հաստատվելով ազգային իշխանություններ՝ կստեղծվի նոր կացություն, և երկրի պետական համակարգի, բանակի, տնտեսության վերականգնմանը զուգահեռ առաջ կքաշվեն բանակցային նոր պայմաններ, կձևավորվեն նոր իրողություններ: Հայաստանում ազգային-ազատագրական շարժումը նախաձեռնվեց քաղաքական ուժերի կողմից, սակայն առաջադրած համազգային նշանակության պահանջների շնորհիվ այն դարձավ ժողովրդի շարժումը, որի անունից էլ հանդես են գալիս մտավորականները, արվեստագետները, հասարակայնության ներկայացուցիչներն ու քաղաքական ուժերը: Ի դեմս մայրաքաղաքի կենտրոնում տեղի ունեցող իրադարձությունների՝ ականատես ենք Հայաստանի իրական ժողովրդավարացմանը: Նոր շարժումը և դրա բնույթն ու նպատակները ցանկալի ապագայի հույսեր չէին ներշնչի, եթե հրապարակում չհավաքվեր և դանդաղորեն չգերակշռեր այսօրվա երիտասարդության՝ ազգային ու պահանջատիրական դիմագիծ ունեցող մեծամասնությունը: Փաստվել է, որ հայ ժողովուրդը պատրաստակամ է պայքարելու իր պետական շահերի համար, նա մերժում է պարտվողականության փիլիսոփայությունը, ըստ որի՝ մենք մեզ պաշտպանելու ունակ չենք և դատապարտված ենք զիջումների: Որն է այդ զիջումների վերջնական սահմանը՝ կարող են ասել մեզ այսօրվա ղեկավարն ու նրա քաղաքական հոգեհայրը: Նույն պարտվողական հոգեբանությունը կար նաև 1915 թ., իսկ թշնամին բավարարվեց, երբ հայ ժողովրդի ոչնչացմամբ յուրացրեց ամբողջ Արևմտահայաստանը:

Հայ ժողովուրդն իր դաժան ճակատագիրը կամովին չի ընտրել. այն պարտադրվել է տարածաշրջանը նվաճած բարբարոսների կողմից: Հայ ժողովուրդն իր գոյությունն հավերժացնելու այլ ելք չունի, բացի հզորանալուց ու խաղաղությունը պարտադրելուց: Հայոց մայրաքաղաքում, ներքին թշնամու դեմ դիմակայությամբ, այսօր կերտվում են վերածնվող Հայաստանի հիմքերը: Համազգային կամքով մեկ անգամ ևս մայիսը կարող է դառնալ մեր հաղթանակի ամիսը: ■

Մոսկվա, թե՛ Բրյուսել

Հրանտ Մելիք-Շահնազարյան

Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացը կարևոր հանգրվանի է մոտեցել, և կա իրական վտանգ, որ խնդիրը կարող է լուծվել ամբողջությամբ հոգուտ Ադրբեյջանի: Այս մասին է վկայում թեկուզ միայն այն փաստը, որ ՀՀ իշխանություններն անընդունելի ոչինչ չեն տեսնում Ադրբեյջանի առաջ քաշած հայտնի հինգ առաջարկներում, որոնք պետք է ընկած լինեն բանակցային գործընթացի հիմքում:

Ապրիլի 6-ին Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի և Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ: Եվրոպական կողմի նախաձեռնած եռակողմ այս հանդիպումը, ինչպես հայտնի է, տևել է ավելի քան 4.5 ժամ: Այդ ընթացքում հակամարտող կողմերի ներկայացուցիչները քննարկել են հարցերի լայն շրջանակ, ձեռք բերել մի շարք պայմանավորվածություններ: Հանդիպումից անմիջապես հետո Շառլ Միշելը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ թե՛ Փաշինյանը, թե՛ Ալիևը ցանկանում են արագ կնքել խաղաղության համաձայնագիր: Նա հայտարարել է, որ Ալիևն ու Փաշինյանը պայմանավորվել են մինչև ապրիլի վերջ ստեղծել սահմանային հանձնաժողով, որի մանդատի շրջանակում կլինի երկու հարց՝

1. սահմանագատել Հայաստանի և Ադրբեյջանի միջև սահմանը,

2. ապահովել անվտանգային կայուն իրադրություն սահմանագծի երկայնքով և մերձակայքում 4:

Շառլ Միշելը նաև հայտնել է, որ Հայաստանի ու Ադրբեյջանի ղեկավարները հանձնարարել են իրենց արտաքին գործերի նախարարներին աշխատել խաղաղության պայմանագրի նախապատրաստման ուղղությամբ: Եվրոպայի խորհրդի նախագահի հայտարարության մեջ հիշատակված էին նաև հումանիտար մի շարք հարցեր, տարածաշրջանային կոմունիկացիաների բացման հեռանկարները և այլն: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Շառլ Միշելը գրեթե հիացական տոնով էր խոսում Ալիևի և Փաշինյանի բրյուսելյան հանդիպման արդյունքների մասին, ինչը, եթե հաշվի առնենք Արցախում մինչ այդ ստեղծված իրավիճակն ու այդ պահին ծավալվող գործընթացները, բավական տարօրինակ էր:

Բրյուսելում Ալիևի հետ հանդիպումից անմիջապես հետո Նիկոլ Փաշինյանը ՀՀ կառավարության նիստում կրկին հայտարարել է, որ Ադրբեյջանի առաջարկներում հայկական կողմի համար անընդունելի ոչինչ չկա, «սակայն դրանք չեն ամբողջացնում խաղաղության օրակարգի հարցերը, և մեզ համար սկզբունքային նշանակություն ունեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխիքները, նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև



Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ճշգրտումը»⁵: ՀՀ ղեկավարը, սակայն, չի մանրամասնում, թե ինչ է հասկանում, օրինակ, «Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակ» ասելով: Նկատի ունի արդյոք, որ Արցախը պետք է անկախ լինի, թե՛ իր համար ընդունելի է նաև Արցախի որևէ կարգավիճակ Ադրբեյջանի կազմում: Նույնը վերաբերում է «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի» անվտանգության երաշխիքներին ու իրավունքներին: Ինչ նկատի ունի պաշտոնական Երևանն այդ դեպքում: Ցավոք, հստակ պատասխաններ չկան: Ավելի ճիշտ՝ այդ առնչությամբ Փաշինյանի ու նրա թիմակիցների մեկնաբանությունները լավատեսություն չեն ներշնչում:

Բոլոր այս գնահատականներում և ընդհանրապես ստեղծված իրավիճակում կարևորագույն հանգամանքն այն է, որ Հայաստանի ու Ադրբեյջանի իշխանությունները խաղաղության պայմանագիր կնքելու աշխատանք են սկսում, և դրա հիմքում, ըստ ամենայնի, Ալիևի վարչակազմի մշակված հինգ, այսպես կոչված, առաջարկներն են՝

- ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և միմյանց քաղաքական անկախության փոխադարձ ճանաչում,

- պետությունների՝ միմյանց նկատմամբ տարածքային պահանջներ չունենալու և ապագայում նման պահանջներ չներկայացնելու իրավական պարտավորության փոխադարձ հաստատում,

- զերծ մնալ միջպետական հարաբերություններում միմյանց քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության դեմ սպառնալիք և ուժ կիրառելուց, միմյանց անվտանգությանը սպառնացող, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին հակասող այլ գործողություններից,

- սահմանագատում և սահմանագծում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում,

- տրանսպորտի և այլ հաղորդակցությունների բացում, այլ հաղորդակցությունների հաստատում և համագործակցություն փոխադարձ հետաքրքրություն

ներկայացնող ոլորտներում:

Ուշադիր ընթերցողը, իհարկե, հեշտորեն կնկատի, որ ադրբեջանական կողմի ներկայացրած 5 առաջարկներն իրականում լուծում են Ադրբեջանի համար երկու կարևոր խնդիր՝ Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության (ներառյալ Արցախը) ճանաչումն ու ՀՀ ինքնիշխան տարածքներին անխոչընդոտ հասանելիությունը: Պարզ է, որ սրանք իրենց էությամբ ոչ թե Հայաստանին ուղղված առաջարկներ են, այլ պահանջներ, որոնք, եթե հաշվի առնենք նաև Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն Արցախում ու Սյունիքում, շատ նման են վերջնագրի:

Ադրբեջանի ու Հայաստանի իշխանությունների միջև սկսված այս նոր սիրախաղը, բնական է, չէր կարող անտարբեր թողնել հայ հանրությանը: Երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններն արդեն իսկ բավական էին, որ ընդդիմությունը գործընթացը կասեցնելուն ուղղված հանրային ճնշման գործողություններ նախապատրաստեր: Ապրիլի 5-ին՝ բյուրեղյան հանդիպման նախօրեին, Երևանում տեղի ունեցավ առաջին հանրահավաքը, որը լուրջ ազդակ փոխանցեց Նիկոլ Փաշինյանին, ինչպես նաև մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր հետապնդող կենտրոններին, որ Ադրբեջանի հետ հաշտության պայմանագիր կնքելու գործընթացն այնքան էլ հեշտ չի լինելու: Իսկ երբ ապրիլի 13-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում հայտարարեց, որ միջազգային հանրությունը հորդորում է «իջեցնել Արցախի կարգավիճակի նշանդոլը»³, հանրային դժգոհությունը միանգամայն այլ որակ ստացավ, և ժողովուրդը դուրս եկավ փողոց:

Ապրիլի 19-ին Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այցով մեկնեց Ռուսաստան⁴: Չնայած այն հանգամանքին, որ այցի ընթացքում երկու երկրների տարբեր գերատեսչությունների միջև ստորագրվել են համագործակցության մի շարք համաձայնագրեր, ինչպես նաև ՌԴ և ՀՀ ղեկավարների կողմից 30 կետից բաղկացած հայտարարություն է ընդունվել, Արցախի խնդրի վերաբերյալ որևէ լուրջ արձանագրում այդ այցի ընթացքում չի եղել: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը միայն նշել է, որ հարցի կարգավորման համար պետք է առաջնորդվել 2020 թ. նոյեմբերի 9-ին, 2021 թ. հունվարի 11-ին և 2021 թ. նոյեմբերի 26-ին Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից ընդունված երեք համատեղ հայտարարությունների դրույթներով⁵: Բյուրեղի թեման Ռուսաստանում շրջանցվեց: Փորձագիտական և լրատվական մակարդակներում միայն նշվել է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանագծման և սահմանազատման հանձնաժողովներ ստեղծելու մասին պայմանավորվածություն ձեռք է բերվել նաև նոյեմբերի 26-ի հիշատակված հանդիպման ընթացքում, և կողմերը պայմանավորվել են այդ հանձնաժողովը ստեղծել մինչև 2021 թ. ավարտը:

Սակայն դա տեղի չի ունեցել: Ի դեպ, այդ նույն հանձնաժողովը հայկական կողմը չստեղծեց նաև մինչև 2022 թ. ապրիլի ավարտը, ինչը նախատեսված էր արդեն բյուրեղյան պայմանավորվածությամբ: Եվ դրա պատճառը, ամենայն հավանականությամբ, Երևանում ու մարզերում սկիզբ առած բողոքի ակցիաներն են, որոնք լուրջ անհանգստություն են առաջացրել Փաշինյանի կառավարությունում:

Մոսկվա, թե՛ Բյուրեղ: Ո՞վ կլինի հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ու Արցախի խնդրի լուծման գլխավոր հովանավորը: Ահա այս հարցն է ներկայումս ամենաշատը քննարկվում քաղաքական և փորձագիտական շրջանակներում: Ընդ որում, կարևոր է նաև այն հանգամանքը, որ միջազգային քաղաքական ընկալումներում արցախյան խնդիրը փոխկապակցվել է Ուկրաինայում ընթացող զարգացումների հետ: Այս փաստը զգալիորեն նվազեցնում է հայկական կողմի հնարավորությունները՝ ազդելու մեզ համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդրի կարգավորման գործընթացի վրա: Պատճառը պարզ է. Հայաստանը տարածաշրջանային քաղաքականության սուբյեկտից վերածվել է միջազգային առևտրի մանրադրամի:

Այս ամենի հետ պետք է նշել կարևոր ևս մեկ հանգամանք. այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Ուկրաինայում Ռուսաստանի ռազմական հատուկ գործողությունն արագ ավարտ չի ունենա, Արցախում իրավիճակ փոխվեց: Ալիևի վարչակազմն օգտվեց հարմար առիթից և, մինչ Մոսկվայի ուշադրությունն ամբողջությամբ կենտրոնացած էր Ուկրաինայի վրա, նախաձեռնեց մարտի 24-ի հայտնի հարձակումը ԼՂՀ Ասկերանի շրջանի ուղղությամբ:

Դրան հաջորդած զարգացումներն ամբողջությամբ բացահայտեցին երկու կարևոր իրողություն. նախ՝ թուրք-ադրբեջանական դաշինքը տիպիկ անակնկալներ է պատրաստել Ռուսաստանի համար մեր տարածաշրջանում, և երկրորդ՝ Ռուսաստանը, պայմանավորված մեկ այլ տարածաշրջանում առկա լրջագույն խնդիրներով, չի կարող առաջնորդվել իր կամքը պարտադրելու քաղաքականությամբ:



և փորձում է դրա փոխարեն որոշ հարցերի շուրջ պայմանավորվածություններ ձեռք բերել հակառակորդի հետ: Ռուսական քաղաքական և փորձագիտական շրջանակները հասկանում են, որ վերջին շաբաթներին Ադրբեջանի գործողություններն Արցախում ուղղված են մի կողմից հայկական պետությունների, իսկ մյուս կողմից էլ՝ հենց Ռուսաստանի դեմ: Նրանք նույնիսկ բարձրաձայնում են այդ մասին, սակայն բոլոր գնահատականներում նաև նշում, որ այս պահին Մոսկվայի հիմնական խնդիրը Ուկրաինայում ընթացող ռազմական գործողություններն են: Ակնարկվում է այն մասին, որ Ռուսաստանի համար այս փուլում կարևոր է Թուրքիայի չեզոքությունն Ուկրաինայում:

Թուրքիայի հետ լեզու գտնելու Ռուսաստանի փորձերը, իհարկե, արդյունավետ չեն: Մինչ այս պահը Մոսկվային հաջողվել է միայն մասամբ զսպել Էրդողանի ախորժակը: Դա փոքր զիջումների միջոցով ժամանակ շահելու մարտավարություն է: Իսկ այդ ժամանակը Ռուսաստանին անհրաժեշտ է բացառապես մեկ բանի համար, որպեսզի լուծի Ուկրաինայում առաջացած խնդիրները: Անկարայում էլ են լավ հասկանում, որ ուկրաինական ճգնաժամի հանգուցալուծումից հետո Ռուսաստանի զիջողականության աստիճանն ու զիջումներ անելու պատրաստականությունը զգալիորեն կնվազեն: Հետևաբար Անկարայում որոշել են, որ հիմա է հարմար պահը, և փորձում են առավելագույնս օգտվել դրա ընձեռած հնարավորություններից: Մեր տարածաշրջանում, օրինակ, դա Արցախի ու Ադրբեջանի հետ անխափան և մեկ այլ տերության կողմից չվերահսկվող ցամաքային կապ ստեղծելու խնդիրն է: Եվ այն պահին, երբ Թուրքիան հասկացավ, որ Ուկրաինայում Ռուսաստանի ծրագրերը շեղվել են նախապես պլանավորված ընթացքից, Արցախի ուղղությամբ ակտիվացրեց ադրբեջանական գործոնը:

Որբերգությունն այն է, որ Հայաստանը, որը մեր տարածաշրջանում թուրք-ադրբեջանական ագրեսիվությունը զսպելու պատմական, քաղաքական և նույնիսկ քաղաքակրթական առաքելություն է մշտապես ունեցել, աշխարհաքաղաքական դրության վերափոխման այս փուլում, փաստորեն, հրաժարվել է իր կարևորագույն գործառնությունից և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր ստորագրելու բանակցություններ սկսել: Ընդ որում, պաշտոնական Երևանը դա անում է ոչ միայն ի վնաս նույն Ռուսաստանի, Իրանի կամ թեկուզ եվրոպական որոշ երկրների, հատկապես Ֆրանսիայի ու Գերմանիայի տարածաշրջանային շահերի, այլև ի հաշիվ մեր ժողովրդի կենսական ներուժի:

Եվ իսկապես, այն պահին, երբ հայկական երկու պետությունները «ատամները սեղմած» պետք է սպասեին Ուկրաինայում Ռուսաստանի հատուկ ռազմական գործողության ավարտին, հնարավոր և անհնար բոլոր միջոցներով խոչընդոտելին Արցախի վերաբերյալ թուրք-ադրբեջանական դաշինքի

բոլոր ծրագրերը, Հայաստանի իշխանությունները հայտարարում են, որ Արցախը կարող է մնալ Ադրբեջանի կազմում, որտեղ արցախահայությունը իբր թե լավ հեռանկարներ ունի: Համաձայնե՞ր՝ ավելի մեծ նվեր Հայաստանի իշխանությունները երբեք չէին կարող մատուցել թուրք-ադրբեջանական դաշինքին: Միանշանակ է նաև, որ այս կեցվածքով պաշտոնական Երևանը խնդիրներ է ստեղծում նաև իր բնական դաշնակիցների՝ Ռուսաստանի, Իրանի, ինչպես նաև Չինաստանի համար:

Թե ինչու է ՀՀ փաստացի ղեկավարը երկրի համար օրհասական այս կարևոր պահին սպասարկում թուրք-ադրբեջանական օրակարգը, հուսով ենք՝ հետաքննությունը հետագայում կպարզի: Հիմա կարող ենք միայն արձանագրել, որ թե՛ Էրդողանը, թե՛ Ալիևը մեծ տեմպ էին հաղորդել Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու գործընթացին, և Նիկոլ Փաշինյանը ոչ մի վայրկյան ետ չէր մնում թշնամու այդ տեմպից, ավելին՝ ինքն էլ իր հերթին արագացնում էր բոլոր այդ գործընթացները, համեմայնդեպս մինչ այն պահը, երբ ժողովուրդը Հայաստանում փողոց դուրս եկավ:

Հիմա, երբ ես գրում եմ այս տողերը, Հայաստանի քաղաքներում ու գյուղերում շարունակվում է Արցախի ապագայի համար մղվող պայքարը: Իհարկե, այդ պայքարում բազում կողմեր կան՝ հայկական ընդդիմությունը, Փաշինյանի կառավարությունը, բոլոր այս գործընթացների վրա ձեռքեր տաքացնող աշխարհաքաղաքական կենտրոնները և այլն: Բայց մի չափազանց կարևոր խնդիր հանրահավաքների ու բողոքի ցույցերի դուրս եկած մեր ժողովուրդն արդեն լուծել է. ինքն է դարձել Հայաստանի ու Արցախի համար մղվող պայքարի ամենակարևոր կողմը: Ժողովուրդը վերագտել է իր սուրբյեկտայնությունը, և այդ փաստի հետ բոլորը հիմա պարտավոր են հաշվի նստել: Այս կարևոր իրողությունը նաև հույս է ներշնչում, որ անկախ նրանից, թե ով կլինի արցախյան հիմնախնդրի կարգավորման հիմնական հովանավորը՝ Մոսկվան, թե՛ Բրյուսելը, հայ ժողովրդի շահն այլևս չի անտեսվի: ■

Ֆոտոմներ

1. Տես Շառլ Միշել. Փաշինյանն ու Ալիևը ցանկանում են արագ խաղաղ համաձայնագիր կնքել, 07.04.2022, <https://mediamax.am/am/news/foreignpolicy/47035> (մուտք՝ 10.2022):
2. Վարչապետն ամփոփել է ապրիլի 6-ին Բրյուսելում կայացած եռակողմ հանդիպման արդյունքները, 07.04.2022, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/04/07/Cabinet-meeting-Speech/> (մուտք՝ 10.2022):
3. Հորդորում են իջեցնել Արցախի կարգավիճակի նշանը. Փաշինյան, 13.04.2022, <https://www.youtube.com/watch?v=IbKBhhj61MA> (մուտք՝ 10.2022):
4. Տես Վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Ռուսաստանի Դաշնություն, 19.04.2022, <https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2022/04/19/Nikol-Pashinyan-visit-to-Russia/> (մուտք՝ 10.2022):
5. Տես 19 апреля состоятся переговоры Владимира Путина с Премьер-министром Армении Николом Пашиняном, 19.04.2022, <http://krem-lin.ru/catalog/countries/AM/events/68229> (մուտք՝ 10.2022):

Մի՛ շեղե՛ք սլաքները

Գեորգ Յակոբճեան

Միջազգային իրաւունքի մասնագետ, Ավստրիոյ Հայ դատի յանձնախումբի ներկայացուցիչ

Հայոց ցեղասպանութեան 107-րդ տարեկիցի ոգեկոչման պաշտօնական յայտարարութիւններուն և ընկերային ցանցերուն վրայ ընթացող քննարկումներուն մէջ անուղղակի, բայց շատ վտանգաւոր շեշտադրումներ կային, որոնք գիտակցաբար և ենթագիտակցաբար հանրութիւնը կը շեղեն ոգեկոչման հիմնական նպատակէն ու խորհուրդէն՝ արդարութեան վերականգնումի պահանջատիրութենէն: Այս շեշտադրումներուն միտք բանին այն է, թէ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու լաւագոյն միջոցը հզօր ու ժողովրդավար պետութիւն կառուցելն է:

Օրինակ՝ ՀՀ նախագահը իր ուղերձին մէջ կ'ըսէ. «Մենք գիտակցում ենք, որ մեր նահատակված հայրենակիցների հիշատակին հարգանքի տուրք մատուցելու լավագոյն ձևը հզօր և ժողովրդավար Հայաստանի կայացումն է, մեր ժողովուրդի բարօր կյանքի, մեր երկրի սահմանների ամրության ու անվտանգության ապահովումն է, Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդումն է»¹: ՀՀ վարչապետի պաշտօնը զբաղեցնողը իր ուղերձին մէջ ոչ միայն կը ձախողի արդարացնել այս օրերուն ընթացող հայ-թուրքական յարաբերութիւններուն հիմնական մղիչ ուժն ու տրամաբանութիւնը, այլև իր խօսքի վերջաւորութեան հետևեալը կ'ըսէ. «Հայոց պետականությունը Մեծ Եղեռնի զոհերի, մեր բոլոր նահատակների հիշատակը հարգելու ամենատպալուրիչ միջոցն է և պիտի դառնա հայ ժողովրդի ապրելու անկոտրում կամքի խորհրդանիշ և երաշխավոր: Հենց մեր այս կամքն է խորհրդանշում ապրիլքսանչորսյան ժողովրդական երթը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որը Ազատ, Հզօր, Երջանիկ Հայաստանի խոստում է մեր նախնիներին և մեր սերունդներին: Այդ խոստումը պիտի կատարվի, այդ ուխտը պիտի ի կատար ածվի: Սրանում է Ապրիլի 24-ի ամենամեծ խորհուրդը»²: Աւելին՝ այս օրերուն իշխանութիւններուն արբանեակը (ուրիշ բառ չօգտագործելու համար) դարձած «քլասիք» քաղաքական գործիչ Էտնոն Մարութեանի համոզմամբ՝ Ապրիլի 24-ի խորհուրդը «ուժեղ պետության կառուցումն է»³:

Ոչ ոք կրնայ առարկել վերոնշեալներուն իրաւացիութիւնն ու վաւերականութիւնը: Իսկամիտ ու ազգասէր որ հայը չուզէր, որ հզօր, ինքնիշխան ու ժողովրդավար պետութիւն մը կառուցուի: Ո՛վ չի հաւատար, որ հզօր պետութիւնը շատ ատելի ազդու ձևով կրնայ պահանջել և պաշտպանել իր իրաւունքները: Վստահաբար, ինքնիշխան, ազատ ու բարեկեցիկ Հայաստանը կրնայ շատ ատելի լաւ յարգել յիշատակը իր զոհերուն: Այս ամէնը անկասկած ճիշդ են:

Շան գլուխը ուրիշ տեղ է թաղուած, բայց... Երկու բարձրաստիճան ղեկավարներուն խօսքերուն մէջ գործածուած «լաւագոյն ձև»-ը և «ամենատպալուրիչ միջոց»-ը լուրջ վտանգներ կը պարունակեն, ազգային ռազմավարութեան տեսակէտէ ահաւոր կործանարար են և պահանջատիրութեան սլաքները բոլորովին այլ տեղ կ'ուղղեն: Անոնց խօսքերուն մէջ ակնարկ չկայ Հայոց ցեղասպանութեան հետևանքներու վերացման անհրաժեշտութեան և անխուսափելիութեան մասին:

Ո՛չ, նախագահն ու վարչապետը չարաչար կը սխալին իրենց «լաւագոյն ձև»ի և «ամենատպալուրիչ միջոց»ի դեղատոմսին մէջ ու դիտաւորեալ հանրութիւնը կը շեղեն պայքարելու և պահանջատիրութեան բնածին ու արդար տրամադրութենէն: Այսպէս՝ «մեր նահատակուած հայրենակիցների յիշատակին յարգանքի տուրք մատուցելու լաւագոյն ձևը» ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ է, աննահանջ պայքարն է՝ խլուած իրաւունքներուն վերատիրանալու, համապատասխան հատուցման արժանանալը, նոր ցեղասպանութիւններ կանխարգիլելը: Աւելին՝ «մեր բոլոր նահատակների յիշատակը յարգելու ամենատպալուրիչ միջոցը» Թուրքիան իր անցեալի ու ներկայի պետական յանցագործութիւններուն համար պատասխանատուութեան ենթարկելն ու միջազգային օրէնքի համաձայն հատուցումներու և անցումային արդարութեան ձեռնարկելն է: Միայն արդարութեան վերականգնումով մենք իսկապէս կը յարգենք բազմահազար նահատակներուն և ցեղասպանութենէն վերապրած սերունդներուն յիշատակը:

Մի շեղե՛ք հայոց պահանջատիրութեան սլաքները: Ոճրագործը ձգած, ընդհակառակը՝ մինչ օրս քեզ ոչնչացնել ուզող ոճրագործին հետ սիրաբանութեան ելած ու յանկարծ ի սկզբանէ ձախողութեան դատապարտուած բանակցութիւնները չվտանգելու սիրոյն հանրութեան ուշադրութիւնը մի՛ շեղե՛ք և ձեր նետերը հայ հանրութեան վրայ մի՛ արձակե՛ք: Քիչ մնաց՝ ձեր ելոյթներուն մէջ հայութիւնը մեղադրե՛ք, որ ցեղասպանութեան լեղին խմեց... Ի՜նչ, եթէ ցեղասպանութիւն պատահած չլլար, հզօր ու ժողովրդավար պետութիւն կառուցելը առաջնային նպատակ պիտի չլլար: Ձեր ազգադաւ ու ստրկամիտ տրամադրութիւններն ու նպատակները կեանքի կոչելու համար հանրութիւնը մի՛ շեղե՛ք իր իրագործելիք հիմնական նպատակէն՝ արդարութեան վերականգնումի պայքարէն: Յեղասպանութեան ոգեկոչումը ներքին սպառումի համար չէ, այլ ուխտի ու պահանջատիրութեան վերանորոգման օր:

Ինչպէս կ'ըսէ Պերճ Զէյթունցեան, «Եթէ այս (բարեկեցիկ երկիր կառուցելու) գիտակցութիւնը գերիշխի մեզանում, դառնայ միասնական կամք, մենք մեր վրէժը լուծած կլինենք գոնէ մասամբ...»⁴: Այո, հզօր ու բարեկեցիկ պետութիւն կառուցելը «գոնէ մասամբ» կը մեղմացնէ հանրութեան հաւաքական ցան ու տագնապը, բայց այդ հաւաքական ցար ամբողջութեամբ կը բուժուի, տագնապը կը վերանայ, և բոլոր նահատակներուն ու վերապրողներուն յիշատակը արժանիօրէն կը յարգուի միայն ու միայն ցեղասպանութեան հետևանքներու վերացումով և արդարութեան վերականգնումով: ■

Ֆոտոմներ


1. Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի ուղերձը Հայոց ցեղասպանության տարեկիցի առթիվ, 24 ապրիլի 2022, <https://bit.ly/3kOdQW0> (մուտք՝ 30 ապրիլ 2022):
2. Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 107-րդ տարեկիցի կապակցությամբ, 24 ապրիլի 2022, <https://bit.ly/3Fonloo> (մուտք՝ 30 ապրիլ 2022):
3. Ուժեղ պետության կառուցում. ահա օրվա խորհուրդը, Էտնոն Մարութեանի հարցազրույցը, 24 ապրիլի 2022, <https://bit.ly/3kSDg5> (մուտք՝ 30 ապրիլ 2022):
4. <https://www.facebook.com/PerchZeytuntsyan> (մուտք՝ 30 ապրիլ 2022):

Կոլաբորացիոնիզմը և դրա հետևանքները հայ իրականության մեջ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Մայիսը ավանդաբար համարվում էր հայության հաղթանակների՝ կորացած մեջքը շտկելու, ոտնահարված արժանապատվությունը վերականգնելու ամիս, սակայն արդեն երկրորդ տարին է, ինչ մայիսյան եռատոնը վերածվել է խլված հաղթանակները մի օր վերականգնելու երազանքի: Իսկ ինչը մայիսյան եռատոնը վերածեց «խլված հաղթանակների մայիսի»՝ սովորական դավաճանությունը, թե՛ դավաճանության մեկ այլ՝ ավելի եղելի տեսակ կոլաբորացիոնիզմը կամ ավելի ճիշտ՝ հայ հասարակության մեջ տասնամյակներ շարունակ բույն դրած ու աննկատ տարածված կոլաբորացիոնիստները:

Իսկ ովքեր են կոլաբորացիոնիստները: Կոլաբորացիոնիստ համարում են այն մարդուն, որը, թշնամուն միացած, պատերազմում է այն երկրի դեմ, որի քաղաքացին կամ բնակիչն է: Վերջին շրջանում հայաստանյան իրականության մեջ հստակ նպատակներով ուղղորդվող որոշ շրջանակներ փորձում են Գարեգին Նժդեհին ներկայացնել որպես կոլաբորացիոնիստի, որը պատերազմել կամ գործել է սեփական պետության դեմ: Իրականությունն այն է, սակայն, որ Գարեգին Նժդեհը երբևէ իր պետության դեմ պատերազմ չի մղել: Զանգեզուրի ինքնապաշտպանության օրերին Գարեգին Նժդեհը Զանգեզուրում կռվում էր խորհրդա-ադրբեջանական զավթիչների և հայ կոլաբորացիոնիստների (բոլշևիկների) դեմ՝ Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի կազմում պահելու նպատակով: Ինչ վերաբերում է Երկրորդ աշխարհամարտին, ապա այդ ժամանակ Նժդեհը որոշ չափով համագործակցել է նացիստական ղեկավար շրջանակների հետ՝ չեզոքացնելու համար ադրբեջանցի մուսաֆաթականների և վրաց մենշևիկների հակահայ քարոզչությունը, ինչպես և օգնելու համար հայ ռազմագերիներին: Հատկանշական է, որ նույն Նժդեհը 44 թվականին, այլ հայ գործիչների պես, չփախավ Բուդապեշտից, այլ մնաց և հանձնվեց այս երկիր մտած խորհրդային զորքերին, իսկ պատերազմից հետո նամակներ էր գրում Ստալինին՝ առաջարկելով իր ծառայությունը Ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմի դեպքում: Ակնհայտ է, որ նա այս բոլորը չէր անի եթե ծանր հանցանքներ գործած լինեք խորհրդային միության դեմ: Ի վերջո Նժդեհը ԽՍՀՄ քաղաքացի չէր և չէր բնակվում ԽՍՀՄ տարածքում, հետևաբար նրան կոլաբորացիոնիզմի մեջ մեղադրելը անհիմն է, մինչդեռ հայ բոլշևիկների գործողություններն ամբողջովին տեղավորվում են կոլաբորացիոնիզմի տրամաբանության մեջ: Բայց մինչև հայ բոլշևիկների կոլաբորացիոնիստական



գործունեությանն անդրադառնալը փոքր-ինչ խոսենք այն մասին, թե ինչ դրսևորումներ է ունեցել կոլաբորացիոնիզմը հայ իրականության մեջ և ինչ հետևանքներ է ունեցել:

Հայոց պատմության մեջ դավաճաններ քիչ չեն եղել, բայց այդ դավաճաններից շատ քչերն են մեր պատմության մեջ մնացել որպես կոլաբորացիոնիստներ: Այդ քչերից մեկն է Մերուծան Արծրունին (շատերը կարող են չհամաձայնել, վիճել և կասկածի տակ առնել նույնիսկ պատմահայր Խորենացու հաղորդած տեղեկությունների անաչառությունը, բայց և այնպես, մենք կառաջնորդվենք ձեռքի տակ եղած փաստերով): Մերուծան Արծրունին ոչ միայն համագործակցում էր թշնամու հետ, այլև, ըստ պատմահայր Խորենացու, Ձիրավի ճակատամարտում, պարսկական զորքին միացած, պատերազմում էր Հայաստանի դեմ: Խորենացու վկայությամբ՝ «Արշակի մահից հետո Շապուհը մեծ զորք գումարեց Մեհրուծանի ձեռքի տակ և ուղարկեց Հայաստան... Նրան խոստացավ տալ Հայոց թագավորությունը, եթե միայն նախարարներին հնազանդության բերե և մեր աշխարհը դարձնե մագդեգական կրոնին...»¹:

Շապուհի կարգադրությամբ պարսկական զորքի հետ գործող Մերուծան Արծրունու քայլերը Հայաստանում հանգեցրել էին երկրի քաղաքական ինքնիշխանության կորստին և ռազմական, տնտեսական ու քաղաքական ծանր կացության մեջ դրել երկիրը: Պետության ինքնիշխանությունը վերականգնելու, հրո ճարակ դարձած երկիրը վերակառուցելու և ոտքի հանելու համար երիտասարդ արքա Պապ Արշակունին հսկայական ջանքեր ու ռեսուրսներ պետք է ներդնեք... Մինչ այդ, թեև թագաժառանգ Պապը կարողացավ Մերուծանին վճռել երկրից ու հաստատվել գահին, այնուամենայնիվ, Մերուծանը չդադարեցրեց իր կոլաբորացիոնիստական գործունեությունը: Պատմահայր Խորենացու վկայությամբ՝

«Մեհրութանը Խորասանի երկրում Շապուհին իմաց տվեց, թե ինչպիսի մեծ օգնություն ցույց տվեց Թեոդորը Պապին. ուստի Շապուհից հրաման է տրվում, որ Պարսից բոլոր զորքը Մեհրութանի հետ Հայաստան գնա պատերազմի: Պատերազմը խմբվեց Ձիրավ կոչվող դաշտում...»²: Ու թեև պատերազմում հայ-հռոմեական միացյալ զորքը հաղթանակ տարավ, և Մեհրութանն էլ պատժվեց (սպանվեց) սպարապետ (թագադիր ասպետ) Սմբատ Բագրատունու ձեռքով, այնուամենայնիվ, Հայաստանը Արշակունիների թագավորության հետագա շրջանում այլևս չկարողացավ լիարժեքորեն վերականգնել իր ինքնիշխանությունը, իսկ 387 թ. բաժանվեց Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, 428 թ. էլ վերջնականապես կորցրեց ինքնիշխանությունը, որն ավելի քան 400 տարի անց պետք է վերականգնեին Բագրատունիները:

Հայոց պատմությանը հայտնի կոլաբորացիոնիստներից է Գագիկ Արծրունին, որը Վասպուրականի իշխանն էր: Նրա ու Սյունյաց Սմբատ իշխանի միջև վեճ էր ծագել Նախնական քաղաքի պատկանելության շուրջ: Վեճը լուծելու խնդրանքով իշխանները դիմեցին հայոց արքա Սմբատ Ա Բագրատունուն, որը վեճը լուծեց հօգուտ Սյունյաց իշխանի: Սա Գագիկ Արծրունուն մղեց նախ դավաճանության, ապա՝ կոլաբորացիոնիզմի: Այդ շրջանում Հայաստանն ասպատակում էր արաբ ամիրա Յուսուֆը: Սմբատ Ա արքայից «վիրավորանքի» համար վրեժ լուծելու նպատակով Գագիկ Արծրունին, «Շատ նվերներ, ընծաներ ու պարգևներ պատրաստելով, շարժվում գնում է Պարսկաստան, Յուսուֆ ոստիկանի մոտ: Եվ նրան մատուցելով իր խորհրդավոր ընծաները՝ նա իր անիրավ ամբաստանության խոսքն էր բարձրաձայն զորացնում արքայի մասին: Իսկ նա (Յուսուֆը – Ա. Մ.) սիրով ընդունում է նրան, տալիս է արքունական թագ, պատիվ ու պարգևներ»³: Գագիկին հռչակելով հայոց թագավոր՝ Յուսուֆ ամիրան նրան մղում է պատերազմի Հայաստանի դեմ. «Նա զորքը տալիս է Գագիկ թագավորի ու նրա մյուս նախարարների ձեռքը ու այդ դավաճաններին նենգորեն ուղարկում է նրա (Սմբատ Ա-ի – Ա. Մ.) վրա»⁴, ինչի հետևանքով Հայաստանը ներքաշվում է երկարատև ու ծանր պատերազմի մեջ: 914 թ. Սմբատ Ա արքան զոհվում է, իսկ արաբական լծից այդքան դժվարությամբ ազատագրված երկիրը դարձյալ հայտնվում է արաբական լծի տակ. «Հագարի ծանրատաղտուկ լուծը թեքվում ու կուտակվում էր մեզ վրա...»⁵: Թշնամուն միացած Գագիկ Արծրունու կոլաբորացիոնիստական գործունեությունը հանգեցրեց նրան, որ փաստացի անկախությունը կորցրած, պատակտված ու թուլացած Հայաստանում թագաժառանգ Աշոտ Բ Երկաթից գերմարդկային ջանքեր և ութ տարվա հերոսական պայքար պահանջվեցին իրեն հավատարիմ փոքրաթիվ ուժերով երկիրը կրկին ազատագրելու, արաբական զորքերից մաքրելու, քաղաքական անկախությունը վերականգնելու, խոռվարար նախարարներին



Կոլաբորացիոնիստներ

զսպելու և խաղաղություն հաստատելու համար:

Երիտասարդ, եռանդուն ու անկոտրում կամքի տեր արքան, փոխանակ խաղաղության պայմաններում երկիրը շենացնելու, ստիպված եղավ պայքարել կոլաբորացիոնիզմի աղետալի հետևանքների դեմ...

Հայոց պատմության մեջ, սակայն, առավել ողբերգական էին կոլաբորացիոնիստ հայ բոլշևիկների գործողությունները: Վեց հարյուր տարվա չգոյությունից հետո, երբ հայկական պետականության մասին միայն մարդոլ հուշեր էին մնացել, Հայաստանն ու հայ ժողովուրդն էլ կարծես մեկընդմիջտ լքում էին պատմության թատերաբեմը, Արամի, Դրոյի, Սիլիկյանի ու նրանց գործակից փոքրաթիվ նվիրյալների վերերկրային ջանքերի ու Մայիսյան հերոսամարտերում կռած անհավանական թվացող հաղթանակների շնորհիվ 1918 թ. մայիսի 28-ին երկար սպասված, բայց և անսպասելի հրաշքի պես Հայաստանի մի փոքրիկ եզերքում ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը՝ ավելի քան վեցդարյա ընդմիջումից հետո հայոց առաջին պետականությունը:

Ենց այդ մայիսի 28-ից սկսած, դարեր շարունակ «ընդ հուր և ընդ սուր անցնելով, Հայաստանը կոչվեց անկախ կյանքի»⁶: Անկախ Հայաստանը հայության վեցդարյա երազանքն էր, չնայած որ «...արցունքի ու տառապանքի ծովից ծնվեց Հայաստանի անկախությունը: Ոմանք չէին հավատում նրան. անկախություն ու հանրապետություն բառերը դնում էին չակերտի մեջ...»⁷: Բայց և այնպես, երկար սպասված ազգային պետականությունը պետք է որ համընդհանուր սիրո և հոգածության առարկա լիներ, համենայնդեպս այդպես էր թվում: Սակայն

հայ բոլշևիկները (կամ ավելի ճիշտ՝ բոլշևիկ հայերը) հենց սկզբից թշնամաբար էին տրամադրված Հայաստանի Հանրապետության նկատմամբ և 1920 թ. ապրիլի 28-ին՝ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, երբ իրենց համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին, խորհրդա-քեմալական ուժերի հետ համագործակցելով, պատերազմի մեջ մտան սեփական պետության՝ Հայաստանի Հանրապետության դեմ: Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև թշնամանք սերմանելու նպատակով հայ բոլշևիկները դիմեցին ամենաստոր միջոցների՝ ընդհուպ մինչև ակնհայտ կեղծիքի՝ բողոքելով Ռուսաստան ու Բաքու, որ «գնդակահարվել է ընկեր Միկոյանը», մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է Սիմոն Վրացյանը, «Միկոյանը Հայաստանի երես անգամ չէր տեսած»⁸: Հայ բոլշևիկների նման պահվածքի պատճառով էր, որ Հայաստանի Հանրապետության ու Խորհրդային Ռուսաստանի միջև սկսված բանակցությունները ձախողվեցին: Հայ բոլշևիկներն ավելի հեռուն գնացին՝ սովորական դավաճանից սահուն անցում կատարելով կոլաբորացիոնիստ դավաճանի, և 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմում ոչ միայն Թուրքիայի կողմը բռնեցին, այլև ամեն ինչ արեցին Հայաստանի պարտությունը գլուխ բերելու համար: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն Բաքվի «Կոմունիստ» թերթի հոկտեմբերի 8-ի համարում Խորհրդային Ադրբեջանին կոչ էր անում միասին պայքարելու Հայաստանում իշխող «սպիտակ տեռորի» դեմ:

Թուրք-հայկական պատերազմի ժամանակ «կամավոր» Կարսի ճակատ մեկնած բոլշևիկների ձեռքով Կարսի հանձնումը իրենց համար բարեհաջող կերպով գլուխ բերելուց հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը փաստացի օղակված էր թշնամու կողմից և անելանելի վիճակում էր հայտնվել, սեփական պետությանը թիկունքից ևս մեկ դաշույնի հարված հասցնելուն պատրաստվող հայ բոլշևիկները, կոլաբորացիոնիստ Սարգիս Կասյանի գլխավորությամբ, 1920 թ. նոյեմբերի 22-ին Բաքվում ստեղծեցին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, որը մեկ շաբաթ անց Իջևանի կողմից մտավ Հայաստան՝ այն հռչակելով խորհրդային: Հայ բոլշևիկների կոլաբորացիոնիստական գործողությունները հանգեցրին Հայաստանի անկախության կորստին, և 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվեց, որից հետո էլ, սակայն, Կասյան-Աթաբեկյան-Ավիս կոլաբորացիոնիստ եռյակը չհանգստացավ: Հունվարի 10-ին Դերյոնի Մոսկվա արտաքսելուց հետո, երբ այլևս խոչընդոտ չկար, իսկական տեռոր սկսվեց Հայաստանի բնակչության նկատմամբ, ինչը հանգեցրեց նրան, որ փետրվարին համաժողովրդական ապստամբություն բռնկվեց բոլշևիկյան իշխանության դեմ, և փետրվարի 18-ին կարճ ժամանակով Հայաստանն ազատագրվեց բոլշևիկյան լծից: 1921 թ. ապրիլի 2-ին, սակայն,

հավատարիմ իրենց կոլաբորացիոնիստական էությանը, օտար զորքերի՝ խորհրդային Կարմիր բանակի օգնությամբ հայ բոլշևիկները Հայաստանում նորից գրավեցին իշխանությունը: Իր քաղաքական անկախությունից զրկված Հայաստանը բզկտվեց քեմալա-բոլշևիկյան ուժերի կողմից: Իր կամքն արտահայտելու, իր շահերը պաշտպանելու, իր քաղաքական դիրքորոշումը բարձրաձայնելու իրավունքից զրկված Հայաստանը կորցրեց իր փաստացի տարածքների մեծ մասը՝ Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Ջավախքը, Նախիջևանը, Արցախը և այլն, իսկ Ջանգեզուրն արդեն խորհրդայնացած Հայաստանի կազմում մնաց Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ: Արդեն խորհրդայնացած Հայաստանը, փաստորեն, իր փաստացի 70.000 քառ. կմ տարածքից կորցրեց ավելի քան 40.000 քառ. կմ-ը՝ կծկվելով ընդամենը 29.800 քառ. կմ փոքրիկ տարածքի վրա:

Այսպիսով, ինչպես բազմիցս նշել ենք, «Հայկական պետությունը վերացնելու, Հայաստանի տարածքները նվաճելու իր ձգտումներում ... Թուրքիան մենակ չէր, նրա հետ էր ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանը, այլև հայ բոլշևիկը, որն այնքան էր օտարացել իր ազգից ու թշնամանքով լցվել հարազատ պետության նկատմամբ, որ առանց վարանելու զոհաբերեց իր ազգի ու պետության շահերը՝ հանուն ինչ-որ անիրական «համաշխարհային հեղափոխության», և այլևս կասկած չկա, որ նրանք Հայաստանը զոհաբերում էին գիտակցաբար...»⁹:

Ջարմանքով կարդալով ու ցավով խոսելով հայ բոլշևիկների կոլաբորացիոնիստական գործունեության մասին՝ միաժամանակ դժվար էր պատկերացնել, որ 21-րդ դարում մոտ երեք տասնամյակ անկախ ապրած Հայաստանում ինքներս ականատես կլինենք կոլաբորացիոնիզմի, մի երևույթի, որը սկսվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին, երբ Հայաստանում իշխողները, թուրք-ադրբեջանական տանդեմին միացած, պատերազմ մղեցին (և դեռ մղում են) Հայաստանի պետականության դեմ՝ հայ բոլշևիկների օրինակով ամեն կերպ ձգտելով Հայաստանի պարտությանը, և շարունակվում է մինչ օրս: Այն, ինչ տեղի էր ունենում Հայաստանում 2018 թ. զարնանից մինչև 2020 թ. սեպտեմբերի 26-ը՝ արցախյան հաղթանակի արժեզրկում, պատերազմում հաղթած հերոսների վարկաբեկում կամ զինված ուժերից հեռացում, բանակի կազմալուծում և հայ զինվորի կերպարի աղավաղում (խեղճ, վախվորած ու սոված զինվորի մասին անիրական պատմություններ պետության դեկավարի շուրթերից), «խաղաղության» մասին կեղծ քարոզներ, հայ հասարակության մեջ փամփուշտներից զարդեր պատրաստելու գաղափարի քարոզչություն («Որքան շատ կին միանա արշավին, այնքան շատ փամփուշտ կվերանա աշխարհից, կկորցնի իր նախնական նշանակությունն ու կդառնա ընդամենը զարդ, իսկ դա իր հերթին նշանակում է, որ այդքան շատ կյանք հնարավոր կլինի փրկել: Սա, իհարկե, սիմվոլների լեզու է, բայց



Աշուր Երկաթի հուշարձանը Բջևանում

իրականությունից հեռու չէ»¹⁰⁾, գենքերը հանձնելու կոչ («.....ես հավատում եմ, որ միասին մենք կարող ենք պատմության գիրկն ուղարկել դարաբաղյան հակամարտությունը, հանձնել գենքերը և խրախուսել տղամարդկանց պատերազմել «մտքի և խոսքի» ուժով»¹¹⁾ և նմանատիպ այլ դրսևորումներ, ոչ այլ ինչ են, քան դավաճանությունը: 2020 թ. սեպտեմբերի 27-ից Հայաստանում իշխողները դավաճանությունից անցում կատարեցին կոլաբորացիոնիզմի, և մինչ այս պահը սույն կոլաբորացիոնիստական խմբակը Ադրբեյջանի և Թուրքիայի հետ միասին պատերազմում է այն պետության դեմ, որի քաղաքացին ու, ցավոք, նաև իշխանավորն է ինքը: Հենց այդ պատերազմի տրամաբանությունից է բխում ապրիլի 14-ին Ազգային ժողովի ամբիոնից երկրի վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի այն միտքը, թե «Եթե զինվորը կանգնած է սահմանին, դա խաղաղություն չի: Խաղաղությունը այն է, երբ սահմանին կանգնած է սահմանապահ, և հարցերը կարգավորվում են սահմանային նշանների միջոցով և ոչ թե դիրքերի միջոցով»¹²⁾:

«Ինչ անել» հարցի պատասխանը հետևյալն է՝ «ցուցանակային խաղաղության» (սահմանային նշանների միջոցով հարցերը կարգավորող) ջատագով կոլաբորացիոնիստների խմբակին բոլոր հնարավոր և անհնարին միջոցներով հեռացնել պետության դեկից և պետական մակարդակով պայքար ծավալել կոլաբորացիոնիզմի դեմ:

Ինչպես պայքարել կոլաբորացիոնիզմի դեմ: Կրթել կամ վերակրթել հայաստանյան հասարակությանը պետականակենտրոնության ոգով՝ դրա հիմքում դնելով «ազգային պետականությունն ամեն բանից վեր» գաղափարախոսությունը, հակառակ դեպքում

այս աղետալի վիճակը հաղթահարելուց հետո էլ՝ 30, 50 կամ 100 տարի անց, դարձյալ կհայտնվի մեկ այլ կոլաբորացիոնիստ «Նիկոլ» կամ «Կապյան», որ գաղափարախոսությամբ հակահայաստանյան ու հոգեբանորեն անհայրենիքների մի փոքրիկ խմբակով հողին կհավասարեցնի տասնամյակների ընթացքում արյուն-քրտինքով ստեղծվածը: Հարյուրամյակներ շարունակվող այս տեղապտույտից դուրս գալու համար անհրաժեշտ է դասեր քաղել սեփական պատմությունից, իսկ դասեր քաղել նշանակում է ձևավորել համապատասխան վերաբերմունք ու մշակել պետական շահերից բխող նպատակային քաղաքականություն դավաճանների և կոլաբորացիոնիստների նկատմամբ: Շրջապատված լինելով ամեն վայրկյան իրեն բզկտելու պատրաստ թշնամիներով՝ Հայաստանն իր գոյությունն ապահովելու, զարգանալու և ուժեղանալու համար պետք է հնարավորինս բացառի իր ներսում դավաճանների, աշխարհաքաղաքացիների ու կոլաբորացիոնիստների գոյությունը կամ իրեն նետի թշնամու և կոլաբորացիոնիստ վարչակազմի կողմից առաջարկվող «ցուցանակային խաղաղության» գիրկը և կարճ ժամանակ անց իր տեղն զբաղեցնի պատմության ասպարեզը լքած հազարավոր երկրների կողքին: ■

Ֆոտոմներ

1. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 273:
2. Նույն տեղում, էջ 274:
3. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 212:
4. Նույն տեղում, էջ 221:
5. Նույն տեղում, էջ 222:
6. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 184:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, էջ 479:
9. Մելքոնյան Ա., Կարսի անկումը. պատճառներ և դասեր, «Դրօշակ», Եր., հոկտեմբեր, 2020, թիվ 10 (1644), էջ 42:
10. «Կանայք հանուն խաղաղության» արշավի մասնակիցները եղել են առաջնագծում. նրանք կստանան հավիվ փամփուշտներից պատրաստված զարդեր, <https://armenpress.am/arm/news/950023.html> (մուտք՝ 19.04.2022):
11. Աննա Հակոբյանը Կանանց եվրասիական համաժողովի մասնակիցներին կոչ արեց միասալ խաղաղության իր արշավին, <https://168.am/2018/09/24/1014907.html> (մուտք՝ 19.04.2022):
12. Եթե զինվորը կանգնած է սահմանին, դա խաղաղություն չի. Նիկոլ Փաշինյան, <https://www.armenpress.am/arm/news/1080615/> (մուտք՝ 19.04.2022):

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

ա) Գրականություն

1. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Եր., 1996:
2. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:
3. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Մամուլ

1. Մելքոնյան Ա., Կարսի անկումը. պատճառներ և դասեր, «Դրօշակ», Եր., հոկտեմբեր, 2020, թիվ 10 (1644):

գ) Համացանցային նյութեր

1. <https://armenpress.am/arm/news/950023.html>.
2. <https://168.am/2018/09/24/1014907.html>.
3. <https://www.armenpress.am/arm/news/1080615/>.

Մայիսի 28-ի պատմական խորհուրդն ու դասերը (անկախության 104-ամյակի առթիվ)

Արարատ Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Տակավին ուշ միջնադարում՝ հայոց պետականությունների կորստից հետո, հայ հոգևոր և աշխարհիկ գործիչները, հայ հասարակական-քաղաքական միտքը, իսկ 19-րդ դարի վերջերից արդեն հայ ազգային քաղաքական կուսակցություններն իրենց «Դաշնաց թղթերով», «Տեսիլքներով», մշակած ծրագրերով, ռազմավարությամբ ու մարտավարությամբ դեգերել են, ուղիներ փնտրել, դիմել հաճախ անհավասար պայքարի ու զոհողությունների՝ հայրենիքի ու հայ ժողովրդի ազատության և անկախ պետականության վերականգնման համար: Պատմափիլիսոփայական ու քաղաքագիտական պարզ ու մնայուն թեորեմ է այն, որ **ազատությունն ու անկախությունը** յուրաքանչյուր արժանապատիվ ազգ-ժողովրդի գերնպատակն են, նրա կենսունակության, հոգևոր և բարոյական ամենաբարձր ցուցիչը: Այս իմաստով անբեկանելի է ՀՅԴ ճանաչված տեսաբան ու գործիչ Վ. Նավասարդյանի դատողությունն այն մասին, որ «Անկախությունը ազգերի անկապտելի իրատունքն է, նրանց անվերաքննելի ու նուիրական սեփականությունը: Անկախությունն ազգ-սուրբյեկտի ազատութեան միակ ձևն է, անկաշկանդ ապրելու և ստեղծագործելու միակ միջոցը»¹:

Հասկանալի է, որ Վ. Նավասարդյանն այս խոսքերն ուղղակիորեն հասցեագրում էր անկախությունը կորցրած հայ ժողովրդին և պատգամում, որ, ինչ էլ լինի, պետք է պայքարել ազգային այդ նվիրական, համամարդկային մեծագույն արժեքի վերականգնման, պահպանման ու առաջընթացի համար: Տեղին է հիշել նաև հայ մեծ մտավորական Ն. Աղբալյանի (Հանգույց) դիտարկումն այն մասին, որ «Ամեն ազգ պետք է իր քաղաքական հայրենիքն (ընդգծումը մերն է – Ա. Հ.) ունենա»²:

Դարավոր մաքառումներից և վիթխարի կորուստներից հետո՝ 20-րդ դարասկզբին, հայ ժողովրդին, ի վերջո, գերմարդկային ճիգերով ու կորուստներով հաջողվեց ձեռք բերել անկախություն և Արևելահայաստանի մի փոքր հողակտորի վրա վերականգնել ու կերտել հայոց անկախ պետականությունը: Այդ ամենի համար մենք ամենից առաջ մեծապես պարտական ենք 1918 թ. մայիսյան հաղթական հերոսամարտերին:

Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցում, պատմական էքսկուրս կատարելով, կարելի է արձանագրել այն իրողությունը, որ դարեր առաջ հայ քաղաքական միտքը, հայ հոգևոր ու աշխարհիկ գործիչների հայացքը սկզբում ուղղված էին դեպի Արևմուտք, իսկ ավելի ուշ՝ արդեն 18-րդ դարում՝ հիմնականում դեպի Ռուսաստան: Սակայն նրանց քաղաքական-ազատագրական



առաքելությունների նպատակն էր ոչ թե պարսկաթուրքական բռնապետական, ազգային ու կրոնական հալածանքներից ազատագրվելով միանալ, օրինակ, Ռուսաստանին, այլ արևմտաեվրոպական կամ ռուսական քրիստոնյա պետությունների օգնությամբ ազատագրել հայրենիքն ու հայ ժողովրդին և հիմնել սեփական ազգային պետականություն՝ թագավոր կարգելով, ըստ Ի. Օրիի ծրագրի, թեկուզ Պֆայլցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին, ըստ Հ. Էմինի՝ վրաց թագավոր Հերակլ 2-րդին, իսկ ռուսահայ թեմի առաջնորդ Հ. արք. Արղությանի կազմած նախագծով՝ իշխան Գր. Պոտյոմկինին և այլն: Այդ ամենով հանդերձ՝ հայ քաղաքական մտքի, ազատագրական գաղափարաբանության ու գործիչների ձգտումը, վերջնականապես ոչ թե որևէ գործը երկրի միանալն էր, այլ սեփական ազգային պետականություն ստեղծելը՝ թեկուզ ունենալով այլազգի արքա և ստանալով նրա հովանավորությունը:

Դառնալով Մայիսի 28-ի պատմական խորհրդին՝ կարելի է վստահաբար ասել, որ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերից ծնվեց անկախությունը, և ստացվեց այնպես, որ մենք առանձնապես հովանավոր պետության կարիքը չունեցանք: Մայիսյան հաղթանակը դրեց դարերով ընդհատված հայոց անկախ պետականության հիմքը: 104 տարի առաջ տեղի ունեցած այդ երկու ճակատագրական իրադարձությունները անբաժանելի ամբողջություն են համայն հայության համար՝ որպես պատմական բեկումնային շրջադարձ: Տեղին ու դիպուկ է «Հայոց պատմություն» ակադեմիական բազմահատորյակի առաջաբանում տրված այն գնահատականը, որ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի համար, հիրավի, «Հայրենական պատերազմ էին», որի հետևանքով ոչ միայն ջախջախվեց և դուրս շարվեց հայության դարավոր թշնամին, այլև վերաժնվեց հայկական պետականությունը՝ Հայաստանի առաջին հանրապետությունը, ինչն էլ ազդարարեց հայոց պատմության նորագույն շրջանի սկիզբը³:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ հայկական հայրենականի գլխավոր հերոսը, անսկուն և կամային մարտիկն ու հաղթանակի կազմակերպիչը, նորահռչակ հանրապետության հիմնադիրը Արամ Մանուկյանն (Մարգիս Հովհաննիսյան) էր, մի անհատականություն, որի տեսակը, ցավոք, պակասում է մեր ժամանակներում: Իբրև կեսդարյա պատմաբան՝ համարձակվում եմ ասել, որ Երևանի դիկտատոր (զուտ դրական իմաստով) Արամին կարելի է համեմատել 17-րդ դարի Անգլիական մեծ հեղափոխության շրջանում դարձյալ դիկտատոր հռչակված Օլիվեր Կրոմվելի հետ, թեև իբրև դիկտատորներ՝ նրանք տարբեր խնդիրներ են լուծել: Կրոմվելը՝ անգլիական հեղափոխության ժամանակ պառլամենտական Անգլիայում ուժի գործադրմամբ կարգը պահպանելու, երկրում բարենորոգումներ իրականացնելու և երկիրը ժողովրդավարական ուղիով տանելու, իսկ ժողովրդի կողմից անսահմանափակ իշխանությամբ հայոց դիկտատոր ընտրված Արամը՝ մահվան, լինել-չլինելու սպառնալիքի առջև կանգնած հայ ժողովրդին համախմբելու, նրան մարտական ոգի ներշնչելու, հաղթանակի տանելու և մայիսի 28-ին անկախ պետականություն կերտելու խնդիրը⁴: Մինչ այդ՝ 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմի վրաց մենշևիկյան խմբակցության նախաձեռնությամբ Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության (ԱԴՀ) փլուզումից և Վրաստանի անկախության ու կովկասյան թաթարների կամ թյուրքերի կողմից «Ադրբեջան» անվանումով պետության հռչակումից հետո, 15 հոգուց բաղկացած Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդը համարձակություն դրսևորեց և, պատասխանատվություն վերցնելով իր վրա, մայիսի 28-ին վճիռ կայացրեց՝ իրեն հռչակելով «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»⁵: Զուտ քաղաքական-դիվանագիտական նկատառումով և առաջին հերթին Ռուսաստանից չկտրվելու մտավախությամբ պայմանավորված (ըստ Ս. Վրացյանի՝ «անկախությունը կարող էր ավելի ևս ծանրացնել կացությունը»)՝ Հայոց ազգային խորհրդի պաշտոնական հայտարարության մեջ անգամ չի եղել «անկախություն» բառը, այդուհանդերձ, բազմակուսակցական կառուցվածք ունեցող, հայ ժողովրդի արևելահայ ամբողջ քաղաքական ներկայակերպը ներկայացնող Հայոց ազգային խորհուրդը գնաց համարձակ այդ քայլին, հակառակ դեպքում Արևելահայաստանի գավառները կարող էին բաժան-բաժան արվել հարևան երկրների միջև: Իսկապես, մայիսյան հաղթանակների ձախողումը հղի էր ոչ միայն արևելահայության ֆիզիկական ոչնչացման սպառնալիքով, այլև հայկական տարածքների բաժանմամբ թուրքական, վրացական և թաթարական ազգային-պետական կազմավորումների միջև:

Հատկանշական է այն փաստը, որ ՀՀ առաջին վարչապետ Հովի. Քաջազունու դեռևս կիսակազմ կառավարությունը միայն 1918 թ. հունիսի 13-ին նախ մեր անմիջական հարևան, հայության հանդեպ մըշտապես լոյալ ու չեզոք դիրք գրաված Պարսկաստանի



Իսրայել Օրի

կայսերական կառավարությանը, իսկ այնուհետև ի լուր աշխարհի բազում պետությունների **հայտարարեց հայկական դեմոկրատական հանրապետության** անկախության հռչակման մասին⁷: Պատմական ավելի քան մեկդարյա ու արդի իրողությունների լույսի ներքո ուզում ենք ընդգծել, որ Հայաստանի կառավարությունը առաջինը հարևան ու բարեկամ Իրանին է դիմել՝ ճանաչելու Հայաստանի անկախությունը, ինչը վկայում է, որ այն ժամանակ էլ ձգտում է եղել ճանաչելու միմյանց անկախությունը: Դրանից բխող հետևությունները թողնենք Հայաստանի այսօրվա իշխանություններին: Հետագայում ՀՀ-ն ճանաչում ստացավ աշխարհի ավելի քան 40 պետությունների կողմից, և անգամ օրակարգ ներառվեց Ազգերի լիգային անդամակցության հարցը⁸:

Կարող է ծագել առաջին հայացքից պարադոքսալ մի հարց՝ ինչպես է, որ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված հայ-թուրքական պայմանագրով հայ ժողովրդի դարավոր թշնամի ու ցեղասպան Թուրքիան առաջինը ճանաչեց ՀՀ անկախությունը: Դրա համար դարձյալ պարտական ենք մայիսյան հաղթական հերոսամարտերին, որոնք հարկադրեցին թուրքերին գնալ հաշտության և պաշտոնապես ճանաչել Հայաստանի անկախությունը, թեև մի փոքր հողակտորի՝ ընդամենը 10 հազար քառ. կմ-ի վրա: Գնահատելով այդ երևույթը՝ վաստակաշատ պատմաբան Լեոն Նորանկալի Հայաստանը հեզ-նորեն անվանել է ոչ թե «բնականության տեղ, այլ գերեզման»⁹: Պատմաքաղաքական հետազա դեպքերը, սակայն, ցույց տվեցին, որ Լեոյի այդ հուզական գնահատականը ճիշտ չէր: 1918 թ. աշնանը՝ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, նորահռչակ ՀՀ տարածքն ընդարձակվեց. ըստ 1919 թ. աշնանը ԱՄՆ-ի Սենատին ուղղված Հովի. Քաջազունու՝ «Հայաստանի Հանրապետութիւն» վերտառությամբ հուշագրի՝ այն կազմել է 67.5 հազար քառ. կմ¹⁰: Հիրավի, մեծագույն ճիգ ունեցնող շատ կարճ ժամանակամիջոցում, թերություններով ու բացթողումներով հանդերձ, հնարավոր եղավ

ստեղծել ժողովրդավարական պետություն՝ պետաիրավական համակարգով, իշխանության երեք թևերով, ֆինանսատնտեսական կառույցներով, կրթամշակութային հաստատություններով, դիվանագիտական կապերով, ազգային բանակով, պետականության խորհրդանիշներով և այլն:

Անհեթեթ ու անհիմն է խորհրդային-բուլշևիկյան պատմագրության և դրան տուրք տվող որոշ հեղինակների այն պնդումը, թե մայիսի 28-ին Հայաստանի անկախացումը եղել է Թուրքիայի թելադրանքով, այդ օրը «հայ աշխատավորության ստրկացման օրն» է և այլն¹¹: Ավելին՝ հաճախ «անկախություն» բառն առնվել է չակերտների մեջ¹²: Մինչդեռ փաստերը, պատմական դեպքերի տրամաբանությունը հուշում են, որ եթե խնդիրը թողնվեր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլև հնարավորության պարագայում Այսրկովկասում ևս հայ չէր թողնի և արևելահայոց հարցը կլուծեր արևմտահայոց հարցի նման: Եվ այդ ոճրային ծրագրի կասեցման գործում մենք պարտական ենք ամենից առաջ մայիսյան հաղթական հերոսամարտերին:



Հովսեփ Էմին

Հայոց պատմության մեջ առանձնանում են մայիսյան պատմական երեք առավել հիշարժան իրադարձություններ՝ բոլորիս հայտնի 451 թ. Ավարայրի ճակատամարտը՝ ավելի շատ իր բարոյական հաղթանակով, 1918 թ. Մարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաբաղի ճակատամարտերն ու անկախության հռչակումը և 1992 թ. մայիսի 9-ին (իրականում՝ 8-ին) հայրենի **Շուշիի** ազատագրումը: Շատերի կարծիքով՝ իր նշանակությամբ ու հետևանքներով առավել մնայունն ու հավերժորդ մեզ համար առաջին հերթին 1918 թ. թուրք-հայկական **մեծ**

հայրենական պատերազմն է և դրա վերջնարդյունքում մայիսյան հաղթանակը՝ իհարկե չթերագնահատելով մյուս երկուսի դերը: Ցավով պետք է արձանագրել արցախյան 44-օրյա ձախողված պատերազմի հետևանքով Արցախի խորհրդանիշը հանդիսացող, առայժմ թշնամու կողմից կարծես գերեվարված հնամենի Շուշի քաղաքի կորուստը:

Չխորանալով հանրահայտ պատմության այլ մանրամասների մեջ՝ կարելի է արձանագրել, որ Մայիսի 28-ի 104-ամյա պատմության փորձն ու խորհուրդը փաստում են, որ ժամանակային առումով որքան հեռանում ենք այդ դարակազմիկ և շրջադարձային իրադարձությունից, և որքան ավելանում են մեր առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները, այնքան մեծանում է Մայիսի 28-ի պատմական անսանց արժեքն ու նշանակությունը՝ հայ ժողովրդի անկախ պետականության պահպանման, անվտանգության ապահովման, ժողովրդավարության և սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային ձեռքբերումներով առաջատար երկրների շարքին դասվելու, զարգանալու և հարատևելու առումով:

Հաղթական մայիսը և Առաջին հանրապետության պատմության փորձն ու դասերը ուսուցանում են ազգային բանակին և սեփական ուժերին ապավինելու գաղափարը՝ իբրև ազգ-ժողովրդի ու պետականության պաշտպանության առավել հուսալի երաշխիք: Տեղին է մտաբերել մեծն Նժդեհի թևավոր դարձած խոսքը. «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յոյսը դնում է նախ իր բազուկին, իր զենքի վրայ»¹³: Այդ առումով մենք պետք է դասեր քաղենք արցախյան վերջին 44-օրյա ձախողված պատերազմից, որի պատճառները բազում են, այդ թվում՝ օրվա իշխանությունների թույլ տված աններելի սխալները: Հանրահայտ ճշմարտություն է, որ սովորաբար տվյալ ազգ-պետությունը ավելի շատ դասեր առնում է ձախողում-պարտություններից, քան հաղթանակներից:


Կրկին դառնալով միմյանց իրավահաջորդած երեք հանրապետություններին՝ կարելի է ընդգծել դրանց միջև առկա բարձրագույն քաղաքական, հոգևոր-մշակութային իրավահաջորդության ու ժառանգորդության կապը: Հայաստանի երեք հանրապետությունների պատմության պատմաքննական-համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ինքնիշխանության, ժողովրդավարության, մարդու իրավունքների ու ազատությունների, բազմակուսակցական համակարգի, գաղափարախոսության, իրավաքաղաքական, տնտեսական և անգամ պետականության խորհրդանիշների և այլ արժեքային համակարգերի առումով, անշուշտ նաև իրենց առջև ծառացած մարտահրավերներով իրար շատ ավելի մոտ ու հոգեհարազատ են Առաջին և Երրորդ հանրապետությունները: Ինչ վերաբերում է 70-ամյա կենսագրություն ունեցող Երկրորդ հանրապետությանը՝ Խորհրդային Հայաստանին, ապա այն, թեև համարվում էր ոչ լիարժեք ինքնիշխան հանրապետություն, այնուամենայնիվ, ՀՄԽՀ, իսկ հետո

Հայկ. ՍՍՀ անվանումներով օժտված էր պետականության որոշակի հատկանիշներով՝ իր պետական կառույցներով, իշխանության մարմիններով, վարչական կառուցվածքով, միակուսակցական համակարգով, միութենական սահմանադրության տեղայնացմամբ, պետական խորհրդանիշներով, սկզբնական շրջանում՝ նույնիսկ սեփական բանակով և այլն, թեև նրանում շատ նորմեր ունեցել են պարզապես դեկլարատիվ բնույթ¹⁴:

Երբ խոսվում է ավելի քան 30-ամյա Երրորդ հանրապետության, նրա առջև ծառացած բազում հիմնախնդիրների և առաջին հերթին Արցախի ու նրա ժողովրդի անվտանգության, հայրենի հողի պաշտպանության, երկիրը շենացնելու մասին, հարկ է առաջնորդվել այն գաղափարով ու գիտակցությամբ, որ անկախ նրանից, թե այսօր ովքեր են իշխանության դեկին, և ով է վարչապետի պաշտոնում հայտնվել, նրանք դեռևս պետությունը չեն. այդ ամենը ժամանակավոր է, մնայուն ու հարատևողը անկախ պետականությունն է ժողովրդի հետ միասին:

Մայիսի 28-ի հոգևոր ու առարկայական խորհուրդներից է ապահովել Հայաստանից ու Արցախից դուրս աշխարհասփյուռ 8 միլիոն հայության մասնակցությունը հայոց պետականության հետագա հզորացմանը: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ապահովելու սփյուռքահայերի վերադարձը, ինչպես Ն. Աղբալյանն է ասել, իրենց **քաղաքական հայրենիք-Հայաստան**՝ իբրև իրենց ինքնության, անվտանգության ու զարգացման միակ հուսալի հենարանի ու ապավենի:

Վերհիշելու, գնահատելու և դասեր քաղելու առումով հետաքրքիր է, թե անցած ավելի քան մեկ դարում ինչպես է նշվել Մայիսի 28-ը Սփյուռքում, Խորհրդային Հայաստանում և Հայաստանի երրորդ հանրապետությունում, ի մասնավորի՝ ԳԳ-ական կառավարման վերջին տարիներին: Պետական պաշտոնական մակարդակով վերջիններիս վերաբերմունքը գրեթե չի տարբերվել խորհրդային-կոմունիստական վարչախմբերի վերաբերմունքից: Ինչ վերաբերում է Սփյուռքին, ապա կուսակցական-հատվածական տարանջատվածության հանգամանքն իր դրոշմն է թողել այդ նշանակալի իրադարձության գնահատման ու արժևորման հարցում: Կարելի է ասել, որ հայ հանրության լայն շրջանակներում դեռևս չի ձևավորվել այն հավաքական գիտակցությունը, որ Մայիսի 28-ը միայն ՀՅԴ-ինը չէ: Ժողովրդի համախմբման, նվիրյալ գործիչների ու կուսակցական կառույցների մեծագույն ջանքերի շնորհիվ շատ կարճ ժամանակամիջոցում՝ ընդամենը 2,5 տարում, տեղի ունեցավ պետականության՝ եռաթև, ժողովրդավարական, բազմակուսակցական հիմունքներով **ինստիտուցիոնալ կայացումը**: Եվ այդ հաղթանակն ու պետականությունը չեն պատկանում որևէ կուսակցության կամ ինչ-որ վարչախմբի, այլ համայն հայության սեփականությունն են, նրա պատմական հարստությունն ու անմոռաց հիշողությունը ■ այսօրվա ու վաղվա Հայաստանի ամուր հիմքը:



Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՄՆԿ

1. Նաասարդեան Վ., Հայաստանի անկախությունը, Ժընև, 1924, էջ 44-45:
2. Հանգոյց Ն., Մտածումներ Հ. Յ. Դաշնակցության մասին, Փարիզ, 1930, էջ 89:
3. Տեն «Հայոց պատմություն», հ. 3, գ. 2, Եր., 2010, էջ 9:
4. Տեն Արամ Մանուկյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2009, էջ 16-18:
5. Տեն Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 18:
6. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 644, թ. 1:
7. Տեն նույն տեղում, գ. 23, թ. 166, գ. 35, թ. 146:
8. Տեն Հայաստանի Ա. Հանրապետության 100-ամեակ, Գիտաժողովի նիսեր (Աթիլիաս, 21-23 մարտ 2018), Աթիլիաս, 2021, էջ 158-159:
9. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 404:
10. Տեն Քաջագունի Յովհ., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 10:
11. Տեն Երզնկյան Ա., Աշխատավորության դատարանին, Եր., 1927, էջ 50-51, Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերն, Փարիզ, 1947, էջ 435, Սերոբյան Մ., Հայաստանի անկախության արթիվ, Գահիրե, 1950, էջ 9-10 և այլն:
12. Տեն Эльчибеян А., Установление советской власти в Армении, Ер., 1954, էջ 49, 56-57, Արզումանյան Մ., Արիավիրքի վերածնունդ, Եր., 1973, էջ 153 և այլն:
13. Նժդեհ Գ., Հատընտիր, Եր., 2006, էջ 39:
14. Այդ մասին տես Խաչատրյան Հ. Մ., Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Եր., 1997, էջ 13: Տեն Լևոն Հազարյան В. Р., Теория и практика конституции союзной республики, Ер., 1987, էջ 43:

Համաթուրքականության-համաթուրանականության գաղափարախօսությունը սերմանող թուրք դեկավարներու և գործիչներու վարքագիծը (մաս 2)

Աւօ Գաթրճեան

Հրապակագիր, բանասէր, Հալէպի Հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախոս

Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադիր և առաջին նախագահ, ինքզինք հանրապետական յայտարարող, թուրանիստ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի որդեգրած քաղաքական դիրքորոշումները շատ յստակ էին. Անատոլիոն կամ, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, այն սահմանները, որոնք գծուած էին նոր հանրապետութիւն մը ստեղծելու, պիտի կոչուէր Թուրքիա:

Մուսթաֆա Քեմալի հռչակաւոր նշանաբանը՝ «Թուրքիան՝ թուրքերու համար» (թրքերէն՝ *Türkler için Türkiye*), վերածուած էր քաղաքական նպատակի՝ Թուրքիոյ Հանրապետութիւնը բոլոր միւս ազգութիւններէն ազատելու և միատարր բնակչութիւն ստեղծելու համար:

Իրականին մէջ «Թուրքիան՝ թուրքերու համար» նշանաբանը համաթրքութեան գաղափարախօսութեան մէկ մասն է: Այն քաղաքական ուղեծիր էր և Թուրքիոյ մէջ կ'արտայայտուէր բացէ ի բաց:

30 սեպտեմբեր 1926ին Թուրքիոյ մայրաքաղաք Անգարայի Չանքայայի նախագահական պալատին մէջ Մուսթաֆա Քեմալ Թուրքիոյ մարզական միութեան համաժողովը ներկայացնող պատուիրակութեան ըսաւ. «Այսքան կարևոր մարզական կեանքը մեզի համար աւելի կարևոր է, որովհետև ցեղային հարց է: Յեղի բարեկաման և հոգեկան հանգստութեան հարց է: Ըմբոստութեան և նոյնիսկ քիչ մըն ալ քաղաքակրթութեան հարց է»: Այնուհետև՝ 20 հոկտեմբեր 1927ին՝ երիտասարդութեան ուղղուած ելոյթի ժամանակ ըսելով՝ «Թուրք երիտասարդ, ուժը, որուն կարիքը ունիս, երակներովդ հոսող արեան մէջ է», ցեղապաշտութեան տուաւ փոխաբերական ձև: Յաջորդ տարի համալսարանական երիտասարդներու սկսած «Քաղաքացի, թուրքերէն խօսիր» և «Թրքական ազգային պետութեան համար թուրք քաղաքացի դաստիարակեցէք» արշաներու արդիւնքով գործը թափ ստացաւ:

Միւս կողմէ՝ 1938ին Քեմալ կը յայտարարէր, որ Թուրքիոյ ամենէն մեծ ու բարդ խնդիրներէն մէկը քիւրտերու հարցն է, որովհետև անոր նպատակը, համաթրքութեան հետևելով անշուշտ, Թուրքիան թրքացնել էր, հետևաբար այդ շրջանին արգիլուեց «Քիւրտիստան» անունը՝ անոր փոխարէն օգտագործելով «Արևելք» բառը, փակուեցան բոլոր քրտական հրատարակութիւնները, դպրոցներն ու մշակոյթի օճախները: Արդ, բոլոր կառավարութիւնները՝ սկսած Աթաթուրքէն մինչև այս օրերը, միշտ խնդիր ունեցած են խափանելու քիւրտ ժողովուրդի գոյութեան իրաւունքը: Եւ փոխառած են լոկ բռնութեան և ոչնչացման ձևերն ու մեթոտները:

Քեմալի գաղափարական տեսաբանութեան



տրուեցաւ քեմալիզմ (քեմալականութիւն) անուանումը, որ իր առաջ մղած թրքական ազգայնականութեան գաղափարախօսութիւնն է, դեռ կը համարուի Թուրքիոյ Հանրապետութեան պաշտօնական գաղափարախօսութիւնը: Քեմալականութեան հիմքին մէջ 6 կէտ է դրուած («Վեց նետ» — թրքերէն՝ *Altı Ok*): Առաջին չորս նետերը ձևակերպուած են 1927ին, իսկ 1931 թուականին ալ անոնց աւելցած են ևս երկուքը: Վեց նետերու վարդապետութիւնը վերջնականապէս ամրագրուած է Թուրքիոյ Սահմանադրութեան մէջ 1937 թուականին:

Թուրքիոյ ցեղապաշտական նկրտումներուն շրջածիրին մէջ կը կայանան նաև Լոզանի պայմանագրէն յետոյ Արևմտեան Հայաստանի կամ, այսպէս կոչուած, Թուրքիոյ հողատարածքին վրայ որդեգրուած նոր համաթրքական ոտնձգութիւնները ոչ քրիստոնէայ ժողովուրդներուն դէմ: Բոլորիս յայտնի է, որ 1923 թ. յուլիսի 24ին՝ Լոզանի՝ 8 ամիս տևած խորհրդածողովէն ետք, կնքուեցաւ հաշտութեան պայմանագիր: Այս պայմանագիրը ևս չօգնեց հայերուն և Թուրքիայի տարածքին ապրող միւս քրիստոնէայ ժողովուրդներուն ապրելու առաւել բարեկեցիկ կեանքով:

Թէև Լոզանի պայմանագիրը, որպէս այդպիսին, ուղղուած էր Թուրքիոյ մէջ ժողովրդավարութեան բարձրացման, թրքական ոստիկանութիւնը անտարբեր էր հայերու հանդէպ գործադրուող բռնութիւններու նկատմամբ:

Թուրքիա բնակող հայերուն համար միակ ապահով վայրը կը համարուէր Պոլիսը, որ կը գտնուէր Թուրքիոյ կրօնական հատուածին մէջ: Հոն հայերը հնարաւոր չափով կրնային հաւաքական կեանք վարել:

Հայկական վեց վիլայեթներու (նահանգ) տարածքի մեծ մասը զինուորական գօտի յայտարարուած էր, և հոն ճամփորդելը՝ արգիլուած, իսկ զբօսաշրջիկի

կարգավիճակով Թուրքիա մտնող հայերը պետք է ստորագրություն տային, որ իրենց կալուածները կառավարութենէն ետ պիտի չչափանջեն:

Այս շրջանին մէջ Լոզանի պայմանագիրը հասարակ ու մոռցուած թուրք մըն էր: Ազգային փոքրամասնութիւններու հանդէպ Մուսթաֆա Քեմալի որդեգրած «Թուրքիան՝ թուրքերու համար» քաղաքականութիւնը երկիրը կը տանէր դէպի միատարր բնակչութեան ստեղծման:

1930 թ. օգոստոսի 31ին թրքական «Միլլիէթ» թերթը վարչապետ Իսմէթ Ինէժինի անունով կը յայտարարէր. «Այս երկրին մէջ միայն թուրք ժողովուրդն է, որ ազգային իրաւունքներ ունի, ո՛չ մէկ այլ տարր կրնայ ունենալ այդ իրաւունքները»:

Վերոնշեալ միտքի այլ տարբերակ մըն է Թուրքիոյ արդարադատութեան նախարար ազգայնապաշտ Մահմուտ Էսատ Պոզքուրթի ամենայայտնի խօսքը 1930 թ. սեպտեմբերի 18ին Զմիտնիոյ (Իզմիր) քաղաքի Էօստեմիշ շրջանի մէջ արտասանած ճառի մէջ. «Իմ կարծիքս է, և համոզուած եմ, որ այս երկիրը ինքնին թուրք է: Անոնք, որոնք մաքուր թուրք չեն, այս թրքական հայրենիքին մէջ մէկ իրաւունք ունին, ան ալ՝ ըլլալ ծառայ, ստրուկ»:

Յայտարարութիւնները ուղեկցուեցան գործնական քայլերով: «Թուրքիան՝ թուրքերու համար» գաղափարախօսութեան առաջին գործնական քայլերն էին յատկապէս տուրքերու և խտրական նորանոր օրէնքները:

Ճնշումներու և սահմանափակումներու ենթարկուեցան Թուրքիոյ տարածքին գտնուող հայկական եկեղեցիները և դպրոցները, իսկ մշակութային կոթողները անբուխ: Զուգընթաց կը շարունակուէին ճնշումները հայերու նկատմամբ:

Այնուհետև՝ 28 հոկտեմբեր 1960ին, «Եէնի կիմ» («Նոր օր») թերթը գրեց. «Մենք ոչ ոք զիտենք, որ ինքզինք անուանէ քիւրտ: Թրքական հանրապետութեան բոլոր քաղաքացիները թուրք են»:

21 մարտ 1962ին թրքական այլ թերթի մը («Եէօն», «Ուղղութիւն») մէջ փանթուրանիստ, «Ազգայնական շարժում» կուսակցութեան հիմնադիր, ծայրայեղ աջ ազգայնականներու առաջնորդ, գնդապետ Ալփարսլան Թիւրքէշ կը գրէր յօդուած մը՝ «Ո՛վ թուրք, գործէ՛» վերնագրով:

Թիւրքէշ, անդրադառնալով, որ «արդէն մերը չեն Ռոմէլիան (այսինքն՝ Պուկարիան, Յունաստանը և հարաւ Սլաւիան), Հունգարիան, Սուրիան, Իրանը, Պաղեստինը, Եգիպտոսը, Թրիփոլին, Թունիզը, Ալճերիան, Խրիմը և Կովկասը... գործէ՛, ինչպէս Գորշ Գայլը: Թող վերածնունդի երբեմնի ժամանակները... թող Թուրքիան գերիշխէ՛ բոլորին վրայ... Մա վիթխարի Թուրքիան է մինչև Թուրանը». ահաւասիկ ծաւալապաշտական ցնորքներով տարուած թուրքիզմի ամէնէն ցայտուն օրինակներէն մէկը:

Պէտք է ըսել, որ 1969 թ. փետրուարին Ալփարսլան Թիւրքէշ պահպանողական հանրապետական գիւղացիական ազգային կուսակցութիւնը վերածեց ազգայնական շարժման աջ արմատական կուսակցու-



թեան (MHP):

Լուսարձակի տակ առնելով «Ազգայնական շարժում» կուսակցութեան դաւանած գաղափարախօսութիւնն ու կառուցուածքը՝ խիստ կարևոր է յիշեցնել, որ այս կուսակցութիւնը կառուցուած է իտալական ֆաշիզմի և գերմանական նացիզմի նմուշներով: Ան ունէր նաև ռազմականացուած թև, որն այլ խօսքով կարելի է անուանել նաև ահաբեկչական: Կուսակցութեան կողքին կը գործէ երիտասարդական ազգայնական «Պոզքուրթ» կազմակերպութիւնը:

«Պոզքուրթ» կամ «Գորշ գայլեր» (թրքերէն՝ Bozkurtlar կամ Bozkurtçular, իսկական անուանումը՝ Ülkücülük — «իտէալականութիւն») ստեղծուած է «Ազգայնական շարժում» կուսակցութեան (MHP) հովանիի ներքև, որուն հետ երբեմն կը նոյնականացուի:

«Պոզքուրթ» կազմակերպութիւնը կը համարուի «Ազգայնական շարժում» կուսակցութեան արմատական թևը, որ հաւատարիմ է համաթրքականութեան գաղափարախօսութեան: «Գորշ գայլ» կազմակերպութիւնը հետագային անուանափոխուեցաւ «Իւլքիւ օճաքլարը»: Իսկ գորշ գայլերը կը սիրեն իրենք զիրենք իւլքիւճիւներ (իտէալականութիւն) անուանել:

«Ազգայնական շարժում» կուսակցութեան ղեկավարը՝ Թիւրքէշ, իւլքիւճիւներու յորջորջումով կը կոչուի «պաշպուղ», այսինքն՝ «առաջնորդ, գլխաւոր, ոչ կանոնաւոր զինուորական խումբերու հրամանատար»:

Իւլքիւճիւները իրենք զիրենք կը կոչէին «ազգային գաղափարապաշտներ»: 1944 թ. մայիսին էր, որ արտաքին աշխարհը տեղեկացաւ այս շարժումին մասին: Այդ օրը դատական ընթացք սկսաւ թուրք ազգայնականներու և փանթուրանականներու (թրքերէնով՝ «թուրանճի»), այսինքն՝ «Մեծ Թուրան» իտէալիզմ-գաղափարի համակիրներուն դէմ: Դատողներուն մէջ էին շարժումի ղեկավար ու ոգեշնչող Հիւսէյն Նիհալ Աթսըզ և Թիւրքէշ: Անոնք կը մեղադրուէին ապօրինի կազմակերպութեան ստեղծման մէջ, որուն նպատակն էր կառավարութիւնը տապալել, ինչպէս նաև պետութեան դէմ գրգռութիւն ընելով ցեղապաշտութիւնը տարածել:

Իւլքիւճիւներու շարժումը հիմնուած է «ազգի

միասնականությունը և հայրենիքի ամբողջականությունը» պահպանելու համար մղուող պայքարին վրայ. «Ով որ այս գործը կը խանգարել կամ այդ շարժման մեջ կասկածելի կը նկատուի, պետք է անոր դէմ պայքարիլ»:

Ստորև կու տանք երիտասարդական բաժինի՝ իսլամիզմներու երդումը:

ԻՏԷԱԼԻՍՏԻՆ ԵՐԴՈՒՄԸ

Աստուծոյ, Քուրանի,
Հայրենիքի, Դրօշակի,
Ազգի, Զէնքի և Պաշտպանի
ԵՐԴՈՒՄ ԸԼԼԱՅ:

Նահատակներս, հերոսներս վստահ թող ըլլան,
Որպէս ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏ ԹՈՒՐԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ-ՆԵՐ՝

Համայնավարութեան, դրամատիրութեան, ցեղապաշտութեան
և ամէն տեսակ կայսերապաշտութեան (իմպերիալիզմի) դէմ
մեր պայքարը պիտի շարունակուի,
մեր մարտնչումը մինչև վերջին զինուոր, վերջին շունչ,
մինչև արեան վերջին կաթիլն է:
Մեր մարտերը՝ ազգային թուրքիոյ,
Մինչև թուրան է:
Պիտի չվերադառնանք,
Պիտի չվհատինք, պիտի չխնանք,
Պիտի յաջողինք, պիտի յաջողինք:
Պիտի յաջողինք...

«ԱՍՏՈՒՄԸ ԹՈՒՐԿԸ ԹՈՂ ՊԱՇՏՊԱՆԷ ԵՒ ՀԶՕՐԱՑՆԷ» (թարգմ.՝ հեղինակին):

Տեղին է նշել, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին Էնվեր փաշայի ստեղծած երիտասարդական կազմակերպությունը ևս կը կոչուէր «Գորշ գայլեր»: Այժմ գորշ գայլեր կը կոչուին «Ազգայնական շարժում» կուսակցութեան բոլոր անդամները:

Ալփարսլան Թիւրքէշի համաթրքականութեան-համաթուրանականութեան միտքերը արտայայտուած են ուղեցոյց նկատուող և գաղափարախօսական վերլուծումներով կատարելագործուած 1975ին հրատարակուած «Էական սկզբունքներ» («Temel Görüşler») աշխատասիրութեան մէջ: Անոր բովանդակությունը կը բաղկանայ 24 ենթագլուխներէ.

1. «Իտէալ» հասկացութիւնը,
2. Իտէալիստութիւն,
3. Իտէալիստութեան էական հիմունքները,
4. Թուրք ցեղը և թրքերէնը,
5. Բնչ է թրքութիւնը,
6. Թրքութիւնը և թուրք միութիւնը,
7. Թուրք իսլամ իտէալը,
8. Թուրք աւանդութիւնը,
9. Թուրք բարոյականութիւնը,
10. Թուրք ազգայնականութիւնը,

11. Մայր հայրենիք,
12. Բնչն ազգայնականութիւն,
13. «Ազգայնականութիւն» հասկացութիւնը իսլամի մէջ,
14. Ազգային մշակութային պայքարը,
15. Ազգային բարոյականութիւնը,
16. Բարոյականութեան մաքառումը,
17. Բարոյականութեան ճգնաժամը,
18. Կարմիր խնձոր իտէալը,
19. Բնչ է «Գորշ գայլը»,
20. Կազմակերպութիւն,
21. Ինչ ջահերու համառօտ և համադրուած քաջատրութիւնը,
22. Իտէալիստիւն երդումը,
23. Տէտէ Թորքութիւն խրատը,
24. 12 սեպտեմբեր 1980:

Վերոյիշեալ գիրքին մէջ Թիւրքէշ գրած է. «Երբ այսօր՝ մեր օրերուն, երկրագունդի ամբողջ տարածքին կը մղուի յայտարարուած, բայց ահաւոր պատերազմ մը տարբեր ազգերու միջև, պատերազմի մշակոյթներու միջև, կարելի է ազգէ մը բազմաթիւ բերդեր ու ամրոցներ գրաւել, բանակը բազմիցս պարտութեան մատնել, բայց այնքան ժամանակ, որ անոր սիրտն ու հոգին չես գրաւած, այդ ազգը աննուաճելի է: Ամփոփելի իրականութիւն է՝ մարդ այն ազգին մաս կը կազմէ, որուն ինքը կը նախընտրէ պատկանիլ: Մշակութային պատերազմի մէջ իրաքանչիւր ազգ կը ջանայ ուրիշ ազգերու լեզուն, կրօնը, աւանդոյթները, ազգային ու հոգեկան արժէքները ոչնչացնել և զանոնք փոխարինել իր մշակութային արժէքներով»:

«Էական սկզբունքներ» գիրքին այլ բաժնի մը մէջ՝ «Արտասահմանի (դուրսի) թուրքեր» («Diş Türkler») գլխուն տակ, կը գրէ. «Թուրք ազգայնականի համար իրաքանչիւր թուրք կարևոր է, աշխարհի որ տեղը որ ըլլայ ան: Իրաքանչիւր թուրք ազգայնականի պարտականութիւնն է մշտապէս պաշտպանել դուրսի թուրքերը»:

Նոյն գիրքի մէկ այլ բաժնի մէջ Թիւրքէշ կը գրէ. «Ստեղծելու համար առողջ, խիզախ ու որակեալ թուրք երիտասարդ սերունդ պէտք է օգտագործել մարզաձևի հրաշալի միջոցը: ...Իրաքանչիւր թիւրք պատանի, որ կը հրաժարի նոր հասարակութիւն, նոր ազգ և նոր պատմութիւն ստեղծելու իր պարտաւորութենէն, պէտք է ըմբռնէ, որ կը դաւաճանէ այս երկրի մայրերուն, անոր զաւակներուն ու թուրք ազգի իտէալին: Թուրք երիտասարդութիւնը՝ որպէս առաջնորդող ուժ, պէտք է թուրք ժողովուրդը իր ետևէն քաշէ»:

Ալփարսլան Թիւրքէշի այլ աշխատութիւնն է Անգարայի մէջ 1980ին հրատարակուած «Ինը ջահեր» («Dokuz İşk») գիրքը: Այս մէկը Թիւրքէշի ամէնէն կարևոր աշխատութիւնն է և կը համարուի իսլամիզմներու ուղեցոյցը: Ան զանազան առիթներով կը յայտարարէ. «Բոլոր սպիտակամորթ մարդիկ ծագած են թուրքերէ» (սա, այսպէս կոչուած, «թրքական աշխարհ» ունենալու մաղթանքն է):

Թիւրքէշ շատ մօտ կապեր հաստատած էր թրքական այլ հանրապետութիւններու և թուրք ժողովուրդի

հետ, միշտ կը կանգնէր այդ երկիրներուն կամ երկրամասերուն դրօշակներուն ներքեւ և կ'արտասանէր նոյն խօսքը. «Այսօրուան Թուրքիոյ սահմաններէն դուրս մնացած միւս թիրքերով հետաքրքրուիլը և անոնց օգտին անկախութեան ու խաղաղութեան համար ձեռքէ եկածը ի սպաս դնելը ամէն թուրք ազգայնականին շնորհալի մէկ պարտականութիւնն է»:

Ալփարսլան Թիրքէշի այլ պատգամներէն են.

- «Մարդկութեան՝ աշխարհի ամէնէն պատուաւոր ընտանիքը թուրք ազգն է» («İnsanlık aleminin en şerefli bir ailesi Türk Milletidir»):

- «Ինը ջահ կը նշանակէ թրքական իտեալիզմ» («Dokuz işik demek, Türk ülkesi demektir»):

- «Ամէն անձ, ամէն ոք մեր թշնամիներուն դիմաց կենդանի քարոզչական միջոց ըլլալու պարտաւոր է» («Her şahıs, her kişi, düşmanlarımıza karşı canlı bir propaganda vasıtası olmak zorundadır»):

- «Բոլորդ մէկական թուրք դրօշն էք: Դրօշակը չպիտէր, չաղտոտէր, գետին չձգէր» («Hepiniz birer Türk Bayrağı'sınız. Bayrağı lekelemeyin, kirletmeyin, yere düşürmeyin»):

- «Իսլամութիւնը ձեռք առնելով թրքութիւնը մոռնալը դաւաճանութիւն է, ասոր հակառակն ալ՝ նոյնքան յանցանք և դաւաճանութիւն» («İslamiyet'i ele alıp Türklüğü inkar etmek ihanettir. Bunun terside aynı deduced gâflet ve ihanettir»):

Թիրքէշ, իր նախահայրերուն պատգամին հաւատարիմ, որպէսզի թուրքիզմը աւելի զօրացնէ և անքակտելի պահէ, կը պատգամէ, որ ԹՐԳՈՒԹԻՒՆԸ մեր մարմինն է, իսլամութիւնը՝ հոգին: Առանց հոգիի մարմինը դիակ է («TÜRK LÜK bedenimiz, İslamiyet ruhumuzdur. Ruhsuz beden ceset olur»):

Թուրքիոյ նախկին նախագահներէն Ճևտէթ Սունայի (29 մարտ 1966 -28 մարտ 1973) հաւաստիացումը հայկական կոտորածներու մասին առիթով մը կը ներկայանար, երբ, կատողած Թուրքիոյ մէջ քիւրտերու ներկայութենէն, կ'արտայայտուէր, որ հետանան անոնք, քանի դեռ թուրք ազգը չէ գայրացած, որովհետև երբ իրենք կը գայրանան, առիծներ կը դառնան, թող քիւրտերը իրենց մասին հայերուն հարցնեն:

Թուրքերը, ինչպէս իրենց նախորդները, ոչ միայն ցեղասպանութիւն ծրագրած և գործադրած են հայութեան դէմ, այլև յափշտակած են հայապատկան հողամասեր, իւրացուցած են հայկական հարստութիւն ու մինչև այսօր կը շարունակեն ցեղասպանական նոյն վարքագիծը՝ փորձելով հայութեան ամէն հետք ջնջել Արևմտահայաստանի մէջ: Անոնք կը սպառնան հայութեան՝ առանց շեղելու նոյնիսկ գիծ մը համաթրքական գաղափարներէն:

Սակայն այսօր համաշխարհային չափանիշներով նկատելի է, որ թուրք և ազերի պետական գործիչներ քաղաքական հասունութիւն կը ցուցաբերեն, մասաւանդ Հայկական հարցի առնչութեամբ: Իրենց նախնիներու յանձնած նուէրին կ'ուզեն լաւ ձևով տէր կանգնիլ: Արդ, ամէն տեսակի քաղաքական մօտեցում. յաճախակի հայ-թուրք յարաբերութիւն անուան տակ սաղորանքներ, հայերու պարտադրել, որ ճանչանան



Գորշ գայլ Էրդողանը

Թուրքիա «ամբողջական» հողերով, կրօնական միութեան ներկայանալ որպէս աշխարհիկ (laic), «ասիլ» ժողովուրդ, որ յառաջսաղացք պիտի արձանագրէ համաթրքական երազներու իրականացման ճամբուն վրայ:

Հայկական հողերու՝ Նախիջևանի և Արցախի մասին իր տեսակէտը արտայայտող՝ Ատրպէյճանի «Ժողովրդային ճակատի» անդամ Կամիտ Խերիչի (Gamid Khérichi) պիտի ակնարկէր, որ Ատրպէյճան, Կիրկիզիա, Վոլկայի շրջանը, Թուրքմենիստան, Եւքրոսիան, Պաշքիւրիան, Ղազախստանը և Հարաւային Կովկասը՝ բոլորն ալ թրքական հողամասեր են, և իրենք որոշած են զանոնք չզիջիլ ունէ մէկուն, ով ալ ըլլայ ան: Բնական է, որ իրեն նուիրուած հողերը Խերիչի չէր ուզէր տալ ոչ մէկու:

Թուրքիոյ անցեալի վարչապետ Թուրքիյոս Էօզալ³ համաթուրանականութեան ջատագովներէն ոչինչով ետ կը մնար իր նախահայրերէն, հայրերէն ու գործակիցներէն շատերուն հետապնդած «վեհ» գաղափարներով... համաթուրանականութեան հանդէպ «երկիւղածութեամբ» ու «հաւատքով», երբ այլ առիթով մը կը պատասխանէ լիբանանեան «Սաֆիր» թերթի թղթակից Սաատ Մէհեոյի հարցումներուն՝ յայտարարելով. «Մենք կրնանք ուժերու համեմատութիւնը փոխել աշխարհի մէջ, եթէ մեր դաշնակիցները (Միացեալ Նահանգները) գիտակցին մեր դերի կարևորութեան: Թրքական ծագումով 87 միլիոն հայրենակիցներ կան Խորհրդային Միութեան մէջ: Իրանի բնակչութեան կէսը թուրքեր են, իսկ Չինաստանի մէջ ունինք 15 միլիոն թուրքեր: Կը տեսնեմ, Թուրքիա եթէ ուզէ, իր դաշնակիցներու համաձայնութեամբ շատ բաներ կրնայ շարժել միջազգային մակարդակի վրայ»⁴:

Եւրոպայի թրքական դաշնակցութեան (Ֆետերասիոն) նախկին նախագահներէն Հիքմէթ Եիլուրզլի 1993ին առիթով մը կը բացատրէ Եւրոպայի մէջ թուրքերու դաստիարակութեան և կրթութեան առնչութեամբ, որ թուրք երեխաները պէտք է դաստիարակուին

խլամով և սորվին իրենց (թրքական) պատմությունը, որպեսզի կարողանան հակազդել կրոնական մշակույթի քրիստոնեական ուսմունքներուն⁵:

11 մայիս 1996ին՝ Պեղիքայի թրքական դաշնակցության՝ «Գորշ գայլերու» միության հինգերորդ համագումարին, «Ազգային շարժում» կուսակցության ղեկավար Ալիարսլան Թիլքեշ կ'արտասանե զգայացունց հետևեալ խօսքերը. «Մենք՝ թուրք ազգի զաւակներս, կը ներկայացնենք քաղաքակրթութիւն, որ դարեր շարունակ ծառայած է մարդկութեան: Մեր մէջ կը վառի զօրաւոր ազգ ու պետութիւն ստեղծելու փափագը, ազգ ու պետութիւն, որ աստուածավախ ու բարձր բարոյականութեան տէր են: Այս նպատակին համար մենք անդուլ ու անդադար կ'աշխատինք ու այդպէս ալ կը շարունակենք աշխատիլ: Ոչ մէկ արգելք կարող է մեր առջև կենալ: Ոչ մէկ ուժ կայ աշխարհի մէջ, որ կարողանայ մեզի արգիլել մեր սուրբ նպատակին հասնելու: Այդպիսի ուժ երբեք չէ եղած ու երբեք ալ չի կրնար ըլլալ»: Ալիարսլան Թիլքեշ 1996 թ. օգոստոսին կ'արտասանէ ազգայնամոլ այլ ճառ մը՝ օգտագործելով կրօնը՝ կարծէք յիշեցնելով խոճա շէյխ ուլ իսլամ Հասան Ֆեհմին: Թիլքեշ կ'ըսէ, թէ «թուրք մեծ ազգին փայլուն ապագայ կը սպասէ: Մենք կը վերացնենք բոլոր խոչընդոտները և հաշուի կը նստինք երկպառակութիւն սերմանողներու ու դաւաճաններու հետ: Մենք կը կատարենք Մեծ Մարգարէին կողմէ մեզի վստահուած այս մեծ առաջադրանքը»:

Ալիարսլան Թիլքեշ 1996 թ. օգոստոսին Թուրքիոյ Քայսերի⁶ նահանգի մէջ գտնուող Էրճիէս լեռան վրայ ելոյթ ունեցաւ տասնեակ հազարաւոր գորշ գայլերու համար, որոնցմէ շատերը եկած էին Եւրոպայէն: Ան, լիցքաւորուած համաթրքական երազներով, յայտարարեց. «Ինծի համար մեծագոյն երջանկութիւն ու պարծանք է, որ Էրճիէսի նուաճումի եօթներորդ համագումարին ձեր մէջ ներկայ կը գտնուիմ: Ո՛չ մէկ ուրիշ տեղ թրքական բարոյական արժէքներն ու թրքական առաքինութիւնը այսպէս գեղեցիկ կերպով չեն միաւորուած իսլամի բարձր արժէքներու հետ:

Ուրիշ ոչ մէկ տօնախմբութիւն կայ, որ այս միաւորումը այսպիսի գեղեցիկ կերպով տեսանելի դարձնէ: Այս բանին համոզուած եմ: Այս տօնախմբութեան ոգիով ասիա ձեզի բոլորդ սիրով ու յարգանքով կ'ողջունեմ: Օրինեալ ըլլայ այս եօթներորդ համագումարը:

Ինչպէս գիտէք, օգոստոս ամիսը թուրք ազգի հազարաւոր տարիներու պատմութեան ընթացքին եղած է յաղթանակի ամիս: Թուրք ազգը անթիւ անհամար յաղթանակներ տարած է Խաղաղ ովկիանոսէն մինչև Ատլանտեան ովկիանոսի միջև ինկած լայնածաւալ տարածքին:

Այս համագումարը մենք կազմակերպած ենք արդէն եօթներորդ յաջորդական տարուան համար Էրճիէսի Թեքիր բարձրավանդակի վրայ, այսինքն՝ լեռան մը, որ այսպէս, ուղղակիօրէն Անատոլի (Արևմտեան Հայաստան – Ա. Գ.) սիրտէն վեր կը բարձրանայ: Իզուր չէ, որ այս համագումարը մկրտած ենք Յաղթանակի համագումար անունով: Թուրք մեծ ազգը իր կրօնական ու բարոյական բարձր

յատկութիւններով փայլուն յաղթանակներ տարած է, յաղթանակներ, որոնք արդիւնք են անոր ստեղծած քաղաքակրթութեան: Այսօր մենք հաւաքուած ենք այստեղ՝ թրքական այդ մեծ յաղթանակները տօնելու և անոնց յիշատակը վառ պահելու:

Կեցցէ՛ մեծ Թուրանը:

Թուրք մեծ ազգին փայլուն ապագայ կը սպասէ: Մենք կը վերացնենք բոլոր խոչընդոտները և կ'ոչնչացնենք երկպառակութիւն սերմանողները, անջատողականներն ու դաւադիրները: Մենք կ'իրականացնենք այս մեծ առաջադրանքը, որ մեզի յանձնարարած է Մեծ Մարգարէն: Ողջոյն այս հողագունդին վրայ գտնուող բոլոր թուրքերուն: Մենք կը կիսենք Խրիմի մեծ զաւակ Գասպիրալի Իսմայիլ պէյի կարգախօսը՝ «Մէկ լեզու, մէկ գաղափար, մէկ գործ»: Սիրոյ այս կրակը մենք կրած առաջ կը տանինք մեր իտէալի դօշը: Ահա կը ծագի մեր ազգի երջանկութեան շրջանը:

Մահ Փէ. Քա. Քա.ին:

Երբ մենք իշխանութեան գլուխ գանք, Թուրքիան ամբողջ թուրք աշխարհի շարժիչ ուժը պիտի ըլլայ՝ սկսած Պալքաններէն մինչև Միջին Արևելք: Մենք ամէն ինչ ըրած ու պատրաստած ենք, որպէսզի Թուրքիան վերստին ճիշդ ուղիով ընթանայ: Բաւական է միայն ակնարկ մը ձգէք այս հոյակապ համագումարին, որպէսզի ըմբռնէք, թէ մենք միասնաբար ինչեր չենք կրնար ընել»⁷:

1997ին Հիլուերսի (Հոլանտա) մէջ խօսք կ'առնէ թրքական կրօնական բարձր պաշտօնեայ Ապտուլլահ Մեզկին՝ ներկաներուն յղելով Թուրանի իրականացման պատգամը. «Այժմ, երբ Խորհրդային Միութիւնը փլուզուած է, մինչև թրքական աշխարհի միաւորումը, ասիա, բան չէ մնացած: Մեծ Թուրանի գաղափարը, որ մէկ տեղ կը հաւաքէ շուրջ 250 միլիոն թուրք բնակչութիւն, մօտաւորաւ է: Սակայն կան մարդիկ, որոնք կը ձգտին մեր առաջխաղացումը խանգարել: Այդ պատճառով անոնք երկպառակութիւն կը սերմանեն թուրք ազգին մէջ: Այն իրողութիւնը, որ ալիքներու մասին շատ անելի նիւթ լոյս տեսած է Ռուսաստանի մէջ, քան Թուրքիոյ, ինքնին շատ բան կ'ըսէ.... Այս բոլորին յետին նպատակը այն է, որ կանխարգիլուի Մեծ Թուրանի իրականացումը: Սակայն անոնք չեն յաջողիր: Թուրքիոյ մէջ ամէն ոք՝ նախագահէն բռնած մինչև ամենաջրաւոր անհատը, լեցուած է միմիայն մէկ գաղափարով՝ Մեծ Թուրանի ստեղծում, որ կը տարածուի Ադրիական ծովէն մինչև Չինական պարիսպը»⁸:

Ժամանակի ընթացքին կը տեսնենք, թէ Թուրքիոյ առաջնակարգ դէմքեր՝ նախագահներէ սկսեալ մինչև բարձրաստիճան այլ պաշտօնեաներ, աշխարհի աչքին առջև, սկսած միջազգային և այլ հարթակներէ, առանց վարանելու յայտարարած են համաթրքական և համաթուրանական հին-նոր մեծ երազը:

28 մայիս 1992ին թուրք-նախիջևանեան սահմանին վրայ՝ Արաքսի ձախ ափին, Թուրքիոյ վարչապետ Սուլէյման Տեմիրել, հաւաքուած հազարաւոր ատուր-պէճանցիներուն դիմելով, կը բացագանչէր. «Սիրելի ատուրպէճանցի թուրքեր, սիրելի նախիջևանցի

թուրքեր, մենք այստեղ ենք՝ ձեզի ըսելու, որ դուք մինակ չեք: Արագի վրայով այսօր մենք կը բանանք յոյսի կամուրջը, որ Եգեական ծովէն մինչև Չինաստան ճանապարհի բանալու առաջին քայլն է»⁹:

Տեմիրել իր նախագահութեան ընթացքին (1993-2000) ևս նոյնանման յայտարարութեամբ մը սահմանեց այն աշխարհագրութիւնը («Ադրիականէն մինչև Չինաստանի մեծ պարիսպը»)՝¹⁰, ուր Թուրքիան կը տարածուի:

Թուրքիա Եւրոպական միութեան անդամ ըլլալու համար երկրին օրէնքները բարեկարգելու նպատակով իր քիւրտ քաղաքացիներուն շնորհեց իրենց զաւակներուն քրտական անուններով կոչելու օրէնքը (նախապէս արգելուած): Այստեղ ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք համաթրքութեան ծրագրին հետևող և այն իրագործող Թուրքիոյ կառավարութեան որոշումը: Նոր օրէնքին մէջանը դեռ չգործած՝ Թուրքիոյ կառավարութիւնը որոշեց նոր սահմանափակումներ դնել անոնց առջև: 24 սեպտեմբեր 2003ին Թուրքիոյ ներքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, թէ քիւրտերը կրնան քրտական անուններով կոչել իրենց զաւակները, սակայն չպէտք է գործածեն այն տառերը, որոնք թրքերէնին մէջ համահաւասար հնչիւններ չունին: Անգլերէնով տրուած լուրին մէջ նշուած են Q, X և W տառերուն պարագաները:

Թուրքիոյ կրթութեան նախարար Հիւսէյն Չելիք 14 ապրիլ 2003ին հրապարակեց հրա-մանագիր (շրջաբերական) մը՝ ուղղուած Թուրքիոյ բոլոր դպրոցներուն (ներառեալ հայկական), որով աշակերտներուն կը հրահանգէր Հայոց ցեղասպանութիւնը մերժող և ուրացող շարադրութիւններ գրել: Թուրք ուսուցիչներ, որոնք հարցականի տակ առին հրամանագիրին պատշաճութիւնը, պաշտօնազրկուեցան: Այս քաղաքականութիւնը, անկասկած, մշակուած էր փանթուրքիստ պետական բարձրաստիճան պաշտօնատարներու և ոչ տեղական պաշտօնատարներու կողմէ:

Նոյն թուականին Պոլսոյ Եշիլ գիւղ շրջանին մէջ տեղի ունեցած Ս. Խաչ դպրեվանքի յիսնամեակի պարահանդէսին ներկայ գտնուեցաւ Թուրքիոյ կրթութեան նախարարը և խօսք առնելով անդրադարձաւ իր ստորագրութեամբ դպրոցներուն ուղարկուած շրջաբերականին և անոր յառաջացուցած զայրոյթի ալիքին: Ան վստահեցուց, թէ շրջաբերականին նպատակը Թուրքիա ապրող հայերուն, ինչպէս նաև արտասահմանի մէջ Թուրքիոյ նկատմամբ բարեկամութեան զգացումներ տաժող հայերուն վնաս հասցնելը չէ: Ան ակեցուց, թէ շրջաբերականին թիրախը այն հայերն են, որոնք, հին խնդիրները մէջտեղ բերելով, կը փորձեն մթնոլորտը պղտորել: Չելիք իր խօսքը փակեց և իր դրկած շրջաբերականը արդարացուց՝ ըսելով, որ պէտք է հին և դժման օրերը մոռնալ, որովհետև հին խնդիրներ հետապնդողները բան պիտի չշահին:

2003 թ. սեպտեմբերին Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան Կ. Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ

արք. Մութաֆեանի հետ ունեցած իր հանդիպման ընթացքին վերահաստատեց Հայաստանի հետ սահմանները փակ պահելու Անգարայի դիրքորոշումը և ըսաւ, որ Թուրքիա իր բոլոր դրացիներուն հետ պարբերաբար կը լուծէ երկկողմանի հարցերը՝ ձևաորելով բարիդրացիական յարաբերութիւններ, սակայն որովհետև Հայաստան չի ճանչնար Թուրքիոյ սահմանները, կարելի չէ այդպիսի յարաբերութիւններ ձևաորել Հայաստանի հետ, հետևաբար կարելի չէ բանալ սահմանները: Էրտողան ակեցուցած է, որ պատմական ցաւալի դէպքերը պատմութեան պէտք է յանձնենք և թոյլ տանք, որ պատմաբանները զբաղին այդ հարցերով, իսկ բոլորս նայինք դէպի առողջ ապագան: Բացի այդ՝ Թուրքիոյ վարչապետը, այս հանդիպումը առիթ գտնելով, յանձնարարած է, որ նոյնը ընեն նաև Սփիւքի քաղաքական շրջանակները: Մէկ խօսքով՝ գերեզմանել Հայ դատը:

1 հոկտեմբեր 2003ին Թուրքիոյ նախագահ Ահմետ Նեճմեթ Սեզեր 2004 տարեշրջանի Թուրքիոյ Ազգային մեծ համաժողովի (TBMM) բացման իր ճառին մէջ, անդրադառնալով Հայաստանի հետ Թուրքիոյ յարաբերութիւններուն, ըսաւ. «Թուրքիա նպատակ ունի բարելաւելու յարաբերութիւնները Հայաստանի հետ, սակայն այդ նպատակին իրագործումը կախեալ է այն հարցէն, թէ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը որքանով կը համապատասխանէ օրէնքի սկզբունքներուն, և Հայաստան որքան կը ցանկալ լուծել դրացիներուն հետ իր հարցերը»:

Ըստ Սեզերի՝ Հայաստան պէտք է օգտագործէ վերջին առիթը՝ իր անցեալին հետ հաշտուելու համար, և հարցը ձգէ պատմաբաններուն: Այդպիսի դրական զարգացում մը գործնական ներդրում կ'ըլլայ ամբողջ Հարաւային Կովկասի կայունութեան և բարգաւաճման մէջ¹¹:

Միւս կողմէ՝ 19 յունուար 2007ին պոլսահայ երկլեզու «Ալսու» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքը թրքական ազգայնամոլութեան և անհանդուրժողականութեան զոհ դարձաւ իր իսկ գլխաւորած թերթին խմբագրատան առջև:

Տինքի սպանութենէն անմիջապէս յետոյ հրապարակուեցան լուսանկարներ՝ վկայելով, որ ոճրագործին նկատմամբ հերոսական վերաբերում ցոյց կու տային անոր արգելափակած ոստիկանները: Նոյն օրերուն ֆոթպոլի ամբոխը բարձրաձայն կը գոռար «Բոլորս թնորք ենք»՝ ի հակազդեցութիւն Տինքի յուղարկաւորութեան սպանութիւնը դատապարտող հարիւր հազարաւորներու բարձրացուցած «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանդ Տինք ենք» կարգախօսին:

Հրանդ Տինքի մահուան տարեկիցը չբոլորած՝ համացանցի «Եւոմիւպ» հարթակին վրայ միլիոնաւոր մարդիկ ականատես եղան Տինքի դիակը ներառած՝ թրքական վրէժխնդրութիւնն ընդգծող տեսարաններուն: Երգը ցեղային ատելութիւն և վայրագութիւն կը քարոզէ:

Երիզին մէջ կը տեսնուին Հրանդ Տինքին դիակը և զայն սպաննած պատանին՝ կանգնած թրքական

դրոշակին առջև այն միջոցին, երբ երգին մեջ կ'ընտի. «Երբ որ հայրենիքը ծախե, այդ վայրկեանին իսկ կը վերջանայ անոր գործը»: Բնականաբար, հոն կը գովաբանուի հայ խմբագիր Հրանդ Տինքը սպաննած պատանին՝ Օկին Սամաթը:

Թուրք երգիչ Իսմայիլ Թիւրիթի «ՓԼԱՆ ՄԻ ԸՆԷՔ, ՓԼԱՆ» երգին հեղինակը Օզան Արիֆն է: Վերջինս յատկապէս թուրքիզմի և թուրանականութեան ջատագով և այս գաղափարախօսութիւններուն խօսափողն ու անգուգական մեկնաբանն է:

Այստեղ, բնականաբար, նպատակահարմար կը նկատենք վերոնշեալ երգին բառերը հայերէն թարգմանաւ՝ ներկայացնել: Համաթրքութիւնը պաշտպանողներու և ծրագրին հետևողներու կարծիքն է այս, որ կը տրուի ստորև:

ՓԼԱՆ ՄԻ ԸՆԷՔ, ՓԼԱՆ ¹²

Փլան (ծրագիր-դաւ) մի՛ ընէք.
Ձեր փլանը չի քալեր Սև ծովու ափին¹³:
Պոռնկացումը, սուտը
Արմատ չեն նետեր Սև ծովուն ափին:
Ո՛չ ամերիկացին, ո՛չ ռուսը
Թող լարեն իրենց ծուղակները,
Որովհետև պառակտումի առուէն
Հոսող ջուրը չի թափիր Սև ծովու ափին:
Հրաժարեցէ՛ք զանգեր հնչեցնելէ,
Հայասէր ըլլալէ¹⁴,
Մեր ազգը այսպիսի տոլմա կուլ չի տար
Սև ծովու ափին:
Օր մը¹⁵ այսպէս թող խօսին,
Օր մը այդպէս թող խօսին,
Ինչ ալ ըսեն ֆաթիհներն ու եասինները¹⁶,
Չեն սպառիր Սև ծովու ափին:
Պատիւդ, վարկդ խնայող առարկայ երբ դառնան,
Ջոհէ՛ կեանքդ, հոգիդ:
Ոչ ոք հայրենիքը կը ծախէ Սև ծովու ափին:
Երբ որ հայրենիքը կը ծախէ,
Նոյն վայրկեանին անոր գործը կը վերջանայ¹⁷:
Թրքական և իսլամական արևը
Չի խաւարիր Սև ծովու ափին:
Երբ այսպիսի կեցուածքով մեզի մօտենան¹⁸,
Նոյնիսկ եթէ Պուշը հօրեղբայրդ է,
Ձեր փքուն երևոյթը
Հինգ դուրուշ չ'արժէր Սև ծովու ափին:
Հասկցանք, որ ոչխարի մորթ կը կրէք,
Սակայն մեզի յայտնի է ձեր պոչին ցաւը:
Բայց գիտցէ՛ք, որ ձեր ուժն ու կարողութիւնը
Բաւարար չեն խուճապ ստեղծելու Սև ծովու ափին:

Թիւրիթ, որ երգի հեղինակ Օզան Արիֆի հետ ներկայացաւ դատարան՝ բացատրելու համար երգին բառերուն իմաստը, ըսաւ. «Նոյնիսկ եթէ քառասուն գլուխ ունենամ, և բոլորն ալ կտրեն, երգին տառերէն մէկուն համար իսկ ներողութիւն պիտի չխնդրեմ: Ո՛վ վստահեցաւ երգին պատճառով»: Թիւրիթ նաև աւելցուց՝ ըսելով, թէ անոնք, որոնք խօսքի

ազատութեան հաստատումը կ'ուզեն, պէտք է նաև յարգեն իր խօսքի ազատութիւնը և դէմ չարտայայտուին իր երգին:

Փաստօրէն, Տինքի սպանութիւնը շարժիչ գործօնի դեր կատարած էր: Որովհետև տեղի ունեցած էր թրքական խորքային պետութեան և թիւ 301ի գաղափարախօսութեան գործած աւերին ազդեցութեան տակ, իբրև ազգայնամոլական շարժումի տարերային խուճապի վերադրսնորում:

Թուրք ազգայնամոլներու վրդովմունքը և զայրոյթը վերջերս զգալի եղան յատկապէս երկու պատճառով: Առաջինը՝ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած Հայոց ցեղասպանութեան հարցով հայերէն ներողութիւն խնդրելու համացանցային (internet) արշաւը: Այս հարցը տակաւին կը շարունակէ զբաղեցնել Թուրքիոյ քաղաքական կեանքը:

Երկրորդը՝ Թուրքիոյ և Հայաստանի միջև սրտերու, դուռներու և պատուհաններու վերաբացման քայլերը, Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի պատգամը Թուրքիոյ խորհրդարանէն ներս և այլ հարցեր:

Ատրպէյճանի նախագահին այն յայտարարութենէն ետք, թէ յուսախաբ է Հայաստանի հետ իր յարաբերութիւնները բնականոնացնելու Թուրքիոյ քայլերէն, ծայրայեղ ազգայնական թուրք քաղաքագէտներ և յօդուածագիրներ մտահոգութիւն յայտնեցին, որ Պարաք Օպամայի և հայ պաշտօնատարներու՝ Թուրքիա այցելութիւնը կրնայ վստահել Թուրքիոյ և Ատրպէյճանի միջև պատմական յարաբերութեանց: Հետևաբար ծայրայեղ ազգայնական օրաթերթեր՝ «Օրթատոդու», «Ենիշաղ» և այլն, ու հանդէսներ շատ խիստ կերպով քննադատեցին եղածները: Անոնց յայտարարութիւնները մէկ էր. «Երբ անցնող քանի մը օրուան զարգացումները նկատի ունենանք, պիտի տեսնենք, թէ Թուրքիոյ և Ատրպէյճանի միջև եղբայրութիւնը լուրջ հարուած մը ստացաւ»:

Այս խնդրին շուրջ ամէնէն լուրջ մտահոգութիւնը եկաւ համաթրքութեան ջատագով «Ազգայնական շարժում» կուսակցութեան ղեկավար Տեյքե Պահչելիէն: Ան իր կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ժողովին ընթացքին յայտնեց. «Հայաստան շրջանային խաղաղութեան մեծագոյն արգելքներէն մէկն է, ներկայիս ատրպէյճանական հողամասերու մէկ հինգերորդը գրաւած է: Աւելին՝ ան միջազգային բեմին վրայ Թուրքիան ցեղասպանութեամբ յանցաւոր յայտարարելու անշնորհք արշաւ մը կը հետապնդէ: Ձևացնելով, թէ այդպիսի իրականութիւններ բնաւ գոյութիւն չունին, Միացեալ Նահանգներու նախագահը խորհրդարանին մէջ իր ճառին ընթացքին Թուրքիան հրաւիրեց իր պատմութիւնը դիմակայելու: Ասիկա անարգանքի արարք մըն է, գոր չենք կրնար ընդունիլ»:

Միւս կողմէ՝ կ'արժէ նշել գործնականապէս երևացող և խիստ կարևոր նշանակութիւն ունեցող՝ 1 հոկտեմբեր 2010ին Անիի Մայր տաճարի մէջ Թուրքիոյ «Ազգայնական շարժում» կուսակցութեան կողմէ կազմակերպուած նամազը, որուն շուրջ բարձրացած

աղմուկը Ադթամարի Սուրբ Խաչ եկեղեցիի մէջ տեղի ունեցած խեղկատակութեան շարունակութիւնն է՝ հակառակ յաջորդականութեամբ:

Այն փաստը, որ Թուրքիոյ մշակոյթի նախարարութիւնը թոյլ տուած էր գորշ գայլերու առաջնորդին իր ոհմակին հետ միասին կազմակերպել այս խեղկատակութիւնը, կը վկայէ, որ տուեալ ձեռնարկը նախապէս համաձայնեցուած էր երկրի կեդրոնական իշխանութիւններու հետ: Աւելին՝ ակնյայտ կը դառնայ, որ Սուրբ Խաչի մէջ սեպտեմբեր 19ին կազմակերպուած պատարագի և 1 հոկտեմբերին տեղի ունեցած նամագի միջև գոյութիւն ունի յստակ կապ ու փոխադասմանաւորութիւն:

Այս առիթով Թուրքիոյ մէջ հնչող դատողութիւնները, որ իբր թէ իշխող «Արդարութիւն և զարգացում» կուսակցութիւնը համաձայն չէ ընդդիմութեան առաջնորդներէն մէկու՝ Տւլէթ Պահչելիի նախաձեռնութեան, որ զուտ ներքաղաքական, աւելի ճիշդ՝ նախընտրական նպատակներ կը հետապնդէ, գրոշի արժէք իսկ չունին: Պարզապէս պատարագի արարողութիւնը կազմակերպուած էր հիմնականին մէջ միջազգային հանրութեան համար, իսկ Անիի՝ նամագի ներկայացումը նախատեսուած էր առաւելապէս հայերու համար:

Առ այդ՝ նախ անհրաժեշտ էր, որ որևէ խայծ տրուէր հայերուն, իսկ անոնք հազարներով մասնակցեցան Ադթամարի միջոցառումին: Այնուհետև հարկ էր ստեղծել «հակակշիռ»՝ ի դէմս «թուրք ազգայնականներու», որոնք խիստ զայրացած էին Արևմտեան Հայաստանի մէջ ցեղասպանութենէն յետոյ դադրած պատարագի արարողութեան վերսկսումին: Թրքական դիտանկիւնէ բնական է, որ անոնք ալ պէտք է կազմակերպէին իրենց նամագը այն վայրը, որ ամէնէն աւելի կարող է շօշափել հայերու ազգային արժանապատուութիւնը, այսինքն՝ Անիի Մայր տաճարի մէջ: Մանաւանդ որ Անիի մօտակայքը կանգնեցուած է հայերու կողմէ «կոտորուած» թուրքերուն նուիրուած յուշարձան:

Արդարեւ, նշանակուած տարածքի ու անոր յուշարձաններուն նկատմամբ յաւակնութիւններ ունեցող այս երկու «ծայրայեղական խմբաւորումներու» հանդէպ հաւասարապէս «հանդուրժողական» Թուրքիոյ իշխանութիւնները երկուքին առջև ալ կանաչ լոյս կը վառեն: Աւելին՝ նամագին կը հրաիրեն նաև հարևան Ատրպէյճանի ծայրայեղականները, որ անոնք ալ աղօթեն Ղարաբաղի մէջ «կոտորուած» ատրպէյճանցիներու համար:

Վերոնշեալ օրերուն Միացեալ Նահանգներու մէջ դասախօսութիւններ տուող Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէտ Տաւութօղլուն կը բարբաջէ հայ-թրքական արձանագրութիւնները ուժի մէջ ըլլալու, բանակցային գործընթացը շարունակելու իրենց պատրաստակամութեան մասին: Հակառակ կարծիքի գոյութեան մասին ամենաչնչին ակնարկի պարագային գործի կը դրուի շանթածք:

Անիի Մայր տաճարին մէջ կազմակերպուած սեղմութեան խառնածողովը ցոյց կու տայ, որ 1000

տարուան ընթացքին մեր քոչուոր դրացիները մնացած են քրիստոնէական քաղաքակրթութեան նոյն դիմելիմ թշնամիները:

12 հոկտեմբեր 2012ին՝ Կ. Պոլսոյ մէջ կայացած թուրք-ղազախական գործարարական համաժողովի ընթացքին, Ղազախստանի նախագահ Նորսուլթան Նազարպանը ամպագորգոռ յայտարարութիւն արեց. «Աւելի քան 200 միլիոն մեր ցեղակիցները կ'ապրին Միջերկրական ծովէն Ալթայ երկարող տարածքին մէջ: Անոնց համախմբման իբրև արդիւնք մենք կը դառնայինք աշխարհի հզօր ու ազդեցիկ պետութիւններէն մէկը»:

Այս յայտարարութիւնը բաւական էր շշմեցնելու համար, սակայն Նազարպան աւելի առաջ գնաց. «Մենք կ'ապրինք համայն թուրք ժողովուրդի հայրենիքին մէջ: 1861ին, երբ սպաննուեցաւ վերջին զազախական խանը, մենք վերածուեցանք նախ Ռուսական կայսրութեան, ապա՝ Խորհրդային Միութեան գաղութի: Այդ 150 տարիներու ընթացքին զազախները մեծ ճիգերու գնով պահպանեցին իրենց լեզուն, կրօնն ու սովորոյթները: Բարձրեալի օրհնութեամբ 1991ին մենք հռչակեցինք մեր անկախութիւնը: Մեր նախնիները, երթալով պատմական հայրենիքէն՝ Թրքական խանութենէն, իրենց հետ տարին թուրք ժողովուրդին անունը: Մինչ այժմ թուրքերը իրենց լաւագոյն ճիկիթներուն (հմուտ և խիզախ հեծեալ, առաւելապէս՝ կովկասեան լեռնցիներու մէջ) կ'անուանեն «ղազախ», և մենք ճիշդ այդ «ղազախներն ենք»»:

Ծանոթագրութիւն

1. Ասգեան Ս., Թուրքիայի դերը հայ դատի հետապնդման պայքարում՝ պանթուրքիզմը իշխում է Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ, Հայկական հարցի պատմութիւն, խմբ.՝ Փիլոմման Ռուբինա, Եր., «Էտիք փրիւդ», 2002, էջ 228-263:
2. Տնւ «Le Monde diplomatique», février, 1990, էջ 11:
3. Վարչապետ ըլլալէ քսնի մը տարի առաջ:
4. 1981. صحيفة السفير اللبنانية.
5. Տնւ Ստեփան Բրամ, Մեհմեթ Ուզգեր, Գորշ գայլեր, Եր., 2003, էջ 52:
6. Կեսարիա, Քալաթովկիա, այժմ՝ Թուրքիոյ Քայսերի (Kayseri) վիլայեթի վարչական կեդրոնը:
7. Ստեփան Բրամ, Մեհմեթ Ուզգեր, նշ. աշխ., էջ 154-155:
8. Նոյն տեղը, էջ 139-140:
9. Tomas Goltz, Azerbaijan Diary, նշել հրատ. վայրը, թիւը, p. 212-213.
10. «Milliyet», 6 Ekim 2011.
11. Թրքական պատկերասփիտի «TRT 3» յատուկ կայանը, որ յատուկ յատկացուած է (TBMM)ի, 1 հոկտեմբեր 2003:
12. Թարգմանուած է հնարարութիւն քառացիօրէն՝ հայացնելով միայն այլապէս անհասկնալի թրքերէն դարձուածքները:
13. «Սեւ ծովու ամիս» ըսելով կ'ակնարկուի Թուրքիոյ՝ Սեւ ծովը եզերող շրջաններուն՝ Տրապիզոնի, ուր նիւթուեցաւ Հ. Տիւքը սպաննելու դատը:
14. Կ'ակնարկէ Տիւքի սպանութենէն ետք «Բուրսա Տիւք ենք, բուրսա հայ ենք» կարգախօսով ցոյցերուն:
15. Թրքերէն՝ օկիւն, որ նաեւ անունն է Տիւքը սպաննած երիտասարդին՝ Օկիւն Սամաթի:
16. Եսայի Հայա, Սամաթի դէկլարարն ու մեղալիցը:
17. Տեսահոլովակին մէջ հոս կը ցուցադրուի Տիւքի դիմելի լուսանկարը:
18. Կարելի է նաեւ թարգմանել՝ «Երբ այսպիսի կեցութեան մը մասին լուր ստանաք, լուրը մեզի հասնի...»: Տեսահոլովակին մէջ հոս կը ցուցադրուի Պուշին հետ Էրտողանին նկարը:

Մահմեդական բնակչության 1919 թ. հակահայկական խռովության ճնշումը Զոդ-Բասարգեչարի շրջանում և հայկական պետականության ամբողջականության վերահաստատումը (մաս 1)

Վանիկ Վիրաբյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության պետաքաղաքական կյանքի կարևորագույն բնութագրական գծերից էր հայկական պետականությունը ներսից կազմաքանդող ուժերի դեմ մշտական պայքարը: Ադրբեջանի և Վրաստանի հետ Տարածքային-սահմանային վեճերը ունեին հին արմատներ և մշտապես արտաքին-քաղաքական կողմնորոշումների հիմքում էին, որոնք առաջացան անդրկովկասյան երեք հանրապետությունների ի հայտ գալուն պես, երբ յուրաքանչյուրը ձեռնամուխ եղավ սեփական զինուժի ստեղծմանը:

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման տեսանկյունից առավել կարևորվեց այն շրջանների հարցը, որտեղ հայ բնակչության իրավունքների ոտնահարման ավելի մեծ սպառնալիք կար: Այդ շրջաններում ապրում էր մեծաթիվ մահմեդական բնակչություն, որը հաճախ բռնություն էր օրինապաշտ դիրքորոշում չէր դրսևորում օրինական իշխանությունների նկատմամբ: Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ Ներքին գործերի նախարարության և կանտոնավոր բանակի զորամասերի ձեռնարկած համատեղ միջոցառումների շնորհիվ Հայաստանից արտաքսվել են զգալի թվով մահմեդականներ, որոնք, կենտրոնանալով գլխավորապես սահմանամերձ գոտիներում, դարձել էին յուրահատուկ պայթուցիկ լիցքի կրող և ստեղծում էին խռովության օջախներ:

Դրան հաջորդեցին Սելիմի և ուրիշների ավազակախմբերի հաճախակի դարձած հարձակումները հայկական զորամասերի ու միլիցիաներների վրա Աղբաբայում, Զոդում, Զարուշատում և այլուր, որտեղ ադրբեջանական գործակալները մշտապես գաղտնի ժողովներ էին գումարում՝ ՀՀ կառավարությունը տապալելու սադրիչ կոչեր անելով: Դեռ 1918 թ. հուլիսին Ադրբեջանը սկսեց բողոքագրեր հղել Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով վերջ տալ Նոր Բայազետի գավառում մուսուլմանների նկատմամբ բռնություններին: Դրան ի պատասխան՝ ՀՀ կառավարությունը Ադրբեջանի կառավարությանը տեղեկացնում է, որ բռնության ենթարկված մուսուլման բնակիչները պետք է դիմեն ՀՀ կառավարությանը, այլ ոչ թե Ադրբեջանին՝ անթույլատրելի համարելով, որ Ադրբեջանի հայերը դիմեն իրենց, իսկ Հայաստանի մուսուլմանները՝ Բաքվին՝ դա համարելով միջամտություն միանգն երեքին գործերին: Հենց դրանով էլ բացատրվում է մահմեդական շարժումների ակտիվացումը 1919 թ.



ընթացքում: 1918 թ. երկրորդ կեսին և 1919 թ. սկզբին գրանցվեցին ՀՀ տարածքից մահմեդական բնակչության արտաքսման քիչ թե շատ նշանակալից դեպքերը և հակառակ հոսքը՝ Ադրբեջանի հայկական շրջաններից հայերի արտաքսումը Հայաստան: Հայաստանի տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիսարը 1919 թ. մարտի 11-ին ՆԳ նախարարին ուղղած զեկուցագրում ընդգծում էր, որ հայ-թուրքական բախումների ողջ ընթացքում ՀՀ սահմաններից արտաքսվել է 111.560 մահմեդական, որից 15 հազարը՝ քուրդ: Արտաքսված թաթարներից վերադարձել են 29 հազարը, իսկ քրդերը չեն վերադարձել: Կոմիսարը նշում էր նաև, որ Հայաստանի տարածքում մահմեդականներից ազատ գյուղերի թիվը հասնում է 248-ի, որոնցից 50-ը ավերված են, իսկ լիովին դատարկ 56 գյուղերը զբաղեցվել են գլխավորապես Թուրքահայաստանից, Կարսի մարզից եկած փախստականներով՝ 142 գյուղ: Հ. Հարությունյանը անհամաձայնություն է հայտնել վերն ասվածին՝ գտնելով, որ այն չի համապատասխանում իրականությանը, որ նման երևույթներ չեն եղել: ՀՀ կառավարությունը ձգտում էր սահմանամերձ գոտում բնակչությունը դարձնելու միատարր՝ ապահովագրելով երկիրը վտանգներից, որոնք բխում էին Ադրբեջանից և Թուրքիայից:

Ըստ 1919 թ. նոյեմբերի 10-ին Հովհ. Քաջագունու՝ ԱՄՆ-ի Մենատին ներկայացրած ՀՀ կառավարության հուշագրի՝ բուն Հայաստանի տարածքում մահմեդականների (թաթար, թուրք, թուրքմեն, կարափափախ) թիվը կազմում էր 588.000 կամ ողջ բնակչության 27 %-ը: Մահմեդականների այս զանգվածը բավական էր, որ ՀՀ-ն մշտապես տագնապի մեջ գտնվեր, մանավանդ որ այդ զանգվածին փորձում էին կազմակերպել Ադրբեջանից և Թուրքիայից ժամանած լրտեսները, զանազան էմիսարները՝ զին-

ված կեղծ փողերի հսկայական պաշարով, և դրդել ապստամբության օրինական իշխանությունների դեմ՝ սատարելով անջատողական տրամադրությունները:

Մահմեդական ընդվզումներ տեղի էին ունենում ամենուր, որտեղ կար մահմեդական քիչ թե շատ հոծ բնակչություն, որի դեմ պայքարելը դժվար էր, և նման խնդիրներ լուծելու համար հաճախ ներգրավվում էր գործ, որն էլ ոչ թե ուժեղանում, այլ թուլանում էր՝ մասնակցելով ներքին կոիվների: Դա շատ ցայտուն դրսևորվեց Զոդ-Բասարգեչարի /Վարդենիս/ խռովության ճնշման ժամանակ, երբ Ադրբեջանի Հանրապետությունը, հենվելով մահմեդական բնակչության վրա Սևանա լճի ավազանում, փորձեց հավակնություններ ներկայացնել ՀՀ օրինական տարածքի մի մասի նկատմամբ: Այս մասին Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «Թաթարները, կեղծում ունենալով Զոդը⁵, հոն հաստատած էին Ադրբեջանի իշխանությունը և ամուր փակած էին Զիանշիրի ճանապարհները. Բայազետի շրջանի Բասարգեչարի շրջանում, Սևանա լճից հիսուս մօտ 2000 քառ. վերստ տարածութեան վրայ գտնուող թաթար գիւղերը, որ անմիջապես կապուած էին Զիանշիրի հետ և սահմանակից Ադրբեջանին, իրենց յայտարարում էին ոչ թէ անկախ, այլ մասը Ադրբեջանի. հոն նստած էին Ադրբեջանի գործակալներ և պաշտօնեաներ, իսկ մեր պաշտօնէութիւնը մուտք չունէր այդ երկիրում: Այդ շրջանի կորուստը խիստ վնասակար էր Հայաստանի համար ոչ թէ տնտեսական, այլ ռազմական տեսակետից: Ադրբեջանը մտած էր լինում դրանով Սևանայ լճի ավազանը, նա կապ կարող էր պահել Զոդիսի վրայով Վեդիքասարի և Սադարակի հետ, ուրեմն և Տաճկաստանի հետ: Նրա առաջ բաց էին Հայաստանի բոլոր ճանապարհները և ուզած ատեն պիտի կարողանար կտրել Դարալագեզգի և Զանգեզուրի շրջանները, ինչպէս և Դիլիջանի և Երևանի շրջանները: Դա մի մուրճ էր՝ բարձրացուած հայկական գաւառների գլխին»⁶:

Ադրբեջանա-թուրքական այդ նկրտումների մասին տեղեկություններ հայթայթվեցին հետախուզական մարմինների կողմից: Սևանի ավազանի և ՀՀ-ի շուրջ ստեղծված այդ իրավիճակը լավ է ներկայացնում Տ. Դևոյանը. «Հետագայ դէպքերը հետևանք են մահմեդականների այն ծրագրի գործադրութեան, որով Ազերբեյջանը պետք է միանար Թուրքիայի հետ, և Հայաստանը պետք է չեզոքացուէր, սահմանափակուելով Սևանայ լճով, Երևանով ու Ալեքսանդրապոլով: Մինչդեռ ժամանակ բացարձակ կերպով պարզում է գոյութիւն ունեցող լրիւ կապը Ազերբեյջանի և Տաճկաստանի գործողութիւնների մէջ ու Ազերբեյջանի ղեկավարողի դերը բոլոր այն թշնամական գործողութիւնների մէջ, որ ուղղուած են անմիջականօրէն Հայաստանի դէմ այն միջոցին, երբ Թուրքիան ժամանակաւորապէս աւելի զբաղուած է իր ներքին գործերով և Փարսիի խորհրդածողովի որոշումներին դիմադրելու կազմակերպութեամբ»⁷: Այսպէս կոչված բասարգեչարյան իրադարձությունները մեծ աղմուկի պատճառ դարձան: Թուրքերը, անտեսելով

Հայաստանի իշխանությունների՝ զգաստության կոչող հորդորները և զգուշացումները, իրենց աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների և ադրբեջանական իշխանությունների դրդմամբ անթաքույց շարունակում էին փայփայել Ադրբեջանին միանալու հույսը և ծավալում հակահայկական-հակապետական ագրեսիվ գործողություններ Բասարգեչարի շրջանում:

Դատելով միլիցիայետների, գավառապետների և զինվորական մարմինների միջև եղած գրագրությունից՝ տագնապի նախանշանները զգացնել են տվել դեռևս 1918 թ. դեկտեմբերից 1919 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում՝ մինչև բասարգեչարյան մահմեդական հայտնի ընդվզումները, երբ թաթարական բեկերի հրահրմամբ բնակչությունը հայտարարեց, որ միանում է Ադրբեջանին: Ստեղծված իրավիճակում հատուկ ծառայությունները հարկադրված էին այս կամ այն վայրում Զանգիբասար, Կարս, Բասարգեչար և այլն, մերկացնել հակառակորդի ծպտված գործակալներին ու լրտեսներին՝ կանխելով նրանց հակահայ գործունեությունը:

Երբեմն էլ ՀՀ իշխանությունները բախվում էին «տեղական» բնույթի խնդիրների՝ կանխելով գավառական հայ իշխանավորների օրինազանցությունները: ՆԳ նախարարին հղած 1919 թ. գրության մեջ Գլխավոր շտաբի մի գնդապետ գրում էր, որ 3-րդ հետևակային բրիգադի պետի տեղեկություններով՝ Քարվանսարայի կոմիսարը կաշառքի դիմաց Ադրբեջանից Հայաստան քոչի համար ազատ բաց էր թողնում զինված մարդկանց: Պահանջ է դրվում անհապաղ միջոցներ ձեռնարկելու՝ դադարեցնելու զինված մարդկանց ապօրինի անցումը սահմանով⁸: Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետի օգնական պրապորշչիկ Հովսեփյանը հակահետախուզական բաժնին ուղղված գրությամբ հայտնում էր ադրբեջանա-թուրքական նկրտումների մասին Կարսի մարզում, ինչը հաստատում էր նաև Հայաստանում ֆրանսիական ռազմական ներկայացուցչության սպա Ա. Պուադեբարը⁹, որի տվյալներով 1918 թ. վերջերին - 1919 թ. սկզբներին թուրք գործակալները նշված տարածքում զբաղված էին ակտիվ քարոզչությամբ¹⁰: Հետախուզական ամփոփագրում հաղորդվում էր, որ Շուրայի (այսպես կոչված «Միլլի Շուրա», Կարսի մարզում գտնվող մահմեդական «ինքնավարությունը») նախկին «փոխպրեզիդենտ» Ալի Ռիզան, փախչելով Բաթումի բանտից, Թիֆլիսով անցել է Ղարաչախ, այնտեղից էլ՝ Ադրբեյջանի շրջան, ապա՝ Զարուշատով Օլթիի շրջան (1919 թ. հուլիս): Նշվում էր նաև, որ կասկածներ չկան, որ Ադրբեյջանը ձգտում է Ադրբեյջանի, Զարուշատի, Արդահանի և Օլթիի շրջաններում ստեղծելու «երկրորդ Ղարաբաղ», նկատվում է նաև վրաց-ադրբեյջանական դաշինք, և Ախալքալաքի գավառի սահմանամերձ Գորյովկա և Տրոիցկ գյուղեր են ժամանել ավելի քան 300 վրացի զինվորներ: Պրապորշչիկ Հովսեփյանը տվյալներ էր ներկայացնում թաթարների՝ քրդերի հետ համագործակցության մասին, հայտնում, որ այդ մասին գրույց է ունեցել

Էրզրումում գտնվող բրիտանական շտաբի գնդապետ Ա. Ռաուլենստոնի հետ¹¹: 1919 թ. մայիսի 24-ի օպերատիվ հետախուզական ամփոփագրում փոխգնդապետ Շնեուրը հաղորդում էր Կադգվանում, Մերդենեկում և Արդահանի շրջանում քուրդ-թաթարական և թուրք-վրացական ոտնձգությունների մասին՝ ավելացնելով, որ Արդահանի ուղղությամբ ուղարկվել է հայկական զորամաս¹²: Կարսի նահանգապետ Ստ. Դորդանյանը ՀՀ ՆԳ նախարարին ուղղված 1919 թ. օգոստոսի 22-ի զեկույցում հաղորդում էր Արդահանի շրջանում վրացական զորամասերի լրտեսական-հրահրիչ գործողությունների մասին¹³: Իրավիճակն արմատական փոփոխության չենթարկվեց նաև 1919 թ. երկրորդ կեսին. վրացիները շարունակեցին սադրանքները Արդահանի շրջանում: ՀՀ արտգործնախարարության գլխավոր քարտուղարը 1919 թ. սեպտեմբերին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարին հղած հեռագրում հայտնում էր, որ հայկական հակահետախուզության ձեռքն է ընկել Արդահանի վրացական ջոկատի պետ Կվիտաշվիլու ձեռքով գրված կոչը, ըստ որի՝ Վրաստանին միանալու համար Արդահանի շրջանի բնակիչների բարձրացրած աղմուկը ոչ այլ ինչ է, եթե ոչ վրաց պաշտոնատար անձանց կողմից նախապատրաստված սադրիչ գործողություն, որի մասին բողոք ներկայացվեց Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեին¹⁴: Հետախուզական բաժանմունքի 1920 թ. սեպտեմբերի 3-ի գաղտնի ամփոփագիրը վկայում է Վրաստանի օգտին քարոզչության, վրացական զորքերի տեղաբաշխման մասին Արդահանից Արդվին ընկած հատվածում: Դրանում նաև նշվում էր, որ Արդահանը Վրաստանին միացնելու համար Ախալքալաքից Արդահան են ուղարկվել 3-րդ լեռնային մարտկոցը և 400-500 հեծյալներից բաղկացած 2-րդ հետևակային գունդը՝ Ախալքալաքում կազմ ու պատրաստ պահելով ժողովրդական գվարդիան և 531 զինվոր ունեցող 12-րդ գումարտակը, սպասելով Ախալցխայից նոր զինուժի ժամանմանը՝ բաղկացած 7 սպաներից և 800 զինվորներից: Ավելացվում էր, որ Ախալքալաքում կա 180-200 արկղ փամփուշտ, իսկ Եկատերինֆելդում տեղաբաշխված են մոտ 200-հոգանոց ժողովրդական գվարդիա և հրետանային պահեստներ¹⁵: Վրացիները, օգտվելով ՀՀ-ի համար ստեղծված անբարենպաստ իրավիճակից՝ կապված թուրքական սպառնալիքի հետ, 1920 թ. հոկտեմբերի վերջերին ակտիվացրին իրենց գործողությունները՝ Բաթումից զորքեր տեղափոխելով Արդահան և Արդվինի մարզ, ինչի մասին վկայում են 11-րդ Կարմիր բանակի օպերատիվ բաժանմունքի պետը, կոմիսարը և հետախուզական բաժանմունքի պետը Անդրկովկասի վերաբերյալ իրենց բացատրության մեջ¹⁶: Այս հանգամանքը խորությամբ է ըմբռնել Հովհ. Քաջագունին. «...վրացիները շատ վարպետորեն (աւելացնեմ՝ նաև ցինիկաբար) օգտում էին հայ-թուրքական ու հայ-թաթարական հակառակություններից՝ իրանց արտօնեալ դիրքը ամրացնելու համար: Յենւելով թուրքերի



Ալեքսանդր Շնուր

ու թաթարների վրայ կամ սպառնալով, թե այն ուղղութեամբ կը շիտկեն իրանց ճակատը, անելանելի կացութեան մէջ էին դնում մեզ ու հարկադրում իրանց ցանկութիւններին յարմարելու: Ապա՝ երեսները մեր կողմը դարձնելով, մեզ մերձենալով (կամ մերձենալու մտադրութիւն ցուցադրելով), կաշկանդում էին ու որոշ չափով ահաբեկում նաև ագրքեյջանցիներին: Քաղաքական շանտաժ էր սա, որ մեծ առաւելութիւն էր տալիս վրացիներին ու ապահովեցնում նրանց գերիշխանութիւնը»¹⁷:

1919 թ. հուլիսի 26-ի հեռագրում ուղղված ՆԳ նախարարին, Դրոյին և գնդապետ Շնեուրին, Նոր Բայազետի գավառի կոմիսար Խոսրոնը հայտնում էր, որ հետախույզ Քուրդը (Ալի Ալահվերդի) Շիշկայա գյուղում 2 թաթարներից տեղեկացել է, որ թաթարները պատրաստվում են վերցնելու Բասարգեչարը՝ հայերին քշելով, ակնկալելով հաջողության դեպքում հայերին վռնդել Դարաբադից և Ելիզավետպոլից՝ այնտեղ բնակեցնելով թաթարներին¹⁸: Խոսրոնը 1919 թ. հուլիսի 30-ին գնդապետ Շնեուրին ուղղված մեկ այլ հեռագրում տեղեկացնում էր, որ Քուրդ անունով հետախույզը հաղորդել է, որ թաթարները պահանջագիր են ուղարկել Ելիզավետպոլ՝ խնդրելով ուղարկել զորքեր, սպառնալով հակառակ դեպքում ենթարկվել ՀՀ իշխանությանը¹⁹: Դրոյին և ՀՀ ՆԳ նախարարին ուղարկված 1919 թ. օգոստոսի 7-ի հեռագրում Համազասպը շեշտում էր Դալլար-Չարդախլու-Գետաբեկ-Ղալաքենդ գծի վրա տեղաբաշխված աղբրեջանական զորքերի կողմից Ջոդ-Շիշկայա շրջանին սպառնացող վտանգի մասին՝ խնդրելով միլիցիաներներով և այլ ուժերով շտապ ամրացնել տարածքը²⁰:

Ստեղծված իրավիճակում հայկական իշխանությունները փորձեցին կանխել մահմեդական հակահայկական հնարավոր ընդվզումները, սակայն շրջան պատմիչ գործամասեր ուղարկելը դարձավ անխուսափելի: 1918 թ. աշնանը Երևանից եկած պատմիչ գործամասը հայկական գյուղերում հարկահավաքության խնդիրը լուծելուց հետո մտավ Բասարգեչարի շրջան: Անդրկովկասյան հանրապետությունների ստեղծումից հետո Ջոդ գյուղի բնակիչ, շրջանի

նախկին գավառային կոմիսար Աբբաս Ալի բեկը փորձեց Բասարգեչարի շրջանը միացնել Ադրբեջանի Հանրապետությանը: 1918 թ. աշնանը Բասարգեչարի շրջանը Ադրբեջանին միացնելու նպատակով նա մի քանի ազդեցիկ թուրքերի ուղարկեց Գանձակ, որպեսզի հպատակություն հայտնեն ադրբեջանական իշխանություններին՝ ակնկալելով նրանց ռազմական աջակցությունը: Այդ նպատակով հասարակ ժողովրդից հավաքելով 60.000 ռ., Ադրբեջանը գործողեց նաև մի քանի ազդեցիկ թուրքերի: Հնարավոր առճակատումից խուսափելու համար Նոր Բայազետի գավառային կոմիսարը Աբբաս Ալի բեկին կանչում է Նոր Բայազետ, սակայն վերջինս մերժում է՝ բացահայտ հայտարարելով, որ ինքը չի ճանաչում գավառային կոմիսարի իշխանությունը: Բասարգեչար է ժամանում պրապորշչիկ Տիգրան Բաղդասարյանի պատժիչ գորամասը: Վերջինս իր մոտ է կանչում թուրքական գյուղերի ներկայացուցիչներին և հայտնում հայկական կառավարության որոշումը՝ զինաթափելու ՀՀ տարածքում ապրող ժողովրդին՝ պահանջելով երեք օրվա ընթացքում հանձնել ունեցած զենքերը և հարկերը, հակառակ դեպքում սպառնալով ռմբակոծել գյուղերը²¹: Անցնում է 3 օր, սակայն թուրքերը հայկական իշխանություններին հպատակվելու պատրաստակամություն ցույց չեն տալիս, ինչն էլ դրդում է պատժիչ գորամասին ռմբակոծելու Մ. Մազրա գյուղը, որից հետո մահմեդական բնակչությունը, թնդանոթի ձայնից ահաբեկված, սպիտակ դրոշով ներկայանում է Տ. Բաղդասարյանին՝ հանձնելով զենքը և հարկերը (20.000 ռ. և 400 զենք), խոստանալով տալ նաև պետական հացահատիկը, որից հետո պատժիչ գորամասը 1918 թ. նոյեմբերի 12-ին հեռանում է Երևան²²: Եվ այսպես, Բասարգեչարի շրջանը աստիճանաբար վերածվեց ՀՀ մուսուլման բնակչության հակապետական շարժման և անջատողական տրամադրությունների կենտրոնի: Բասարգեչարի խռովությունը ոգևորեց Հայաստանի այլ շրջանների բնակչությանը, և նրանք սկսեցին բացահայտորեն միջամտել երկրի ներքին գործերին, դիմումներ հղել Ադրբեջանի կառավարությանը՝ խնդրելով ազատել իրենց ծանր վիճակից և իսլամի վրա բռնացող հայկական իշխանություններից, գրավել Հայաստանը և շրջանը միացնել Ադրբեջանի Հանրապետությանը: Այդ նպատակով 1919 թ. հունվարի 2-ին Երևանում կայացավ հայաստանաբնակ մահմեդական հասարակական գործիչների խորհրդակցություն, որի ժամանակ դժգոհություն հայտնվեց մահմեդական բնակչության նկատմամբ Հայաստանի կառավարության վերաբերմունքից: Բեզ Բայրամբեգովը ներկայացնում է տեղեկություններ Երևանի նահանգի մահմեդականների ողբերգական դրության մասին: Խորհրդակցության ընդունած բանաձևում խնդիր է դրվում դիմելու Բաքվում գտնվող դաշնակից զորքերի հրամանատար, գեներալ Վ. Թոմսոնին՝ գրավելու Երևանի նահանգը, իսկ եթե դա որևիցե պատճառով հնարավոր չլինի, ստիպելու Արարատյան (Հայաստանի) Հանրապետության



Դանիել Բեկ-Փիրումյան

կառավարությանը ձեռք առնել իրական միջոցներ հայկական հրոսակախմբերի գազանությունների դեմ: Խորհրդակցության հանձնարարությամբ Տ. բեկ Մակինսկին, Փալաբեզ Բայրամբեգովը, Ռաշիդ բեկ Իսմայիլովը և Ազիզ բեկ Սուլթանովը պետք է մեկնեին Բաքու և հանդիպեին գեներալ Թոմսոնի հետ²³, որը հայտնի էր իր հայատյացությամբ և հակադարաբաղյան դիրքորոշմամբ:

Հայկական զորքերի հրամանատարության ուղտիմատիվ պահանջով տեղական թաթարները համաձայնում են հպատակվել իշխանություններին՝ հանձնելով 450 հրացան: Ներկայացվում է նաև պետությանը չվճարված հարկերի հանձնման պահանջ: Այդ հանգամանքին ավելանում է նաև սովալլուկ և գազազած գաղթականության առկայությունը թաթարական բնակավայրերի մոտ²⁴: Այսպես՝ 1919 թ. հունվարի 31-ին Նոր Բայազետի գավառային կոմիսար Շահինյանը Հայաստանի տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիսարին ուղղված հեռագրում հայտնում է, որ մոտ 1000 զինված փախստական հայեր Բասարգեչարի շրջանում հարձակվել են մահմեդական Վերին Զադալու, Ղըզըլ-Վանք, Սուրբոտան գյուղերի վրա, ինչի պատճառով այնտեղ է ուղարկվել միլիցիայի պետը²⁵: Փետրվարի 2-ին տարածքային վարչակազմի ղեկավարին գավառային կոմիսար Շահինյանի հղած պաշտոնագրից տեղեկանում ենք, որ փախստականները Մուշեղի, Վահանի, Իշխանի և Նիկոլի գլխավորությամբ աջակցել են տեղի հայերին, դուրս քշել մուսուլմաններին Վերին Զադալու, Ղըզըլ-Վանք և Սուրբոտան գյուղերից, որից վախեցած՝ թուրքերը փախել են հարևան գյուղեր²⁶: Փետրվարի 6-ին Հայաստանի տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիսարից Նոր Բայազետի գավառային կոմիսարը պատասխան հեռագիր է ստանում, որով պահանջվում էր անհապաղ վճռական միջոցներ

ձեռնարկել՝ կանխելու անկարգությունները և մեղավորներին ենթարկելու դատական խիստ պատասխանատվության²⁷։ Դատելով, սակայն, փաստաթղթերից, իրադարձությունները դուրս էին եկել վերահսկողությունից և զարգանում էին այլ սցենարով։ Դառնալով անվերահսկելի՝ դրանք ստեղծել էին նորանոր խնդիրներ, երբ, ինչպես ընդգծվում էր վարչապետին ուղղված ՀՀ արտգործնախարարի 1919 թ. փետրվարի 18-ի հեռագրում «...տեղական ադմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութություն և ապիկարություն»²⁸։ Սակայն այդ ամենը բացատրել միայն վարչակազմի անճարակությամբ կլինի միակողմանի, քանզի այդ դեպքերն ունենին նաև սոցիալ-տնտեսական շարժառիթներ, որոնք լրացուցիչ ազդակ հանդիսացան դեպքերի անցանկալի ընթացքի համար, ինչից էլ օգտվեցին Ադրբեյջանի հավակնոտ առաջնորդները։ Գործընթացը խթանվեց 1919 թ. հունվարի վերջերին Բասարգեչարի շրջանի փախստական և սովալյուկ հայերի հուսահատ քայլերից։ Նրանք հարձակվում են թաթարաբնակ Վերին Զադալու, Դըզլ-Վանք և Սուբբուտան բնակավայրերի վրա, ինչի հետևանքով թաթարները փախչում են հարևան գյուղեր։ Վարչակազմի և դիվիզիոնի ռոտմիստր Ալեքսանդր Միլիկյանի ձեռնարկած քայլերի շնորհիվ փախստականները հանդարտվում են և մասամբ զինաթափվում, թաթարական գյուղերն ազատվում են դրանք գրաված փախստականներից, վարչակազմը սկսում է թաթարներին վերադարձնել իրենց կողոպտված ունեցվածքը և ձեռնամուխ լինում մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն։ Ռոտմիստր Միլիկյանը և կոռնետ Խաչատուրովը թաթարների հետ գնում են գյուղերը՝ բնակիչներին հանդարտեցնելով²⁹, ինչը փաստում է ՀՀ իշխանությունների ոչ խտրական մոտեցման մասին։ Տեղ հասած զորամասերի միջոցով փախստականները զինաթափվում են, իսկ թաթարները տեղավորվում են իրենց գյուղերում, և նրանց թալանված ունեցվածքը վերադարձվում է³⁰։ Իրադարձությունները, սակայն, արդեն դուրս էին եկել Բասարգեչար գյուղից և դարձել ազգամիջյան փոխհարաբերություններում լարվածության պատճառ, ինչն ավելի էր սրվել Ադրբեյջանի սահմանի մոտիկության հետևանքով։ Այդ մասին հեռագրել էր դիվիզիոնի հրամանատար ռոտմիստր Միլիկյանը գեներալներ Միլիկյանին և Փիրումյանին³¹։

1919 թ. փետրվարի 12-ին Նախարարների խորհուրդը լսում է արտգործնախարարի զեկուցումը Ադրբեյջանի արտգործնախարարի հեռագրի մասին, որով վերջինս բողոքել էր Սևանա լճի մոտակայքում հայկական զորամասերի գործողություններից, որոնք, անցնելով Ադրբեյջանի սահմանը, իբր թե հարձակվել էին մի քանի թուրքական գյուղերի վրա, ճնշում գործադրել ու կատարել հափշտակություններ։ Վերջինս պահանջել էր նման երևույթների դեմն առնել և մեղավորներին դատել, հակառակ դեպքում Ադրբեյջանի կառավարության անունից իրենց պատասխանատու չհամարել թուրք ազգաբնակչության կողմից սպասվող գործողությունների համար։

ՀՀ Նախարարների խորհուրդը այդ կապակցությամբ ընդունված որոշման մեջ ընդգծել էր. «Ի նկատի ունենալով Զինվորական նախարարի զեկուցումը, որ հնարավոր է մահմեդական ավազակաբարո «խումբերի» հարձակում լինի, Ներքին Գործերի նախարարին հանձնարարական է տալիս անհապաղ խիստ քննություն նշանակել՝ հեռագրի մեջ հիշված հարձակումների և ճնշումների իսկությունը պարզելու և հանցավորներին պատասխանատվության ենթարկելու համար»³²։ Հայկական կողմի պատասխանում նշվել է, որ Բասարգեչարի շրջանի անկարգություններին ՀՀ կանոնավոր զորքեր չեն մասնակցել, այլ մոտ 10 հազար հայ գաղթականներ են հարձակվել մուսուլմանական գյուղերի վրա, և ՀՀ իշխանությունները մուսուլմաններին վերադարձրել են իրենց գյուղերը, նրանց հանձնել թալանված գույքը, իսկ մեղավորները պատասխանատվության են կանչվել³³։

Ծանոթագրություն

1. Տես «Յառաջ», Երևան, 7 մայիսի, 1920, № 49։
2. Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 44, թ. 16։
3. Տես Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012, էջ 307։
4. Տես Քաջազունի Յովհ., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Մ. Վարանդեան», 1993, էջ 11։
5. Զող. – գյուղ Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սոթք գավառում։ Յոթ, Յոթ, Աղեղուշ, Զոթ, Զոտ, Մավինք, Մոթ, Հոգ, Սող, Սողք, Սոթ, Սոթից ավան, Սոթք – գյուղ Հեմվճ վարդենիսի շրջանում՝ Սոթ-Զող գետի ավին, Զողի լեռնանցքի մոտ՝ երեք կողմից լեռներով շրջապատված։ Գյուղից արևելք գտնվում են ոսկու հանքերը, որոնք մշակվել են դեռևս մեր թվարկությունից մի քանի հարյուրամյակ առաջ։ Միջնադարյան հայկական աղբյուրներում հայտնի է որպես Սյունիք աշխարհի Սոթք գավառի Վասակաշեն գյուղ։ 1991 թ. վերանվանվել է Սոթք (տես Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Եր., 1998, էջ 312, հ. 4, Եր., 1998, էջ 651)։
6. Ռուբին, Հայ Տեղափոխականի մը յիշատակները. Է. Հատոր. Արտասահման, Մատու և Հայաստանի Հանրապետություն, Գ. Հրատարակություն, Թեհրան, 1982, էջ 210, 326-327։
7. Դեղնանց Տ., Կենսիսի դրամագներից, «Հայրենիք» (Բառուս), 1945, № 5 (250), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 96։
8. Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 32։
9. Պաղեղեպար Աստուան (1878-1955) – հնագետ, պատմաբան, օգալու, քարտեզագիր, միսիոներ, որը լավ հայերեն գիտեր։
10. Տես Տեր-Մինասյան Ա., Աստուան Պաղեղեպարը եւ Հայաստանը, «Բանբեր Հայաստանի Արխիվների», Երևան, 2004, № 2, էջ 97։
11. Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 38։
12. Տես նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 21։
13. Տես նույն տեղում, թ. 126։
14. Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 353, թ. 80։
15. Տես Հայաստանի Հանրապետության արխիվ (Բառուս), թիվ 25/25։
16. Տես Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Под. Ред. Акопян В. А. Баликян О. С. Вирабян А. С. Микаелян В. А. Эвоян В. С., Ер., Национальный архив Армении, Ереван, 1992, с. 595-596։
17. Քաջազունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցությունը անկելի չունի այլ ևս, Վիեննա, Միսիսարեան տպարան, 1923, էջ 17։
18. Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 75։
19. Տես նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 168, թ. 12։
20. Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 1, թ. 31։
21. Տես «Զանգ», Երևան, 11 դեկտեմբերի, 1918, № 78։
22. Տես նույն տեղում։
23. Տես «Մշակ», Թիֆլիս, 16 հունվարի, 1919, թիվ 12։
24. Տես «Кавказское слово», Тифлис, 7 декабря, 1918։
25. Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 4։
26. Տես նույն տեղում, թ. 48։
27. Տես նույն տեղում, թ. 8, 115։
28. Նույն տեղում, թ. 110։
29. Տես նույն տեղում, թ. 115։
30. Տես նույն տեղում։
31. Տես նույն տեղում, թ. 22։
32. Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 25; ց. 100 (43), թ. 26; ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս 1, թ. 37, «Արեւ», Բաքու, 13 փետրվարի, 1919։ «Յառաջ», Երևան, 16 փետրվարի 1919։
33. Տես Կոլլազյան Դ., Ադրբեյջանի Դեմոկրատական հանրապետության կոլլազյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, Հեղ. հրատ., 2008, էջ 92-93։

Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտի նշանակությունը և նրա հերոսները

Արմեն Յ. Մարության

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ղարաքիլիսայի ճակատամարտը վերջինս էր Մայիսյան հերոսամարտերի շարքում, որով և վերջակետ դրվեց թուրք-հայկական պատերազմին, և ստորագրվեց Բաթումի հաշտության պայմանագիրը: Եթե Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերով Արարատյան դաշտավայրում ծվարած հայությունը փրկվեց անխուսափելի ոչնչացումից, և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայոց պետականության վերականգնման համար, ապա Ղարաքիլիսայի ճակատամարտը, նշվածից բացի, ուներ նաև աշխարհաքաղաքական նշանակություն, քանզի դրա շնորհիվ որոշ ժամանակով կասեցվեց թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Թիֆլիս ու Արևելյան Այսրկովկաս՝ խաթարելով համաթուրանական ծրագրերի շուտափույթ իրականացումը:

Ղարաքիլիսայի ճակատամարտի ընթացքը և դրան հաջորդած դեպքերը օբյեկտիվորեն գնահատելու համար անհրաժեշտ է անդրադառնալ դրան նախորդած իրադարձություններին, որոնք բախտորոշ ազդեցություն ունեցան ճակատամարտի ելքի վրա: Ճակատամարտից առաջ Ղարաքիլիսայում կային Կարսից տեղափոխված 3000 թուրք զերիներ, որոնց ճակատագրի հարցով Թ. Նազարբեկյանը 1918 թ. մայիսի 18-ին դիմում է Ազգային խորհրդին՝ զգուշացնելով, որ նրանք կարող են պատճառ դառնալ թուրքերի հարձակման համար¹: Ակնհայտ է, սակայն, որ, չնայած հայկական կողմի զգուշավորությանը, թուրքերն առաջ շարժվելու առիթ ամեն դեպքում գտնելու էին: Այդպես էլ պատասխան չստանալով՝ հայ հրամանատարությունը Ղշաղի մոտ՝ բաց դաշտում, ազատ է արձակում ռազմագերի ասկյարներին որպես «նվեր» հարձակվող թուրքերին: Թուրք զերիները, երկու օր մնալով առանց հսկողների, ի վերջո հեռանում են²:

Տարակուսանք էր առաջացնում այն հանգամանքը, որ թուրք զերիներն այդքան մեծ դժվարությամբ Կարսից հասցվել էին Ղշաղ, սակայն հետո հենց այնպես ազատ արձակվեցին: Բնականաբար, այդ ասկյարներով Էսադ փաշան անմիջապես ավելացրեց իր զորքերի թվաքանակը: Էլ չենք խոսում այն մասին, որ նրանք քաջատեղյակ էին տեղանքին ու հայկական զորքերին և կարող էին օգտակար տեղեկություններ հաղորդել թուրք հրամանատարությանը: Այս փաստը վկայում է այն մասին, որ հայ հրամանատարությունն ի սկզբանե տրամադրված չէր ճակատամարտ տալու Ղարաքիլիսայում: Հետևաբար տվյալ քայլը պարզապես բարի կամքի դրսևորում էր՝ Ղարաքիլիսան հանձնելուց հետո տեղի բնակչության հանդեպ թուրքերի գթասրտությունը շարժելու նպատակով: Առաջ անցնելով նշենք, որ այդ քայլի համար թուրքերը լիովին «հատուցեցին» հայերին ճակատամարտի վերջում՝ գլխովին ոչնչացնելով հայ ռազմագերիներին:

Դեռ մայիսի 16-ին Թ. Նազարբեկյանը հայկական



1-ին դիվիզիայի հրամանատար գեներալ Գ. Արեշյանին կարգադրել էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի Ղարաքիլիսա՝ պաշտպանելով նախապես գրավված դիրքերը Չաշան լեռան, Գյոյ Յոխտշ, Մեծ Քյափանակ և Ավդիբեկ բնագծում, ինչի համար կային համապատասխան ուժեր: Մայիսի 16-20-ը թուրքերը Ղարաքիլիսայի ուղղությամբ ակտիվ գործողություններ չձեռնարկեցին, ինչն այդ օրերին հայկական ջոկատների համար հնարավորություն էր ստեղծում ամուր պաշտպանություն կազմակերպելու այնպիսի նպաստավոր բնագծում, ինչպիսին էր Ջաջուռի լեռնանցքը: Սակայն Արեշյանն այս հրամանը չկատարեց³: Ղարաքիլիսայի ուղղությամբ հայերն ունեին մի ակնհայտ առավելություն՝ տեղանքի հնարավորությունները, որոնք չօգտագործվեցին: Թուրքերը, օգտվելով դրանից, մայիսի 20-ին գրավում են Ջաջուռը, Աղբուլաղը (Լուսնաղբյուրը) և Ղալթախչին, իսկ մայիսի 21-ին մոտենում են Վորոնցովկային և մահմեդական խուժանի օգնությամբ գրավում այն: Այս իրավիճակում Արեշյանը, սխալն ուղղելու փոխարեն, մայիսի 18-ին Նազարբեկյանին տեղեկացնում է, որ հրամանատարությունը փոխանցել է իր տեղակալ գնդապետ Ա. Բեյ-Մամիկոնյանին⁴, որին Նազարբեկյանը ոչ միայն հաստատում է այդ պաշտոնում, այլև վստահում Ղարաքիլիսայի ճակատամարտի հրամանատարությունը⁵:

Ա. Բեյ-Մամիկոնյանն իր հերթին հաշտվել էր նահանգի մտքի հետ և զեկուցում էր Թ. Նազարբեկյանին, որ Ղարաքիլիսայում հնարավոր չի համարում ճակատամարտը համատարած դասավորության և բնակչության խուճապի պատճառով: Որպես ապացույց նշվում էր այն փաստը, որ մայիսի 20-ին Արսենանց Վանոյի գլխավորությամբ կազմվել էր հանձնաժողով, որը փորձում էր մեկնել Համամլու՝ թուրքերին իրենց հնազանդությունը հայտնելու նպատակով: Այս պատվիրակությունը, սակայն, տեղ չի հասնում. Արջուտում նրանց վրա է հարձակվում թուրքական խուժանը, և նրանք վերադառնում են⁶: Իրականում, սակայն, ազգաբնակչության շրջանում, այսպես կոչված, հուսա-

հատությունը և հաշտվողականությունը ոչ թե պատճառ էին, այլ հետևանք՝ գործերի անընդհատ նահանջի, ճակատամարտից խուսափելու, զանգվածային դասալքության, անգործության և անվճարականության: Բնական է, որ այս իրավիճակում տեղի բնակչությունը, հայկական գործից պաշտպանության հույս և երաշխիք չունենալով, ստիպված պետք է փորձեր տեսնել իր «գլխի ճարը» և թուրքերի գալու դեպքում ինքնուրույնաբար լուծել կոտորածից փրկվելու հարցը: Հակառակ դեպքում ինչպե՞ս կարելի է բացատրել հերոսամարտի ժամանակ Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի բնակչության ոգևորությունը և ակտիվ մասնակցությունը մարտական գործողություններին. մի՞թե դա սպիտակ դրոշ բարձրացրած նույն ժողովուրդը չէր:

Մայիսի 23-ին Ա. Բեյ-Մամիկոնյանը Թ. Նազարբեկյանին պարգապես առաջարկում է ընդունել թուրքերի կապիտուլյացիայի պայմանները⁷: Ինքնին հասկանալի է, որ նման տրամադրվածություն ունեցող հրամանատարը չէր կարող մտածել ճակատամարտի մասին, ուստի հայկական ուժերը թողնում են Ղարաքիլիսան և նահանջում Դիլիջան:

Սարդարապատի հերոսամարտի նախօրեին Արամ Մանուկյանը Դիլիջանում գտնվող Ալեքսանդրապոլի Ազգային խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Հակոբյանին (Իրազեկ) տեղեկացնում է. «Պատրաստում ենք վճռական ճակատամարտ տալու Սարդարապատի մօտ: Ի սեր Աստծո, գոնե երեք օր պաշտպանեք Ղարաքիլիսայի ճակատը, որ թշնամին իր այդ կողմի ուժերը չբերե մեր վրա»⁸: Թուրքական գործերին Ղարաքիլիսայում պահել նշանակում էր թույլ չտալ նրանց շրջանցել և թիկունքից հարվածել Արարատյան դաշտավայրին, քանի որ այդ դեպքում թե՛ Սարդարապատի և թե՛ Բաշ-Ապարանի հերոսամարտերն անիմաստ էին դառնում:

Իր կենսագրականում Ղարաքիլիսայի ճակատամարտին դիպուկ գնահատական է տվել դրան անմիջականորեն մասնակցած և մարտական գործողությունները ղեկավարած Գարեգին Տեր-Հարությունյանը (Նժդեհը). «1918 թ. մայիսի վերջերին վարել եմ Ղարաքիլիսայի ճակատամարտը: Վիրավորվել եմ: Ներկայացվել ամենաբարձր քաջության շքանշանի: Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսայի ճակատամարտի ոչ թե օրվա Խորհրդային Հայաստանը, այլև այդ երկրամասի վրա այսօր ապրող հայություն չէինք ունենա: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատյան հայությանը և հիմք դրեց Հայկական Պետության»⁹:

Հայկական ուժերի՝ Դիլիջան հեռանալուց հետո Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը հայտնվել էր օրհասական վիճակում. նրա գլխին կախված էր թուրքական գործերի կողմից բնաջնջվելու վտանգը: Ստեղծված պայմաններում Ղարաքիլիսայի հեղինակավոր գործիչները մտածում էին թուրք հրամանատարության հետ լեզու գտնելու և նրանց մոտ պատվիրակություն ուղարկելու մասին¹⁰:

Իրազեկն իր հուշերում գրում է, որ գործի՝ Դիլիջան նահանջից հետո՝ մայիսի 24-ի առավոտյան, Գարեգին Նժդեհի հետ գնացել են գորավար Նազարբեկյանի մոտ՝ խնդրելով, որ թույլ չտա՝ գործերը լքեն ճակատը,



Թովմաս Նազարբեկյան

որովհետև ճակատը մերկացնելու հետևանքով կվտանգվեր Երևանը, ինչպես նաև Բաքվի հայերի դրությունը: Ծայրահեղ հուսալքության մեջ գտնվող Նազարբեկյանը պատասխանում է, որ ինքն այլևս գործ չունի, իսկ գրույցի վերջում նրանց ասում է՝ ինչ կարող եք դուք արել¹¹:

Նազարբեկյանի հետ հանդիպումից հետո Իրազեկն ու Նժդեհը սկսում են Դիլիջան նահանջողների բեռների խուզարկումը, քանզի տեղեկություններ կային, որ Ղարաքիլիսայից հեռացողները մեծ քանակությամբ զենք-գինամթերք էին դուրս բերում՝ սայլերում կամ բեռներում թաքցրած տանելով հրացաններ, ատրճանակներ, փամփուշտներ, անգամ գնդացի¹²:

Որոշ ժամանակ անց Արամ Մանուկյանի՝ Իրազեկին հայտնած լուրը, որ Սարդարապատում հայերը փառահեղ հաղթանակ են տարել, Նժդեհին այնքան է ոգևորում, որ նա շտապում է Դիլիջանի եկեղեցու բակը և ժողովրդին ու գործին միտինգի հավաքում¹³: Նժդեհի ճառը ոգևորիչ մեծ ազդեցություն է ունենում հավաքվածների վրա, և դրանից հետո որոշվում է վերադառնալ Ղարաքիլիսա, դուրս գալ թշնամու դեմ և կրկին աշխարհին ցույց տալ, որ հայը հերոսաբար կռվել ու հայրենիքի համար մեռնել գիտի¹⁴:

Մայիսի 24-ի գիշերվանից Ղարաքիլիսայի ճակատամարտի փաստացի ղեկավարությունը ստանձնած Գարեգին Նժդեհը մոտ հազար զինվորներով վերադառնում է Ղարաքիլիսա: Մայիսի 24-ի գիշերվա ժամը 2-ին հասնում են Վարդանյու գյուղ, որտեղ թողնելով հիմնական ուժերը՝ 50-հոգանոց հեծյալ ջոկատով Նժդեհը մտնում է Ղարաքիլիսա, որտեղ մեռելային լուրջություն էր տիրում, սակայն լույսերի բացակայությունը վկայում էր այն մասին, որ թուրքերը դեռ չէին մտել բնակավայր: Տուն չկար, որ սպիտակ դրոշ պարզած չլիներ: Իր ջոկատի մեկ տասնյակին Նժդեհն ուղարկում է Ղշլաղ՝ հետախուզության, իսկ ինքը մտնում է այն

տանը, որտեղ հինգ օր առաջ էր գիշերել: Թակում է դուռը, սակայն ներսից վախենում են դուռը բացել՝ կարծելով, թե թուրքերն են: Սկսում է տալ տանտիրոջ և նրա երեխաների անունները, որից հետո դուռը բացում են և, Նժդեհին տեսնելով, ուրախանում:

Տեղեկանալով, որ թշնամին Արջուտ գյուղում է և սպասում է, որ լուսաբացին աղուիաց մատուցվի թուրք զորահրամանատարներին, Նժդեհը կտրուկ կանխում է այդ անպատվությունը, իրեն ներկայացած՝ բնակավայրի ազդեցիկ դեմքերն էլ խոստանում են ամեն ինչ տրամադրել հայոց զորքին¹⁵:

Նժդեհը լավ էր հասկանում, որ անգամ փոքր հաղթանակը կարող էր ոգևորել ինչպես զորքին, այնպես էլ Լոռի-Փամբակի բնակչությանը, քանի որ Էրզրումից մինչև Գուգարք տխուր պարտություններն էին ու նահանջ, մյուս կողմից, սակայն, քաջ գիտակցում էր, որ չնչին անհաջողությունն անկարելի էր դարձնելու հետագա դիմադրությունը: Այս հանգամանքից ելնելով էր, որ իրեն ներկայացած քահանաներին և ուսուցիչներին խնդրում է ամեն կերպ բարձրացնել զորքի և ժողովրդի ոգին¹⁶:

Շրջակա գյուղեր սուրհանդակներ են ուղարկվում՝ հորդորելու զենք կրելու ունակ գյուղացիներին մի քանի օրվա պաշարով և ունեցած ռազմամթերքով ներկայանալ Նժդեհին Դշաղում, ուր վերջինս մեկնել էր, որպեսզի, դեռ լույսը չբացված, կարողանար նպաստավոր դիրքեր գրավել՝ առավոտյան հակառակորդին դիմավորելու համար: Պահեստային ուժերի և զինամթերքի սակավության պատճառով թշնամու զորքերի առաջխաղացման ճանապարհին Նժդեհը հարկադրված սակավաթիվ ուժերը դասավորում է ցանցաձև¹⁷:

Դարանակալ խմբեր են տեղակայվում վանքի ավերակների (ներկայումս՝ «Կոտրած եկեղեցի»՝ Դարաքիլիսայի հերոսամարտի հուշարձան) և երկաթգծի կամրջի մոտ, որոնք առանց իրենց մատնելու, խաչաձև կրակով պետք է փորձեին խուճապի մատնել թուրքերի առաջապահ ուժերին՝ այդպես նաև ազդանշան տալով հակառակորդի առաջխաղացման մասին: Մինչև լույսը բացվելը Նժդեհն անձամբ է շրջում բոլոր առաջապահ դիրքերով, գտնեալուում զինվորներին և հիշեցնում, որ Երևանից իրենց հրահանգել են գոնե երեք օր թշնամու հիմնական ուժերը պահել Դարաքիլիսայի ճակատում¹⁸:

Մայիսի 25-ի առավոտյան ժամը 10-ին, այդպես էլ աղուիացի չարժանանալով, թշնամու ուժերն առաջ շարժվեցին և հայտնվեցին դարանակալ խմբերի խաչաձև կրակի տակ: Նժդեհի՝ անտառապատ բարձունքները հսկող դարանակալ խմբերի կատաղի կրակից թուրքերի առաջապահ զորքերը ծանր կորուստներ տվեցին և, չկարողանալով անգամ տանել իրենց վիրավորներին, խուճապահար փախան դեպի Արջուտ¹⁹:

Ճակատամարտի մասնակից Բենիամին Նավոյանն իր հուշերում գրում է, որ Նժդեհի հեծյալ ջոկատը Կամակատարի բարձունքի ետևի թաքստոցից այգիների և ձորերի միջով մոտեցավ թուրքերի պաշտպանական դիրքերին և մարտի բռնվեց: Չնայած այն հանգամանքին, որ թշնամին մեծաթիվ օժանդակ ուժեր ուղարկեց այդ դիրքերը պահելու համար, սակայն նրանք չկարողացան դիմանալ հայկական զորքերի ճնշմանը, ինչի հետևանքով



Գարեգին Նժդեհը զինակիցների հետ

թուրքական 11-րդ դիվիզիայի աջ թևի առաջապահ զորամասերը ջախջախվեցին և ետ շարժվեցին: Չնայած ծանր կորուստներին՝ Նժդեհը, իր հեծյալ ջոկատով հալածելով թուրքական զորքերին, կարողացավ հասնել մինչև Արջուտի մատույցները, այնուհետև հեծելազորին հետ ուղարկեց, իսկ հետևակին հրամայեց հրանոթային կրակի պաշտպանության տակ խրամատավորվել նվաճված դիրքերում²⁰: Ականատեսների վկայությամբ՝ Նժդեհի առաջապահ հեծելաշոկատը Հաջիդարա (ներկայումս՝ Լեռնապատ) գյուղի մոտ առասպելական քաջագործություններ է կատարել:

Դարաքիլիսայի հերոսամարտի անմահ հերոսներից է նաև հրետանային մարտկոցի երիտասարդ հրամանատար, կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, ով Դարաքիլիսա առաջինը վերադարձողներից էր: Նրա հրետանային մարտկոցը տեղակայված էր ռազմավարական կարևոր դիրք ունեցող Դարբաս գյուղի մոտ գտնվող 750-րդ բարձունքում: Տեր-Մովսիսյանի մարտկոցն իր համագործակցությամբ հաջողությամբ հետ էր մղում հակառակորդի գրոհները՝ մեծ կորուստներ պատճառելով նրան:

Մեծ թվով զոհերից ու վիրավորներից կատաղած՝ թուրքերը զգալի ուժեր են կենտրոնացնում 750-րդ բարձունքի ուղղությամբ և հետևակային գրոհով գրեթե հասնում մարտկոցին: Ստեղծված ծանր իրավիճակում Տեր-Մովսիսյանը, չկորցնելով սառնասրտությունը, հրետանավորներին և հետախուզական խումբը արագ վերածում է հետևակի և համարձակ հակազորով թշնամուն ստիպում նահանջել: Մարտկոցի թնդանոթները փրկված էին, սակայն դրա համար չափազանց թանկ գին վճարվեց. մահացու վիրավորում ստացավ ինքը՝ մարտկոցի հրամանատարը²¹: Կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը մահվանից առաջ զինակից ընկերներին հասցրեց ասել. «Մի թողեք դիակս թշնամու ձեռքին»²²:

Հատկանշական է, որ Դարաքիլիսայի հերոսամարտի շուրջ հետագայում հեռակա բանավեճ ծավալվեց Գարեգին Նժդեհի և զորավար Անդրանիկի միջև, որն

իր արձագանքը գտավ Ավետիս Ահարոնյանի՝ Բոստոնի «Հայրենիք» ամսագրում հրատարակած հոդվածներում: Մեջբերելով Նժդեհի հուշերը՝ Ահարոնյանը նշում է, որ իզուր սպասեցին Անդրանիկին, որը եթե իր զինվորներով, կտրելով երկաթուղու գիծը, գար և դիրքավորվեր Ղարաքիլիսայի արևելյան բարձունքներին, ապա այդպիսով կձախողվեր Ղարաքիլիսան շրջապատելու թշնամու ծրագիրը²³:

Ջորավար Անդրանիկն իր հրատարակած գրքույկում որոշ պարզաբանումներ է ներկայացնում Ղարաքիլիսայի ճակատամարտին իր չմասնակցելու պատճառների վերաբերյալ: Նա նշում է, որ գնեցրալ Նազարբեկյանն իրեն հրամայել էր պաշտպանել երկաթգիծը, իսկ երբ նրա օգնական զորավար Մանասյանն իրեն հաղորդել է Ղարաքիլիսայի մոտ հայկական ուժերի հաղթանակի մասին, խորհուրդ է տվել կենտրոնով չառաջանալու, այլ ամուր պահելու երկու թևերը, որովհետև թշնամու նահանջը կեղծ էր²⁴:

Նժդեհը հանդիմանում է Անդրանիկին, որ եթե գար և զբաղեցներ նշված բարձունքը, ապա երկաթուղին կմնար իր ուժերի թիկունքում՝ թուրքերից պաշտպանված, բայց, իմանալով հանդերձ, որ թշնամին պետք է փորձեր շրջանցել իրենց թևերը և հաջողության հասնել, նա այդ ժամանակ իր հրամանատարության տակ եղած ուժերը կրավորական վիճակում պահեց²⁵:

Ճակատամարտին չմասնակցելու Անդրանիկի փաստարկներից մեկն էլ այն է, որ առաջին օրվա՝ չորս ժամ տևած կռիվներից հետո՝ հաջորդ օրը՝ առավոտյան, կռիվը վերսկսվել է, և երեք ժամ անց իրեն տեղեկացրել են, որ Ղարաքիլիսան հանձնված է, և զորքերը նահանջել են Դիլիջան²⁶: Այս փաստարկին Նժդեհը պատասխանում է, որ Ղարաքիլիսայում անմահացող հայկական զորքը նահանջել է ոչ թե հաջորդ օրը՝ առավոտյան, այլ ճակատամարտի չորրորդ օրվա երեկոյան: Նա տարակուսանք է հայտնում, թե ով և ինչպես պետք է Անդրանիկին այդ ստահող լուրը հաղորդեր, այն էլ՝ մեր ամենամեծ հաղթության օրը:

Նժդեհը, անշուշտ, փորձում էր հասկանալ Անդրանիկին, որ նա այդ կերպ ուզում էր արդարացնել Ղարաքիլիսայի և Սարդարապատի ճակատամարտերի օրերին իր անգործությունը, սակայն խորապես ցավում էր այն արտահայտության համար, որ նա թույլ էր տվել իրեն այն անմահ բանակի մասին, որն իր հերոսական խոյանքով հիացումի խոսքերի է արժանացել անգամ թուրք հրամանատարների՝ Վեհիբ և Խալիլ փաշաների կողմից²⁷:

Ավետիս Ահարոնյանը Ղարաքիլիսայի հերոսամարտը համարում էր 20-րդ դարի Ավարայր, որի ընթացքում այս էլ որերորդ անգամ հայ ռազմական և քաղաքական էլիտայում տիրող անձնական և խմբային շահերի գերակայությունը հանգեցրեց մարտավարական, բայց ոչ երբեք բարոյական ու քաղաքական պարտության: Ղարաքիլիսայի հերոսամարտի մարտավարական պարտության հետևանքը թուրքերի կողմից ցեղասպանության շարունակումն էր Ղարաքիլիսայում և շրջակա գյուղերում, ինչին զոհ գնացին շուրջ 4000 (որոշ աղբյուրներում 7000) հայեր, և հարստահարվեց Լոռվա տարածաշրջանը: Ղարաքիլիսայի հերոսամարտի բարո-

յական և քաղաքական հաղթանակի փաստարկն այն է, որ անգամ թշնամին գնահատեց հայերի հերոսությունը Ղարաքիլիսայում, և Բաթումի խաղաղության բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը Ղարաքիլիսայի ճակատամարտը հատուկ շեշտեց որպես գործոն, որն իրենց ստիպեց ճանաչել հայոց պետությունը²⁸:

Ղարաքիլիսայի ճակատամարտի քաջերն իրենց անձնուրաց հերոսությամբ կատարեցին Արամ Մանուկյանի պատգամը՝ թուրքական գերակշիռ ուժերին Ղարաքիլիսայում պահելով ոչ թե երեք, այլ չորս օր՝ մինչև մայիսի 28-ը: Այդ գործում իրենց ժողովրդին մեծագույն ծառայություն մատուցեցին Ղարաքիլիսայի հերոսամարտի ռազմական գործողությունների փաստացի անգուցական հրամանատար Գարեգին Նժդեհը և ճակատամարտում հերոսաբար անմահացած երիտասարդ կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը: Ղարաքիլիսայի ճակատամարտի ընթացքում իրենց անունը փառքով պատկերեցին մի շարք հայ սպաներ՝ Գեորգիյան Ա կարգի շքանշանակիր գնդապետ Նիկոլայ Ղորդանյանը, գնդապետներ Սմբատ Սամարգյանը, Հովսեփյանը և Գամազյանը, փոխգնդապետ Ալոբյանը և շատ ուրիշներ: ■

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՏՆՈՒ ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թթ. 20-21:
2. ՏՆՈՒ նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 9:
3. ՏՆՈՒ Հայրությունյան Ա., Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 189-190:
4. ՏՆՈՒ ՀԱՄ, ֆ. 121, ց. 2, գ. 97, թթ. 1-31:
5. ՏՆՈՒ Թուրքյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Եր., 1969, էջ 173:
6. ՏՆՈՒ Ղազարեան Մ., Ղարաքիլիսայի հերոսամարտը, ականատեսի վկայություններ, Թիֆլիս, 1920, էջ 19:
7. ՏՆՈՒ ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 24:
8. Իրազեկ Յ., Մոսկվայի անցկացված պատմական դեպքեր և ասպրումներ 1917-1922, Պեյրոթ, 1956, էջ 32:
9. Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Եր., 2012, էջ 277:
10. ՏՆՈՒ Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Վ. Դավթյան, Ա. Մարտիրոսյան, Եր., 2008, էջ 103-105:
11. ՏՆՈՒ Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 27-33:
12. ՏՆՈՒ նույն տեղում, էջ 30:
13. ՏՆՈՒ նույն տեղում:
14. ՏՆՈՒ Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 105:
15. ՏՆՈՒ Նժդեհ Գ., նշվ. աշխ., էջ 272:
16. ՏՆՈՒ Համբարձումյան Ռ., Ղարաքիլիսայի համատարած խուճուղի յաղթանակի վերաձուլող ոգին, Եր., 2005, էջ 56:
17. ՏՆՈՒ նույն տեղում, էջ 57:
18. ՏՆՈՒ նույն տեղում:
19. ՏՆՈՒ Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1932, յոնուար, թիւ 3:
20. ՏՆՈՒ Համբարձումյան Ռ., նշվ. աշխ., էջ 49-53: ՏՆՈՒ նաև Багратян К., Годы, подвиги, судьбы, Киев., 1998:
21. ՏՆՈՒ Թուրքյան Ա., Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1951, թիւ 9 (308):
22. Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 181-182:
23. ՏՆՈՒ Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», 1932, փետրուար, թիւ 4:
24. ՏՆՈՒ Ջորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներին, Փարիզ, 1945, էջ 25-27:
25. ՏՆՈՒ Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», 1932, փետրուար, թիւ 4:
26. ՏՆՈՒ Ջորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներին, էջ 27:
27. ՏՆՈՒ Ահարոնյան Ա., Ավարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», 1932, փետրուար, թիւ 4:
28. ՏՆՈՒ ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թթ. 55-63:

Չարենցը հրատարակիչ

Դավիթ Գասպարյան

Բանասիրական. գիտությունների. դոկտոր, պրոֆեսոր

Ինչո՞ւ է «Դրօշակը» հայոց պետականության թեմային նվիրված մայիսյան համարում տպագրում Եղիշե Չարենցի մասին հոդված: Նախ նշենք, որ 2022 թվականը հորեյլանական ու հիշատակելի տարի է մի քանի առումներով. այս տարի լրանում է մեծ բանաստեղծի 125 ամյակը, ուղիղ 110 տարի առաջ տպագրվել է պոեզիա առաջին բանաստեղծությունը, իսկ 85 տարի առաջ ազգային բանաստեղծը դարձավ խորհրդային տոգրալիարար համակարգի զոհը:

Փոխարենը նրա, որ ՀՀ իշխանությունը պետական մակարդակով անդրադառնալու այս կարևոր իրադարձություններին Երևանում տեղի ունեցան հավուր պատշաճի կազմակերպված ինչ-ինչ միջոցառումներ, որոնք աննկար մնացին լայն հանրության համար:

Եղիշե Չարենցը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին կեսին ասպրեզ մուտք գործած այն մեծերից է, ով վերածնվող պետականության մշակութային-հասարակական կյանքի հիմերից դարձավ՝ որպես այդպիսին անշուշտ շար ավելին կարող էր անել, եթե իր ազգային միտքն ու երազները տեղավորվեին համայնավարական ասպագային ուղեգծի ու գաղափարախոսության նեղ շրջանակում:

Ազատ անկախ ու հզոր Հայաստանի համար Չարենց անունը լինելու էր այցեքարտ, որով մենք հպարտորեն ներկայանալու էինք 20-րդ հեղափոխական դարի գրական մեծերի պատնասին: Չնայած ամեն ինչին Չարենցը մնում է այդպիսի երևույթ ու արժեք: Նրա հոգևոր ժառանգությամբ սերունդներ են կայանալու, որոնք վեր են խոյացնելու ու հզորացնելու են հայոց ինքնության, գրականության և մշակույթի ամրակուտ շենքը:

1928 թ. հուլիսի 1-ին Չարենցն աշխատանքի է անցնում Հայաստանի պետական հրատարակչությունում (Հայպետհրատ, Պետհրատ). նրա աշխատանքային գործունեության ութ տարիները կարելի է բնորոշել որպես Չարենցի դար: Ընդունվում է որպես գեղարվեստական ենթաբաժնի վարիչ: Ըստ Պետհրատի հրամանների գրքի՝ պարտականություններն էին՝ կարդալ մուտքագրվող գեղարվեստական գրականությունը, գեկուցել հրատարակչական հանձնաժողովին, հրատարակվելիք գրքերը խմբագրել, «որպիսի աշխատանքի համար նա ստանում է ֆիքս հոնորար երկու հարյուր (200) ռուբլի: Ընկ. Չարենցը այդ աշխատանքներով բացի իր տանը պարապելուց, պարտավոր է ցերեկվա ժամը 11-ից մինչև 2-ը աշխատել պետհրատի գրասենյակում»:

1930 թ. հունիսի 1-ին կազմավորվում է գեղարվեստական բաժին, և այդ բաժնի վարիչ է նշանակվում նախկին գեղարվեստական ենթաբաժնի վարիչ Չարենցը՝ 250 ռուբլի աշխատավարձով: 1930 թ. սեպտեմբերի 21-30-ը ժամանակավորապես կատարում է Պետհրատի վարչության նախագահի պարտականությունները:

1934 թ. ապրիլի 1-ին նշանակվում է դասականների հրատարակչության պատասխանատու խմբագիր և այդ պաշտոնից մարտի 7-ի թիվ 20 հրամանով ազատվում 1935 թ. մարտի 8-ին. «Հիմք – դիրեկտորի գրությունը»:

Հրատարակչական գործում Չարենցն ունի մնայուն և օրինակելի ներդրում, որ կարելի է ներկայացնել հետևյալ ենթակետերով՝ ա) Չարենցը և գրքի մշակույթը, բ) Չարենցի հրատարակած



գրքերը, գ) Չարենցը խմբագիր, դ) Չարենցը և գրքի գեղագարդումը, ե) Չարենցի հրատարակչական համագործակցությունը ժամանակի նկարիչների ու երաժիշտների հետ, զ) Չարենցը և ժամանակի ընթացիկ գրականության հրատարակչությունը, է) Չարենցը դասական գրականության հրատարակիչ, ը) Չարենցը և թարգմանական գրական քաղաքականությունը, թ) Չարենցի դասագրքաստեղծ գործունեությունը, ժ) Չարենցը և Պետհրատի հրատարակչական քաղաքականությունը:

Պետհրատն սկզբում գտնվել է Բաֆֆու փողոցի երկհարկանի մի շենքում, բաղկացած էր չորս փոքր սենյակից (նույն սենյակում, Չարենցից բացի, նստում էին ևս երկու հոգի): Հրատարակչության դիմաց կարմրաքար Լուսավորիչ եկեղեցին էր, որը հետո

քանդվեց, իսկ ավելի ուշ այդտեղ կառուցվեց Չարենցի անվան դպրոցը: 1932 թ. Պետհրատը զբաղեցրել է ներկայիս Տեր-Գաբրիելյան փողոցի ներքևում գտնվող մեկհարկանի տան հինգ սենյակները: Այնուհետև տեղափոխվել է Տերյան փողոցում կառուցված պոնաշար շենքը:

Չարենցի քարտուղար-օգնականը Սուրեն Հարությունյանն էր: 1931 թվականից Չարենցի ղեկավարած բաժնում Գարեգին Բեսը եղել է մանկապատանեկան գրականության ենթաբաժնի վարիչը: 1932 թվականից Հուսիկ Խանդամուրը Պետհրատի արխիվի վարիչն էր: Արտադրական բաժնի վարիչը Գարեգին Լևոնյանն էր, նույն բաժնում աշխատում էր Տաճատ Խաչվանքյանը:

Չարենցի օրոք Պետհրատի տնօրեններ են եղել Միսակ Էփրիկը (նախ՝ հրատարակչության, ապա՝ տպարանի), Նշան Մակինցը և Էդվարդ Չոփուրյանը:

Որպես հրատարակիչ՝ Չարենցը ընդառաջում էր հեղինակներին, հետևում գրքի տպագրության բոլոր փուլերին՝ խմբագրում, շարվածք, սրբագրում, ձևավորում. արտադրական հարցերում պահանջկոտ էր ու խիստ:

«Թեև Չարենցը պաշտոնապես միայն գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր, բայց նա հրատարակչության հոգին էր: Դասագրքերի բաժնի վարիչից սկսած մինչև երաժշտական, ռազմական բաժնի վարիչները՝ իրենց պլանները կազմելիս խորհրդակցում էին նրա հետ... <...>: Չարենցը շատ զգայուն էր նաև մարդկանց նյութական կարիքների նկատմամբ: Նա ժողկոմխորհի նախագահին է դիմել մի շարք գրողների ազգականներին, այդ թվում՝ Բաֆֆու քրոջը օգնելու համար <...>: Մի օր Չարենցը ինձ ցույց տվեց թղթերի մի կապոց և ասաց.՝ Սա իմ աշխարհից գնալուց հետո լույս կտեսնի» (Հուսիկ Խանդամուր, «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», Եր., 1986, էջ 407-416):

Տպագրել է հայ և համաշխարհային գրականության դասականների, ժամանակակից հայ և խորհրդային գրողների երկերը, հիմնել է «Էժանագին գրադարան» և «Կոմերիտական գրողներ» մատենաշարերը: Վերջին մատենաշարով խմբագրել է տպագրել է երիտասարդ գրողների առաջին գրքերը՝ Վահան Գրիգորյան. «Անիվի երգը», Սարգիս Պայազատ. «Մանր մարդիկ», Արմենակ Թամազյան. «Հայացքներ», Սուրեն Վահունի. «Երկու երգ», Աղաժնի. «Արտերի լիրիկան», Գարեգին Բես. «Կյանքի երգը»... Այս և համանման գրքերի կապակցությամբ ասել է. «Էս ստիխների մեջ, իհարկե, նոր շունչ կա՝ մաշինա, տրակտոր, ռեյս: Եվ մագալուն էն է, որ էդ բոլորը, բան ու գործ թողած, մի գլուխ երգում են: Մաշինան երգում է, տրակտորը երգում է, ռեյսը երգում է: Ամեն ինչ երգում է, բացի մարդուց: Ինչի՞: Մարդը չկա, այ թե ինչի: Որ լինե, էն էլ երևի երգեր: Տղաները մաշինան տեսել են, տրակտորը տեսել են, ռեյսը տեսել են, դրանց վրա աշխատող մարդուն՝ չէ: Մենակ, հայ-հարայ, մենակ. երկիր իմ՝ խնդա՛մ, թնդա՛մ» (Գարեգին Բես, Հուշանովելներ, Եր., 1985, էջ 152):

Այնուամենայնիվ, «Առաջին գիրք»-ով կյանքի կոչեց բազմաթիվ գրողների: Տպագրել է վաղվա հույսով՝ գտել-մաղելով գրականության դոները՝ բախող բանվոր հարվածայինների, կոմերիտ գրողների, գյուղ-գրողների ստվար շարքերը. «Շաբաթ չէր անցնում, որ մեկը ձեռագիրը ձեռքին կամ թևի տակ չերևար պետհրատում: Շաբաթ չէր անցնում, որ որևէ ժողովածու չգնար տպարան: Ամիս չէր անցնում, որ մեկ-երկու գիրք չստանայինք այնտեղից» (նույն տեղում, էջ 152):

Երկար է սպասել Խաչիկ Դաշտենցին. 1925 թ. Գյումրիում որբաշխարհի հետ հանդիպմանը տեսել կանչել էր, ներկայացավ 1932 թ.: Առաջին ընթերցումով անգիր էր արել նրա «Իմ վայրենի վարդենի» քերթվածը: Շատ արագ խմբագրում և տպագրում է «Երգերի գիրք»-ը (1932): Տպարանում, ըստ հեղինակի նախապես նախընտրած գույնի, փոխել է տալիս արդեն տպագրված շապիկը. «Ծավխը: Մի քանի մանեթ չի՞, ես կտամ: Բա՛ ինչպես, Դաշտենցի նման բանաստեղծին իր ուզածի պես պիտի հասցնել ընթերցողին» (նույն տեղում, էջ 162):

Թե՛ հրատարակչությունում աշխատելիս, թե՛ հետո ոչ միայն երիտասարդ գրողների ուսուցիչն էր ու առաջնորդը, այլև վարպետ-դաստիարակը. առանց ուշացնելու կարդում, խմբագրում, տպագրում էր նրանց գործերը, երբեմն՝ մկրտում գրական հնչեղ անուններով ու ճանապարհ բացում նրանց առջև: Այդ շարքը մեծ է՝ սկսած Գուրգեն Մահարուց, Նաիրի Զարյանից, Վաղարշակ Նորենցից, Մկրտիչ Արմենից, Գեղամ Սարյանից, Արտաշես Տեր-Մարտիրոսյանից (որին խոսքի ընկեր դարձրեց իրեն ու բանաստեղծություններ նվիրեց «Պոեզոգություն»-ում), Խաչիկ Դաշտենցից մինչև Վահան Գրիգորյան (տպարանի պատի թերթում 1928 թ. կարդում է «Անիվի երգը», հավանում, խրախուսում է հեղինակին, ով 1930 թ. լույս տեսած իր առաջին գիրքն այդպես էլ վերնագրում է), Խաչիկ Հրաչյան (արագացնում էր գրքերի տպագրությունը, փոխում Մեսրոպյան ազգանունը), Թաթուլ Հուրյան (Խաչատրյան ազգանվան փոխարեն ինքը՝ Թաթուլը, ընտրել էր կրկեսային մի դերասանի Զոլոյ ծածկանունը, Չարենցը Խաչատրյան-Տրյան-Տուրյան անցումով դարձնում է Հուրյան, ասում՝ եթե վատ գրի, կդառնա Զուրյան: Կանգնել է կողքին, հասակները չափել են, Չարենցի հասակին է եղել: Նրան կարդացել, խմբագրել և 1927 թ. Բաքվի «Կոմունիստ» հայերեն թերթում աշխատելիս տպագրել է առաջին բանաստեղծությունները), Գարեգին Բես (Մարինյան ազգանունը ինքն էլ դարձրել է Բես, ստանալուց երեք օր անց Չարենցը տպագրել է առաջին պատմվածքը), Սուրեն Թաթյան (Թարվերդյան-Թարենց-Թաթյան, գրական ստուդիայում եղել է Չարենցի սանը, այցելել է նրան, հինգ տարով դատապարտվել է ըստ Քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածի 10-րդ կետի՝ հակախորհրդային քարոզչության մեղադրանքով, մահացել է աքսորավայրում), Արագած Ավետիսյան (1917 թ. ծնված այս աղքատ տղային նվիրել է

իր հագուստները: ՆԳԺԿ-ն նրան առաջարկել է համագործակցել, մերժումից հետո այնպես են խփել գլխին, որ ցնցում է ստացել: Մահացել է 1950-ականներին ավտովթարից), Մկրտիչ Խերանյան (գյուղական դպրոցի ուսուցիչ էր. տեղափոխել է Երևան), Սողոմոն Տարոնցի, Խորեն Ռադիո (խրախուսել է, խմբագրել ինքնուրույն ու թարգմանական գրքերը), Հովհաննես Շիրազ («Գարնանամուտ»-ի համար գրած Ալազանի առաջաբանը նկատի ունենալով՝ ասել է. «...օգնելու փոխարեն, էս է, կփչացնեն այս շնորհալի բանաստեղծին»), Գևորգ Էմին, Վախթանգ Անանյան, Գևորգ Հայրյան, Արաքս, Հայկազ Վարդանյան (երաժիշտ, ուղարկել է Մոսկվայի երաժշտանոցում բարձրագույն կրթություն ստանալու, Պետհրատի հաշվին նշանակել թոշակ), Մարգար Դավթյան, Հարություն Թուրջյան («Թող Բաքուն ու վարժապետությունը և արի Երևան, դու լավ թարգմանիչ կդառնաս»: Եկել է, և Չարենցն ամեն ինչով նպաստել է նրա կայացմանը), Հռիփսիմե Պողոսյան, Վահան Արամունի (փոխել է Գևորգյան ազգանունը, տպագրել, նյութապես օժանդակել), Գրիգոր Գարունց, Հենրիկ Թումանյան, Գրիգոր Հակոբյան, Սամվել Գրիգորյան, Արաք Շամիրով, Աղաճի, Աթանես Սենալ (հավանել է «Արևային գրոհ, արևային գրոհ, // Արևային ոսկու անեգրական շերտեր» տողերի յամբերը), Հուսիկ Խանդամուր (հայրենադարձվելուց հետո լուծել է աշխատանքի հարցը, ուղարկել սովորելու, նպաստել բնակարան ստանալու հարցում), անգամ՝ Բաբկեն Կարապետյան, ով Գյումրիից Չարենցի մոտ էր գնացել «Ռեկսերի սիրտը» բանաստեղծությամբ, Ցական Շողենց՝ դարձյալ Գյումրիից՝ «Շրջադարձի երգեր»-ով («Նա չարանում էր այս կամ այն հեղինակի բնավորության բացասական կողմերի համար, սակայն նրանց ստեղծագործությունը պախարակող որևէ խոսք չէր ասում» (ԳԱԹ, Ց. Շողենցի ֆ., 57)):

Նորաթուխ պոետներից շատերն անգամ չգիտեին՝ ինչ է հոնորարը, բայց ստանում էին, չգիտեին՝ որտեղ է Մոսկվան, բայց գործուղվում էին սովորելու: Կոչ էր անում լեզուներ սովորելու, «Թե չէ Սարյանն ու Նորենցը Հայնե են թարգմանում, Մեծարենց է ստացվում» («Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, էջ 242): Այսինքն՝ բնագրի լեզուն չգիտեին, միջնորդ ռուսերենից էին թարգմանում: Խրախուսել է Վաղարշ Վաղարշյանին՝ գրելու «Օղակում» (1929) թատերգությունը: «Չարենցը շատ ուշադիր էր գրական նոր կադրերի նկատմամբ և մտահոգված մեր գրականության ապագայով: Նա մանկական հրճվանքով էր դիմավորում մամուլում երևացող նոր, շնորհալի սկսնակներին: Նրա նախաձեռնությամբ պետհրատն իրար ետևից լույս ընծայեց սկսնակ գրողների առաջին գրքույկների մի ամբողջ շարք» (Վ. Նորենց), «Եվ մեր բարեբախտությունն էր, որ մեզանից յուրաքանչյուրի ստեղծագործական կազմավորման այդ շրջանում մենք ունեինք Չարենցի նման գրական ուսուցիչ և բարեկամ: Եթե ասեն նա մեզ անցնում էր ամենայն քնքշությամբ և



Չարենց

խնամքով, դա կլինի միանգամայն ճիշտ, բայց չի տա այդ անցնման իսկական արտաքին պատկերը» (Մ. Արմեն, «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Եր., 1961, էջ 196, 228-229, 237): «...այնքան բարձր գնահատեց իմ առաջին գրչափորձերը, որ կարելի էր զարմանալ, որտեղից նրա մեջ սիրո այդքան մեծ մակընթացություն այն տարիների գրական երիտասարդության հանդեպ» (Խորեն Ռադիո, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 2017, թիվ 4, էջ 53):

Խմբագրական աշխատանքը հիմնականում կատարում էր հեղինակի ներկայությամբ. բառը, տողը փոխում, ուղղում էր տեղնուտեղը, հավելյալ աշխատանքի համար հեղինակին ասում էր. «Մա պետք է փոխել: Այստեղ ուրիշ նրբերանգ է անհրաժեշտ: Այստեղ հանգը շատ աղքատ է: Փոխիր փոխիր: <...>: Փոխիր հանգը, փոխիր նրբերանգը, բայց ինչպես փոխել, նա դա չէր ասում: Իհարկե, ոչ այն պատճառով, որ ինքը չէր կարող գտնել փոխարինող: Պարզապես, ըստ նրա, դա խորհրդատվության ճիշտ ձև չէ և վիրավորանք է գործընկերոջը» (նույն տեղում, էջ 45):

Չարենցի ուրախառիթ պահերից մեկը երիտասարդ գրողի առաջին տպագրված գիրքը իր ձեռքով նրան հանձնելն ու «Մուտքդ բարի» ասելն էր:

Մեծ է Չարենցի վաստակը երաժշտական հրատարակությունների գործում՝ Ա. Սպենդիարյան. «Պարսկական քայլերգ», Ս. Բաբխուդարյան. «Արևելյան պարեր», Ա. Տեր-Ղևոնդյան. «Ախթամար» (սիմֆոնիկ պոեմ), Ն. Տիգրանյան. դաշնամուրային ստեղծագործություններ, այլազգի ժողովուրդների երաժշտություն... Տպագրում է 10-ամյա Առնո Բաբաջանյանի «Պիոներական քայլերգ»-ը:

Ըստ էության, Չարենցը նախաձեռնում ու սկսում է հայ դասականների երկերի գիտական հրատարակությունը: Այս շարքում են Հ. Պարոնյանը, Գ. Սունդուկյանը, Հ. Թումանյանը, Մ. Մեծարենցը... Անփոխարինելի է նրա դերը «Մասնա ծոեր» դյուցազներգության պատումների առաջին հատորի հրատարակության գործում:

Չարենցը թե՛ հեղինակի հանդեպ, թե՛ որևէ երկի հրատարակության առումով շատ ուշադիր էր: Դեռ նոր էր անցել աշխատանքի, երբ 1928 թ. հուլիսի 12-ին

Երևանից նամակ է հասցեագրում Թիֆլիս՝ Մաթևոս Դարբինյանին. «Նախ՝ «Կիկոսը» այնքան լավ է, որ ոչ մի рекомендация-ի կարիք չունի: Երկրորդ՝ եթե հրատարակության գործն այդտեղ գլուխ չեկավ՝ գրիր ինձ, ես կաշխատեմ այստեղ անցկացնել: Այժմ ես աշխատում եմ Պետհրատում, գեղարվեստական բաժնում և կարծում եմ, որ կոլեգիան սիրով կհամաձայնվի տպագրել քո գեղեցիկ գործը» (ԳԱԹ, ՉՖ, 188): Չանցած մի քանի օր՝ 1928 թ. հուլիսի 23-ին, Թիֆլիս՝ Մ. Դարբինյանին է ուղարկում «Կիկոսը» վիպակի իր «Երկու խոսք» առաջաբանը: Նյութը հայ գյուղն է քաղաքացիական կոիվների շրջանում. «Հեղինակը կարողացել է գեղարվեստական պրիմների զարմանալի պարզությամբ տալ սոցիալական շերտավորման այն պատկերը, որ գոյություն ունի Հայաստանի գյուղում նոյեմբերյան օրերին: Վիպակի աշխույժ սյուժեն և հեղինակի առողջ հումորը գիրքը դարձնում են հետաքրքիր և հեշտ ընթերցելի» (Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. VI, Եր., 1967, էջ 660): «Կիկոսը» Չարենցի «Երկու խոսք»-ով լույս է տեսնում 1929 թ. Երևանում: Իսկ ռուսերեն թարգմանության համար 1930 թ. մարտի 3-ի երկտողով տեղեկացնում է Մ. Դարբինյանին. «Այն գլուխը, որ մտադիր ես ավելացնել «Կիկոսին» – շուտ ուղարկիր: Կարծում եմ, որ լավ կլինի ավելացնես»:

1929 թ. սեպտեմբերի 11 – հոկտեմբերի 26-ը Չարենցը Հայպետհրատից գործուղումով մեկնում է Լենինգրադ: Հրատարակչական գործն ուսումնասիրելուց զատ՝ այստեղ գրում և հղանում է բազմաթիվ գործեր, որոնք գետեղում է «Էպիքական լուսաբաց»-ում՝ «Թուրթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից», «Ձմեռային պալատի ներքնահարկում», «Հոկտեմբեր 25-26 1917», «Ներբող առ քննադատ № №», «№-ին Լենինգրադից», «Լենինգրադյան սենտենց», «Անկարելի սեր»: «Հրաժեշտ Լենինգրադին» բանաստեղծությունը թվագրված է 26. X. 1929: Լենինգրադյան միջավայրը՝ քաղաքը, Նևան, առավոտյան աշխատանքի շտապողների ձիգ շարքերը, նրան մղում է դեպի մոնումենտալ ռեալիզմ: Լենինգրադից մեկնում է Մոսկվա, այցելում հրատարակչություններ և նոյեմբերի 27-ին վերադառնում Երևան, թեև գործուղման ժամկետն ավարտվելու էր դեկտեմբերի 9-ին:

Կան ուշագրավ մակագրություններ: 1930 թ. մարտի 22-ին Ն. Զարյանի «Պայքարի և կառուցման էպոպեա» գրքի ձեռագրի վրա մակագրել է. «Հանել «Կառուցողները», «Վարդան Վարազյան»-ը, «Հնոցի մոտ»-ը և ավելացնել «Ռուշանի քարավեր»»: 1932 թ. սեպտեմբերի 8-ին մակագրել է Մկրտիչ Զանանի «Բանվոր քեռին Արևելքում» պիեսի ձեռագրի տիտղոսաթերթի վրա. «Ժամանակին ընդունվել է տպագրության, բայց հետաձգվել է: Այժմ հնացել է, բայց քանի որ տպագրությունը չի կայացել ոչ հեղինակի պատճառով, անհրաժեշտ է հեղինակին վճարել ամբողջ հոնորարը»: 1931 թ. փետրվարի 10-ին մակագրել է Հ. Հակոբյանի «Նոր առավոտ (Ընտիր բանաստեղծություններ)» գրքի ձեռագրի վրա.

«Գտնում եմ անհրաժեշտ հրատարակել անվտիտիս»:

Տպագրական ընթացքի մասին 1931 թ. հուլիսի 19-ին մակագրել է Արագու «Լույսեր» պատմվածքների ժողովածուի վրա: 1931 թ. օգոստոսի 5-ին Թ. Տարեկանյանի «Մարդն «անիրավ» բոլորին կերավ» պոեմի ձեռագրի վրա մակագրել է. «Չի տպվի: Վերադարձնել հեղինակին»: Հենրիկ Թումանյանի «Երգեր պղնձի ու հողի» (1931) ժողովածուի վրա մակագրել է. «Անհրաժեշտ է ընտրել, խմբագրել, որից հետո կարելի է առանձին գրքույկով «Երիտ-պրուետ գրողներ» սերիայում, Չարենց, 931. VI. 4»: Վարսենիկ Աղասյանի ժողովածուի վրա՝ «Դնել քննության, 22. VIII, 931», այնուհետև՝ «Վերադարձնել հեղինակին, հայտնել, որ ընտրված նյութերը լույս կտեսնեն առանձին գրքույկով 1932 թվին: 1931, XII. 15, Չարենց», Մարո Մարգարյանի «Անցյալի զոհերից» պատմվածքի վրա՝ «Անշուշտ կարդալ և տալ գրավոր կարծիք: Եթե ընդունելի է՝ խմբագրել, Չարենց. 14. VI. 1932»:

Ջբաղվել է կազմակերպական հարցերով: 1930 թ. հունիսին «Գրական դիրքերում» ամսագրի 6-րդ համարում տպագրում է «Պետհրատի 1930 թ. գեղարվեստական գրականության հրատարակչական պլանը» հաղորդումը. «Այս տարի հրատարակվող գեղարվեստական գրականությունը երկու անգամ ավելի է լինելու նախորդ տարիների հետ համեմատած: <...> նախատեսված են հետևյալ սերիաները: Պրոլետարական գրականություն, Խորհրդային գրողների ֆեդերացիա, հայ կլասիկներ, ռուս կլասիկներ, եվրոպական կլասիկներ, ռուսական պրոլետգրականություն, անդրկովկասյան գրականություն, միջազգային հեղափոխական գրականություն, քննադատություն, արվեստ, մանկական, պատանեկական, կոմսոմոլի, քաղյուսվարական սերիաներ և այլն»:

1930 թ. օգոստոսի 8-ին Չարենցը նախագահում է Պետհրատի գրական-գեղարվեստական բաժնին կից գրական հանձնաժողովի նիստը: Քննարկվում են Թադևոս Ավդալբեգյանի խմբագրությամբ կազմված Հովհաննես Հովհաննիսյանի ժողովածուն վերանայելու, Վեսպերի գրվածքները տպագրելու, Վարդան Աճեմյանի «Գեղարվեստական ընթերցանության ձեռնարկ»-ը մասնագիտական եզրակացության ուղարկելու, Տիգրան Տաթևի «19-րդ դարի նորագույն վրաց գրականություն» աշխատությունը, Սիրասի «Մանյակ» վեպը, Ռաշիդի «Արյունոտ սկուտեղ» գրվածքը, Հ. Հակոբյանի բանաստեղծությունների գրքանի գրքույկը, Պոլունորովի զրվածքները հրատարակելու, Ալազանի «Կապույտ գլխաշոր»-ը, Զորյանի «Մպիտակ քաղաք»-ը և քաղաքացիական կոիվների շրջանից մի վիպակ, Դեմիրճյանի «Կրակե գծում»-ը, Թոթովենցի «Բագու» վեպի 2-րդ հատորը «կոնտրակտացիայի ենթարկելու», Անուշավան Վարդանյանի «Նախօրյակին», Ղարաբյուրյանի «Փոքրիկ թյուրիմացություն», Բորիսովսկու «Վերջին ճիչ», ՀԱՄԽ-ից ուղարկված հինգ այլ թատերգությունների հրատարակության և գրական հանձնաժողովի անդամներին գրվածքներ կարդալու

ու գրավոր կարծիքներ ներկայացնելու համար հոնորար վճարելու հարցերը: Հետաքրքրական են Հովհաննիսյանի ժողովածուի կազմմանը վերաբերող դիտողությունները՝ որպես ժողովածու կազմելու սկզբունք: Չարենցն առաջարկում է գիրքը ներքուստ չմասնատել, հանել ենթաբաժինների վերնագրերը, նյութերը վերադասավորել ժամանակագրական կարգով և դնել տարեթվերը, տպագրվածներից հետո դարձյալ ժամանակագրական կարգով գետնել անտիպները, ավելացնել թարգմանությունները, գետնել հեղինակին նվիրված հոդված:

Պետհրատի վարչության որոշմամբ՝ պլանների կատարման և աշխատանքային կարգապահության վերահսկման նպատակով 1931 թ. մայիսի 12-ին Չարենցը կցվում է լիտոգրաֆիայի և ցինկոգրաֆիայի արտադրամասերին: 1931 թ. մայիսի 15-ին մասնակցում է Պետհրատի վարչության նիստին, որտեղ նրան հանձնարարվում է երկու օրվա ընթացքում կազմել 1932 թ. հրատարակչական պլանը: Իսկ 1931 թ. մայիսի 21-ին, Պետհրատի վարչության որոշմամբ, Չարենցին և Պետհրատի նախագահ Մակինցին առաջարկվում է երկու օրվա ընթացքում հաստատման ներկայացնել հրատարակչության 1931 թ. թեմատիկ պլանը:

1931 թ. հունվարին Էդուարդ Խոճիկյին հասցեագրված անթվակիր նամակում Չարենցը դիմում է նրան՝ տրամադրելու իր մոտ եղած նյութերը՝ Հակոբ Պարոնյանի երկերի լիակատար ժողովածուն տպագրության պատրաստելու համար: Ի հատորը Չարենցի խմբագրությամբ տպագրվում է 1931 թ. (լույս է տեսել 11 հատորով, հրատարակությունն ավարտվել 1948 թ.):


Չարենցի խմբագրությամբ Պետհրատը շատ գրքեր է լույս ընծայել: Կարևորներից է 1930 թ. նոյեմբերին Երևանում տպագրված «Արևմտահայ բանաստեղծներ» ժողովածուն (կազմողներ՝ Ալազան, Նորենց, առաջաբանը՝ Վանանդեցու):

1931 թ. մարտի 16-ին Պետհրատի վարչությունը որոշում է «Գեղարվեստական բաժնի վարիչ ընկեր Եղիշե Չարենցին 40 օրով գործուղել Մոսկվա և Լենինգրադ՝ գեղարվեստական գրականության հրատարակությունների գործն ուսումնասիրելու համար: Ընկեր Չարենցի բացակայության ընթացքում գեղարվեստական բաժնի վարիչի պարտականությունների կատարման գործը դնել ընկեր Ստեփան Զորյանի վրա» (ՀԱԱ, ֆ. 21, ց. 3, գ. 2, թ. 12):

Պետհրատում աջակցել է քրդական գրականության բաժնի աշխատանքներին (տե՛ս «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», էջ 125):

Ահա Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Չարենցի աշխատանքային գործունեության միայն մի քանի տարիների շատ համառոտ ժամանակագրությունը:

1931, 15 մայիսի – Վրացերեն նախատեսվող հայ գրողների ժողովածուի համար Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների միությունից գրությամբ պահանջում է համապատասխան երկերի



Մ. Սարգսյան «Եղիշե Չարենցի դիմանկարը»

ցուցակ և առաջարկությամբ դիմում Վրաստանի պրոլետարական գրողների ասոցիացիային՝ նյութերն ընտրելու, ինչպես նաև թարգմանության հարցը համակարգելու նպատակով Երևան գործուղել իրենց ներկայացուցչին:

1931, հունիս – Պատասխանում է Սուրեն Ավչյանի նամակին՝ վրաց գրականության անթուղիա հրատարակելու առաջարկության կապակցությամբ:

1931, 10 հունիսի – Պետհրատի վարչության որոշմամբ՝ Չարենցին հանձնարարվում է զբաղվել հեղինակների և թարգմանիչների հետ բանակցել-պայմանավորվելու և հրատարակչական տեխնիկային վերաբերող հարցերով:

1931, 13 հունիսի – Գրություն է հղում Հարություն Զյուղուրյանին և ներկայացնում նրա «Մոռացված աշխարհ» պատմվածքների ժողովածուի ու նրա կազմած Արշակ Ագապյանի «Երկերի ժողովածու»-ի տպագրության աշխատանքների ընթացքը:

1931, 19 հունիսի – Գրություն է հասցեագրում Արազիին՝ վերջնական տարբերակով տպագրության ներկայացնելու իր «Լույսերը» պատմվածքների ժողովածուն:

1931, 2-3 հուլիսի – Պետհրատի վարչության նիստում Չարենցը զեկուցում է երաժշտական բաժնի ստեղծելու, հրատարակությունների արտաքին ձևավորման, բաժինների վարիչների ֆինանսական հնարավորությունների մասին: Քննարկումներից հետո գեղարվեստական բաժնին կից Չարենցի գլխավորությամբ ստեղծվում է երաժշտական մասնաճյուղ:

Նույն նիստում զեկուցում է գրքի արտաքին ձևավորման կարևորության մասին, ինչի համար բացվում է նկարչի լրացուցիչ հաստիք:

Նույն նիստում, իր դիմումի համաձայն, ազատվում է հրատարակչական բաժնի վարիչի լրացուցիչ

պարտականությունից և դիմում՝ ազատվելու աշխատանքից. «Լսեցին. Ընկեր Եղիշե Չարենցի հրաժարականի հարցը: Որոշեցին. Ընկեր Եղիշե Չարենցի դիմումը՝ պետհրատի աշխատանքներից ազատվելու մասին, ընդունել անհիմն և մերժել» (Չարենց Ե., Գիրք մնացորդաց, Եր., 2017, էջ 295):

1931, 8 հուլիսի – Նամակ է հասցեագրում Թիֆլիս՝ Ռուսթավելու «Վագրենավոր»-ի թարգմանիչ Գևորգ Մուրադյանին. «Խնդրում ենք գալ Երևան՝ պայմանագիր կնքելու համար»: Պայմանագիրը կնքվել է 1932 թ. հունվարի 29-ին: Ստացած թարգմանության ձեռագրի վրա 1932 թ. մարտի 15-ին Չարենցը մակագրել է. «Դնել քննության» (ՀԱԱ, Գ. Մուրադյանի ֆ., 17; Գևորգ Ռոմանի Մուրադյան՝ մանկավարժ, գրականագետ, երկրաբան, ֆ. 419): Տիգրան Հախումյանից ու Գևորգ Ասատուրից հետո պոեմի վերջնական խմբագրությունը պետք է աներ Չարենցը: 1935 թ. դեկտեմբերի 5-ին «Ջարյա Վոստոկա»-ն տպագրել է գրույց Չարենցի հետ՝ որպես «Վագրենավոր»-ի խմբագրի: Գիրքը լույս է տեսել 1937-թ.՝ առանց Չարենցի վերջնական խմբագրության: Որպես թարգմանիչ նշված է Գևորգ Ասատուրը, խմբագիրներ՝ Ն. Ջարյանը և Գ. Սարյանը: Մուրադյանի թարգմանությունը համարվել է տողացի, անունն անգամ նշված չէ (տե՛ս «Չարենցը և իր ժամանակաշրջանը», Եր., 2019, էջ 28-34):

1931, 9 հուլիսի – Պետհրատի վարչությունը որոշում է «Երաժշտական կոլեգիայի նախագահի պարտականությունները դնել գեղարվեստական բաժնի վարիչ Եղիշե Չարենցի վրա» (Չարենց Ե., Գիրք մնացորդաց, էջ 295):

1931, 6 օգոստոսի – Պետհրատի վարչության նիստում որոշվում է Չարենցին և Գևորգ Պարիսին գործուղել Թիֆլիս՝ մասնակցելու հրատարակիչների տարեկան գործունեությանը նվիրված Անդրֆեդերացիայի լուսավորության աշխատողների խորհրդակցությանը:

1931, 14 օգոստոսի – Թիֆլիսում մասնակցում է Անդրկովկասի գրահրատարակիչների խորհրդակցությանը, հանդես գալիս զեկուցումով (տե՛ս Հակոբյան Գ., Կենսագրական պատառիկներ, «Չարենցյան ընթերցումներ», IV, Եր., 1979, էջ 190):

1931, 14 օգոստոսի – Պետհրատի վարչության որոշմամբ՝ Չարենցին և այլոց հանձնարարվում է 15 օրվա ընթացքում կազմել դասագիրք՝ Հայրապետ Հայրապետյանի մերժված «Նոր գյուղ» դասագրքի փոխարեն: Այս կապակցությամբ ավելացնենք՝ իր գործունեության հետագա տարիներին դպրոցների և տեխնիկումների համար Չարենցը կազմել է 14 անուն դասագիրք և մշակել դրանց մեթոդական ուղեցույցները:

1931, 26 օգոստոսի – Պետհրատի վարչության նիստում Չարենցը զեկուցում է տպարանի աշխատանքի կազմակերպման և արտադրանքի որակի մասին:

1931, 28 հոկտեմբերի – Պետհրատի վարչության որոշմամբ՝ Չարենցին արձակուրդ է տրվում

նոյեմբերի 1-ից. «....արձակուրդը Կիսլովոդսկում վերջացնելուց հետո տալ նրան 15 օրով Մոսկվա գործուղում՝ նոտաների տպագրության գործը ուսումնասիրելու և Երևանում կազմակերպելու համար» (Չարենց Ե., Գիրք մնացորդաց, էջ 294): Նույն նիստում որոշվում է Չարենցին ընտրել երաժշտական մրցանակաբաշխության հանձնաժողովի փոխնախագահ և հանձնարարել մշակել կատարվող գործերի վարձատրության չափը:

1932, 5 փետրվարի – Չարենցը պայմանագիր է կնքում Արշակ Աթայանի հետ՝ նրա թարգմանությամբ տպագրելու Օմար Խայամի քառյակների ժողովածուն: Այդ կապակցությամբ գրում է գրություններ, անում մակագրություններ (շուրջ հազար քառյակից կատարում է ընտրություն. նախ՝ 500, ապա՝ 400), խմբագիր նշանակում է նախ Նորենցին, ապա՝ Գ. Սարյանին, բայց ինքն էլ վերամշակում է 28, խմբագրում շուրջ 100 քառյակ (պահվում են ԳԱԹ, ԶՖ): Գիրքը տպագրվել է 1936 թ. հունվարին. ընդգրկում է 400 քառյակ: Չարենցն ինքն էլ քառյակի (ռուբայի) վարպետ էր. 1927 թ. հրատարակել էր «Ռուբայաթ» ժողովածուն, 1932 թ. «Երկեր»-ում զետեղում է «Ռուբայաթ» բաժինը, 1934 թ. «Գիրք ճանապարհի»-ի «Գիրք իմացության» շարքում՝ «Ռուբայիներ» ենթաշարքը:

1932, 14 մարտի – Չարենցի անմիջական աջակցությամբ Պետհրատը լույս է ընծայում Տիգրան Տարիձեի «Վրաց նոր գրականություն (19-րդ դար. սեղմ ակնարկ)» գիրքը (թարգմանիչ՝ Ա. Ղուբանյան) և նրան ուղարկում հետևյալ մակագրությամբ. «Օ՛, Տիգրան: Թանկագին Տիգրանին: Քանի որ թղթի ճգնաժամի պայմաններում քո գիրքը ոչ այնքան փառահեղ ենք տպագրել, ուստի կարգադրեցի սույն օրինակը հնագույն հայ գրքերի կազմերի ոճով նրբաթերթ ոսկիով զօծեն: Ընդունիր և թող սիրտդ կախ չմնա Հայաստանի հրատարակչությունից: Սրտագին ողջոյն: Քո Եղիշե Չարենց: 1932. 03. 14, Երևան» («Չարենցյան ընթերցումներ», VI, Եր., 1998, էջ 185. այլ թվագրությամբ՝ 1932. 9. 14, և այլ թարգմանությամբ զետեղված է «Հուշեր Եղիշե Չարենցի մասին» գրքում (էջ 218)): Վրաց գրողի հետ մտերմության վկայություն է նաև 13. 06. 1927 թվագրությամբ երկտողը:

1932, սեպտեմբեր-հոկտեմբեր – Պետհրատի № 4 բյուրետնում Չարենցը ներկայացնում է տարվա ընթացքում լույս տեսած մանկապատանեկան և հուշագրական գրականության սեղմ բնութագրությունները: Այստեղ են Յոհաննես Բեխերի «Լուիզիտ», Ս. Ջորյանի «Մալիտակ քաղաք» վեպերը, Ն. Ջարյանի «Ռուշանի քարափը» պոեմը, Շավարշ Գարագաշի «Պայքարի ճամփին» հուշագրությունը: Անդրադարձներ կան Թաթուլ Հուրյանի, Ղևոնդ Կոմունու, Գրիգոր Գարունցի, Օկտյաբրինա Վարդյանի, Աթանես Սենալի, Հենրիկ Թումանյանի, Գրիգոր Հակոբյանի առաջին գրքերին: Ահա կարծիքներ. Ջորյանի վեպի մասին. «Հեղինակի այս նոր վեպում ներկայացված է գավառական քաղաքը՝ վերակառուցման ֆոնի վրա,

որն իր ասիական, գյուղական վիճակից դուրս է գալիս նոր օրերի շինարարական թափով և դառնում է սպիտակ քաղաք: Կառուցողների ոգևորությունը, ինչպես նաև նրանց անձնական կյանքն ու դրաման, գեղարվեստականորեն վերարտադրված են սույն վեպում»: Ջարյանի պոեմի մասին. «Հանրաժանությամբ պոեմը հեղինակի կողմից ենթարկվել է հիմնական վերամշակման և լույս է տեսնում երկրորդ հրատարակությամբ: Պոեմը պատկերում է գյուղի կուլեկտիվացումը՝ առաջին էտապից մինչև նրա ամրապնդվելը, անցնելով կազմակերպական բոլոր դժվարություններով՝ ինչպես գլխավորությո՞ւն, այնպես էլ պայքարի ու արյան միջով» (Հակոբյան Գ., Կենսագրական պատմություններ. «Չարենցյան ընթերցումներ», IV, 1979, էջ 186): Այս և մյուս դեպքերում նկարագրական խոսք է՝ առանց գնահատության կամ վերլուծության:

1932, 29 նոյեմբերի – Պետհրատի տնօրեն Էդվարդ Չոփուրյանի աշխատասենյակում Չարենցը պայմանագիր է ստորագրում Հայաստանում գտնվող Արշակ Չոպանյանի հետ «Նահապետ Քուչակի դիվանը» գիրքը վերահրատարակելու վերաբերյալ: Անշուշտ, Չարենցի նախաձեռնությունն էր՝ Խանջյանի իմացությամբ: Վճարվում է հոնորար, բայց Չ-երի դաշինքը չի իրականանում: Չարենցի և Չոպանյանի հրաժեշտը եղել է շատ զգայուն:

1932, 23 դեկտեմբերի – Գրությամբ տեղեկացնում է Դեմիրճյանին նրա երկերի ժողովածուի 2-րդ հատորին հատկացված տպագրական մամուլի ծավալի մասին:

1932, մարտ – Մազմանյանին, որի հետ ծանոթացել էր դեռևս 1922 թ. Մոսկվայում, հրավիրում է աշխատելու իր ղեկավարած գեղարվեստական բաժնի երաժշտական ենթաբաժնում և հրատարակում երաժշտական գրականություն՝ Կոմիտասի մեներգերը և խմբերգերի երկու ժողովածու, Ալ. Սպենդիարյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ն. Տիգրանյանի, Ս. Բարխուդարյանի առանձին երկեր, ժողովրդական, ակումբային, մանկական երգերի ժողովածուներ: Կոմիտասի երկերի պատասխանատու խմբագիրն էր: Հրատարակում է Անտոն Մայիլյանի «Հոկտեմբերիկների երգերի ժողովածու»-ն:

Պետհրատը նոտաներ տպագրելու հնարավորություն չունեւ. տպագրում էին Մոսկվայի կուլտուրայի տանը: Չարենցը կազմակերպում է նոտաների տպագրությունը Երևանում: Իր նախագահությամբ ձևավորում է Պետհրատի երաժշտական հանձնաժողով և տպագրում հավանության արժանացած գործերը: Հրատարակչական միջոցները սուղ էին, բայց նրա կողմից երբեք չէ՝ չկար: Երաժիշտների համար ընտրում էր հարմար բանաստեղծություններ, կազմակերպում ժամանակին հայտնի ոուսական երգերի խոսքերի հայերեն թարգմանությունը, նպաստում օպերային թատրոնի ստեղծմանը, ձայնագրման ստուդիա բացելու պահանջ է դնում: Ասում էր. «Խոսքը որքան էլ կատարյալ լինի, չի կարող փոխարինել մարդու էությունը՝ համակող կախարդական հնչյուններին»: Երագում էր, որ կինը դաշնամուր նվագել սովորի,

աղջիկներն ստանան երաժշտական կրթություն (տե՛ս «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», էջ 332): Այդ նպատակով Մոսկվայից գնում և Երևան է հասցնում դաշնամուր, որ զարդարում էր նրա վերջին բնակարանը:

1933, 17 հուլիսի – Վարսենիկ Աղայանին գրությամբ տեղեկացնում է. «Ձեր բանաստեղծությունների «Քաղաքում» ժողովածուի նյութերը հնացած են և հրատարակության համար աննպատակահարմար»:

1933, 29 նոյեմբերի – Լեւոնտովի երկերի թարգմանության հետ կապված՝ նամակ է հասցեագրում Լեյլին: Հավաստիացնում է, որ մինչ այդ ուղարկված սպառնական հեռագիրը (պայմանագրով նախատեսված թարգմանության ժամկետը խախտելու պատճառով վերադարձնել կանխավճարը) տրվել է ընդհանուր կարգով և առանց իր գիտության: Երբ Լեյլիի ամուսնուց իմացել էր, որ ուշացումը պայմանավորված էր նրա հիվանդությամբ, հուզվել էր (Տեր-Մկրտչյան Գ., Եղիշե Չարենց, «Հայրենիք», Բոստոն, 1964, փետրվար, թիվ 2):

1934, 1 հունվարի – Պետհրատի ձևաթղթով նամակ է հղում Կարեն Միքայելյանին. «Ուղարկում ենք Ձեզ Պուշկինի արձակ երկերի թարգմանության պայմանագրի պրոյեկտը» (ԳԱԹ, ԿՄՖ, 594):

1934, հունվար – Երկտողով դիմում է Պետհրատի տնօրեն Չոփուրյանին, որպեսզի Դաշտենցի «Գարնանային երգեր» գիրքը վերջինիս խնդրանքով չտպագրվի «...կոմերիտական սերիայով, այլ իբրև առանձին գիրք»: Գրությամբ դիմում է նաև նկարիչ Տաճատ Խաչվանքյանին և պարտավորեցնում անձամբ հետևել Դաշտենցի գրքի ձևավորմանը, որպեսզի արտաքինը տխուր չլինի:

1934 – Չարենցի խմբագրությամբ տպագրվում են Ֆիրդուսու «Ռուստոմ և Սոհրաբ» (թարգմանիչ՝ Գևորգ Ասատուր, ձևավորումը՝ Սարյանի), Բելա Իլեշի «Տիսսան այրվում է», Գոգոլի «Քիթը» գրքերը, Դոստոևսկու «Երկերի ժողովածու»-ի I հատորը (թարգմանիչներ՝ Նար-Դոս, Շիրվանզադե, Մակինցյան):

1934 – Առանձնահատուկ է Չարենցի խմբագրությամբ լույս տեսած Շեքսպիրի «Մակբեթ»-ը (թարգմանիչ՝ Հովհաննես Խան Մասեհյան): Խմբագրում է «Լիր արքա» ողբերգության՝ Մասեհյանի թարգմանությունը (1898, Թիֆլիս): Հիմնականում արդիականացնում է լեզուն, վեհացնում ոճը: Շեքսպիրով ոգեշնչված՝ ցանկություն է հայտնում թարգմանելու «Լիր արքա»-ն, նաև «Համլետ»-ը: Տարված էր «Լիր արքա»-ով, ասել է՝ առաջ հասկանում էր, հիմա և՛ հասկանում է, և՛ զգում: Կերպարն այնքան հարազատ էր դարձել, որ առանց բացատրության ասում էր. «Լիրը ես եմ» (Ջարյան Ռ., Հուշապատում, Եր., 1975, էջ 96): Կատարում է «Լիր արքա»-ի ամբողջական խմբագրությունը, որը պետք է տպագրվեր: Եվ ասիա Չարենցի փոխարեն Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչի պաշտոնում հայտնված Սիրասը 1937 թ. նոյեմբերի 9-ին անում է այսպիսի մակագրություն. «Չընդունել՝ ներկայացնել Խան-Մասեհյանի

թարգմանության բնագիրը տպագրության համար: Սիրաս» (Ջարյան Ռ., Մայրամուտից առաջ, Եր., 1988, էջ 430):

Գրքարվեստի հարցերում շատ էր կարևորում տեղային միջավայրը, գույնն ու երանգը. «Եթե նկարիչը չի բավարարում ճաշակի այսօրվա պահանջները, արհեստավոր է: Եթե նա մեր հողից, մեր ժողովրդի կյանքից, մեզ հուզող հարցերից դուրս մոդեռնիզմ է խաղում, նույնպես արհեստավոր է» («Հուշեր Եղիշե Չարենցի մասին», էջ 184): Ասում ու պնդում էր՝ պետք է օրինակ վերցնենք ոռու ու եվրոպացի հրատարակիչներից, բայց ստեղծենք մերը, մեր ազգային գիրքը, որովհետև գրքի մշակույթը ազգային արժեք է: Հրատարակչությունում իր շուրջ էր համախմբել Սարյանին, Կոջոյանին, Տաճատ Խաչվանքյանին և յուրաքանչյուր գրքի ձևավորման կապակցությամբ հանգամանալի քննարկումներ էր անցկացնում: Կոջոյանն անմիջապես համաձայնել էր «Գիրք ճանապարհի»-ն ձևավորելու առաջարկին, բայց միայն երկարատև գրույցներից հետո էր անցել գործի. «Շատ սիրով երկար ու անքուն գիշերներ անցկացրի այդ գրքի յուրաքանչյուր էջի վրա: <...> ...ընթացքում Չարենցը վերցնում էր մատիտը և իր մտքերը արտահայտում նկարչական մոտավոր գծերով: Այդպիսի դեպքերում ինձ թվում էր, որ իմ դեմ նկարիչ Չարենցն է նստած: Պետք է խոստովանեմ, որ միայն Չարենցի օգնությամբ ու խորհուրդով «Գիրք ճանապարհի»-ի ձևավորումն ու պատկերազարդումը նրա կողմից հավանության արժանացավ <...>: Չարենցը աչքերը կկոցելով դիտում էր ժողովածուի ձևավորումը, պատկերազարդումները և գոհունակությամբ կրկնում. «Իսկ և իսկ իմ ուզածն է ստացվել, շնորհակալություն, վարպետ»» («Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», 1961, էջ 305):

Չարենցը Կոջոյանին է նվիրում բոլոր ժողովուրդների այբուբենների ժողովածու՝ տառերի հիանալի նմուշներով, և ասում. «Քեզ շատ պետք է, հատկապես քո տառարվեստի համար» (նույն տեղում, էջ 306): Կոջոյանը ձևավորում է նաև Գորկու «Բանաստեղծություններ և լեզնախոսներ» (1934) գիրքը՝ Չարենցի թարգմանությամբ, որը՝ որպես ընծա, տա՛նում են ԽՍՀՄ գրողների հիմնադրի համագումարի պատվիրակներին, և որն արժանանում է նաև Գորկու հիացմունքին:

Ընդհանրապես Չարենցն ուշադիր էր ցանկացած գրքի ձևավորման հանդեպ, ինքն էլ իր ցուցումներով մասնակցում էր ձևավորմանը: Այդպես նա հիացել է նաև Ֆիրդուսու «Շահնամե»-ի՝ իր խմբագրությամբ լույս տեսած գրքի՝ Սարյանի ձևավորմամբ: Այս կապակցությամբ Սարյանը գրում է. «Չարենցը մոլի գրասեր էր և գիրքը լավ էր հասկանում: Ջարմանալի նուրբ դիտողություններ կաներ ձևավորողին, տեխնիկական խմբագրին, կազմարարին, կարճ ասած՝ բոլորին, ովքեր կապ ունեն գրքի ստեղծման հետ: «Ռոստոմ և Սոհրաբ»-ը տպելիս մոտիկից տեսա, որ նա՝ իբրև հրատարակիչ, պրոֆեսիոնալ էր: Այն,

ինչ կոչվում է «գրքի էսթետիկա», Չարենցի համար ասես մասնագիտություն լիներ: <...>: Գաղտնիք չէ, որ Չարենցի պաշտոնավարության ժամանակ պետհրատի թողարկած գրքերը այսօր էլ նախանձ են շարժում: Եվ գաղտնիք չէ, որ դրանք այդպես են շնորհիվ Չարենցի միջամտության, շնորհիվ այն բանի, որ կրում են Չարենցի ճաշակի կնիքը» («Հուշեր Եղիշե Չարենցի մասին», էջ 182-183):

Առանձին էջ է ազգային դյուցազներգության պատումների հրատարակությունը: Չարենցը տարված էր «Մասնա ծոեր»-ով. և ուսումնասիրում էր, և գրում իր «Սասունցի Դավիթ» պոեմը: Կ. Մելիք-Օհանջանյանին դժգոհել է ժողովրդական վեպի գրառման որակից. «...պատումների մի սովոր մասը թերի է՝ և՛ բովանդակությամբ լավ չի պատկերված ժողովրդի նիստուկացը, կենցաղը, և՛ գրի առնելու սիստեմի բացակայությամբ, այսինքն՝ կայուն, գիտականորեն մշակված սիստեմի բացակայության հետևանքով վեպի ձևն էլ ակներև չէ, ցայտուն չէ» («Հիշողություններ Չարենցի մասին», էջ 326):

Խանջանը Չարենցին առաջարկում է կազմակերպել «Մասնա ծոեր»-ի ծանոթ պատումների հրատարակությունը և գրի առնել նոր պատումներ: Չարենցը դժվարությամբ համոզում է Մ. Աբեղյանին՝ զլխավորելու գործը. «...համաձայնվեց ղեկավարել վեպի պատումների խմբագրությունը, հրաժարվեց վեպի նոր պատումներ հավաքելու և գրի առնելու աշխատանքից» (նույն տեղում, էջ 328):

1932 թ. սեպտեմբերի 2-ին, ինչպես նաև Աբեղյանին հասցեագրած այլ նամակներում Չարենցը ճշտում է «Մասնա ծոեր» ժողովրդական վեպի պատումների հրատարակության աշխատանքային պայմանները: 1932 թ. սեպտեմբերի 7-ին «Մասնա ծոեր»-ի խմբագիր Աբեղյանի և Պետհրատի գեղարվեստական գրակա՛նության բաժնի վարիչ Չարենցի միջև Չարենցի իսկ ձեռքով կազմվում է պայմանագիր: Առաջին կետի պահանջները. «Հեղինակը հանձն է առնում հավաքել ու խմբագրել «Հայ ժողովրդական վեպի՝ Մասնա ծոերի» բոլոր լույս տեսած և անտիպ վարիանտները: Աշխատությանը պետք է կցված լինեն՝ ա) առաջաբան, բ) հատուկ անունների մասին ծանոթագրություններ, գ) լեզվական-քերականական բացատրություններ, դ) բառարան և ե) հատուկ անունների ցանկ: Ծանոթագրություններն ու լեզվական յուրաքանչյուր վարիանտի համար առանձին բառարանն ու հատուկ անունների ցանկը երրորդ հատորի վերջում ամբողջ աշխատության համար: Աշխատությունն ունենալու է մոտավոր ծավալ մեկ հարյուր մամուլի սահմաններում» («Սովետական գրականություն», Եր., 1982, թիվ 10, էջ 124, «Չարենցյան ընթերցումներ», V, Եր., 1988, էջ 186-187): 1932 թ. սեպտեմբերի 8-ին կից գրությամբ պայմանագիրն ուղարկում է Աբեղյանին. «Եթե համաձայն եք պայմանագրի այս վերջնական ձևակերպման հետ, ստորագրեք և մի օրինակ վերադարձրեք մեզ, որից հետո արդեն կանցնենք վարիանտների գնման աշխատանքին»: Երկկողմանի գրություններով աշխատանքային

համագործակցության պայմանները ճշտվում են: Ընթացքում աշխատանքները շարունակվում են. 1933 թ. մայիսի 11-ին Չարենցը գրություն է ուղարկում Արեղյանին. «Խնդրում ենք բանակցել բանահավաք Չիթունու հետ՝ իր մոտ գտնվող վարիանտները ստանալու համար: Հոնորարը դրամով վճարելու հնարավորություն չունենալով, մենք կարող ենք նրան ուղարկել Պետհրատի կողմից հրատարակված գրքերից, իր ուղարկած ցուցակի համաձայն» («Սովետական գրականություն», Եր., 1982, թիվ 10, էջ 125): Աշխատանքները հաջող ավարտ են ունենում: Գրքի Ա հատորը լույս է տեսնում 1936 թ.՝ Խորհրդային Հայաստանի 15-ամյակի կապակցությամբ, երբ Չարենցն արդեն հեռացված էր հրատարակչությունից, մինչդեռ մտադիր էր կազմակերպել բանահյուսական այլ նյութերի հրատարակություններ ևս՝ վիպերգեր, հեքիաթներ, առածներ, խաղիկներ... Գրքի ձևավորումը (Հ. Կոչոյան) և տպագրությունը բացառիկ են: Այդպես բացառիկ է նաև իր «Գիրք ճանապարհի» ժողովածուի հրատարակությունը՝ դարձյալ Կոչոյանի գեղազարդումներով:

Առանձին էջ է նաև Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպի հայերեն հրատարակությունը՝ Կարեն Միքայելյանի թարգմանությամբ: 1934 թ. Չարենցի պատասխանատու խմբագրությամբ, Բակունցի առաջաբանով, Կարեն Միքայելյանի բարձրորակ թարգմանությամբ լույս է տեսնում Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպը:

Ավելացնենք, որ այս ընթացքում Չարենցը Միքայելյանի հետ համագործակցում էր նաև Մոսկվայում ուսերեն «Հայ պոեզիայի անթոլոգիա» տպագրելու և իր՝ Միքայելյանի պատմվածքները Երևանում հրատարակելու հարցերով:

Չարենցը շատ էր կապված իր աշխատանքին: Դա իր առօրյան էր՝ հանդիպումներ, ստեղծագործական ծրագրեր, քննարկումներ, բանավեճեր, անգամ, բարուրը գրկած, երբեմն իր հետ տանում էր առաջնեկին: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. հունվարի 24-ի որոշմամբ՝ Չարենցը և մի շարք գրողներ մեկ տարով ազատվում են աշխատանքից, նյութապես ապահովվում՝ նվիրվելու հատկապես ստեղծագործական աշխատանքի: Մի քանի օր անց՝ փետրվարի 17-ին, Չարենցը դիմում է Կենտկոմի կուլտպրոպ բաժին և առարկում ընդունված որոշման դեմ. «Ինչ վերաբերում է ինձ՝ հայտնում եմ, որ իմ ստեղծագործական պարապմունքներին խանգարում էր ոչ թե Պետհրատի աշխատանքը, այլ այն, որ այդ պաշտոնավարության ռոճիկն ինձ չի ապահովել նյութապես, և ես հարկադրված եմ եղել, բացի պաշտոնավարությունից, բոլոր ազատ ժամանակս տրամադրել խմբագրական, թարգմանական և այլ աշխատանքների, որպեսզի հնարավորություն ունենամ ապրելու: <...>: Բացի այս, ես ինձ չեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է միանգամայն կտրվել պրակտիկ աշխատանքից և զբաղվել ստեղծագործությամբ: Պետհրատի աշխատանքը

միակ ասպարեզն է, որին կապված եմ ես,– ինձ համար մի չափազանց հետաքրքիր ասպարեզ, որի մեջ կատարած իմ աշխատանքը, կարծում եմ, վստահար չէ ոչ ինձ, ոչ էլ Պետհրատի համար: Ի նկատի ունենալով այս ամենը՝ խնդրում եմ ինձ թողնել Պետհրատում աշխատելու...» (ՀԱԱ, ֆ. 1, ց. 12, գ. 248, թ. 5, ֆ. 1, ց. 6, գ. 266, Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. VI, էջ 461-463):

1935 թ. ահաբեկչի մեղադրանքով Չարենցին մի քանի անգամ կանչում են հարցաքննության: Մարտի 8-ին նա հեռացվում է զբաղեցրած պաշտոնից: Նույն օրը «Հայտարարություն» վերնագրված գրությամբ Չարենցը դիմում է Հայաստանի խորհրդային գրողների միության վարչությանը. «Հայտնում եմ, որ այսօրվանից ես դուրս եմ գալիս Գրողների կորպորացիայից <...>: Խնդրում եմ դիմումս ընդունել առանց հետին մտքերի, չտալ նրան քաղաքական բովանդակություն»: Չարենցի դիմումին տալիս են քաղաքական բովանդակություն և մարտի 13-ին՝ իր ծննդյան օրը, հեռացնում գրողների միության շարքերից:

Միջնադարյան կացին

Ես ներշնչված արեգակով
Տեսչում էի այգաբացին,
Սակայն եղավ նա մեզ համար
Միջնադարյան սրած կացին:
Եվ գլուխներ թռան պայծառ –
Կացնի զարկից այդ մահաբեր,
Արյունատենչ ու արնավառ
Դահիճը իր գահին է դեռ:
Նա մորթոտված գլուխների
Ուղեղներն է միայն ծամում,
Եվ մոլեգնում է վիթխարի
Մեր երկրին դառած սամում:
Օ, մորթոտված արեգակներ,
Խավարեցիք հորիզոնում,
Ձեր բախտակից պոետը՝ ձեր
Բանտի մեջ ձեզ երգ է ձոնում:
Դուք ամենքով էլ դարավոր,
Դարի շնչով էիք ապրում,
Դարն եղավ ձեզ հուղարկավոր
Եվ նզովք է ձեզ ուղարկում,
Քանզի դեռ կա դահիճ ազահ
Արյունատենչ ու վիթխարի,
Կառափներով բարձրացած գահ՝
Դառած կացին միջնադարի:
Եվ այդ կացնով միջնադարյան
Արեգակներ գլխատվեցին,
Արևները, ավաղ, չկան:
Հորիզոնները մթնեցին:

1937 թ., բանտ

Դավիթ Գասպարյան, Նորահայր էջեր, Երևանի
համալսարանի հրատարակչություն 1996 թ. էջ 136 ■

Արժանատի դեմք մը, գիրք մը, հեղինակ մը

Վրէժ-Արմէն

Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Անկասկած պիտի ուզէի գրել այդ դեմքին մասին, թէկուզ միայն անոր համար, որ զինք ճանչնալու բախտատրութիւնն ունեցած եմ: Անկասկած պիտի ուզէի գրել այդ դեմքին նուիրուած գիրքին մասին անոր համար նաև, որ վէպի մը պէս հեքով կարդացուելիք երկ մըն է ան: Անկասկած պիտի ուզէի գրել այդ գիրքին հեղինակին ալ մասին, որուն հետ գործակցելու հաճոյքը վայելած եմ: Ուրեմն չէի կրնար «թուղթին յանձնել» այս տողերը Աշոտ Հայկազուն Գրիգորեանի «ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՌՈՍԷՆ ԶՈՒԼՈՒԿԵԱՆ» հատորին վերաբերեալ, որուն գոյութեան մասին գաղափար ալ չունէի մինչև հեղինակին իսկ կողմէ ինծի առաքուիլը իր մեծադիր ու ծանր մէկ այլ գիրքին հետ՝ բարեացակամ ընկերոջ մը ճամպրուկով...

Գիրքը, որ 292 էջերէ կը բաղկանայ, լոյս տեսած է 2020-ին, Երևան՝ «Անտէնոր» տպագրատունէն, որպէս հրատարակութիւն ՀՀ քաղաքաշինութեան կոմիտէի Ալեքսանտր Թամանեանի անուան ճարտարապետութեան ազգային թանգարան-ինստիտուտի, գեղարուեստական ձևաւորմամբ Արամ Ռոտմէանի:

Ռոմէն Զուլիակեան (որուն նուիրուած գիրքէն բոլոր մէջբերումները կը ներկայացնեմ դասական ուղղագրութեամբ) շատ քիչ ճանչցուած է մեզմէ շատերուն կողմէ՝ հակառակ անոր, որ «հայ ճարտարապետութեան ինքնատիպ դեմքերից» մէկն էր, մէկը «20-րդ դարի երկրորդ կէսին բոտն գործունէութիւն ծաւալած ճարտարապետների հրաշալի սերնդի «յառաջապահ գնդի» ներկայացուցիչներից (էջ 13):

Գալով հեղինակին՝ ճարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ Աշոտ Հայկազուն Գրիգորեանի՝ նշենք, որ ան վերոնշեալ թանգարան-հիմնարկին երկարամեայ տնօրէն էր, նաև նկարիչ-արուեստագէտ է, ստորագրած է աւելի քան 200 գիտական յօդուածներ ու հրապարակումներ և հեղինակ է ինչպէս մասնագիտական, այնպէս ալ գրական-գեղարուեստական հատորներու, որոնցմէ յիշենք «Խորհրդանշանային մտածողութիւնը հայ ճարտարապետութիւնում», «Հայոց ազգին պարտէզի գանձերը՝ Պալեաններ» գիրքերը և այլն: Անոր ու թանգարանի իր աշխատակիցներուն մասնակցութեամբ էր, որ 2013-ին Մոնթրէալի մէջ համագաղութային կազմակերպութեամբ կայացաւ Անիի՝ Հայաստանի մայրաքաղաք հռչակման 1050-ամեակին նուիրուած մեծ ցուցահանդէսը:

Իսկ ի՞նչ է Ռոմէն (Ռոմանոս, մտերիմներուն համար՝ Ռոմիկ) Սուրէնի Զուլիակեանը:

Ան ծնած է 1937 դեկտեմբեր 31-ին Հոկտեմբերեան (այժմ՝ Արմաիր): Նախակրթութիւնը ստացած է Երևանի Ղ. Աղայեանի անուան դպրոցը, հետևած



է նկարչական դասընթացներու, ապա Երևանի ճարտարագիտական հիմնարկէն (պոլիտեխնիկական ինստիտուտէն) վկայուած է իբր ճարտարագէտ-ճարտարապետ ու 1963-էն սկսեալ և իր ստեղծագործական ամբողջ կեանքին ընթացքին դասաւանդած է նոյն հաստատութեան ու Երևանի ճարտարապետութեան և շինարարութեան համալսարանին մէջ՝ զուգահեռաբար աշխատելով նաև Երևաննախագիծ հիմնարկին մէջ՝ երկու պարագաներուն ալ հասնելով ղեկավար դիրքերու: 1990-1991 կը դառնայ Երևանի գլխաւոր ճարտարապետը և, չնայած այդ հանգամանքին, համեստօրէն ինծի պիտի ընկերանար՝ զիս տանելու Օշական, ուր կը գտնուի Մեսրոպ Մաշտոցի դամբարանը (ի դէպ, եկելէցոյն որմնանկարներու այժմէացումը իր ձեռքի գործն է, բան մը, որ իրմէ չէ, որ տեղեկացած եմ): 1991-1996 ան Հայաստանի ճարտարապետութեան և շինարարութեան պետական վարչութեան պետն էր, 1996-1997՝ ՀՀ քաղաքաշինութեան նախարարի առաջին տեղակալը, 1997-էն մինչև 2005 թուականը, այսինքն՝ մինչև իր անժամանակ մահը՝ քաղաքաշինութեան նախարարի գլխաւոր խորհրդականն ու ՀՀ քաղաքաշինական խորհրդի նախագահը:

Գրիգորեան, շեշտելով Զուլիակեանի դերը իբրև մանկավարժի, դասախօսի և ուսանողական նախագծերու ղեկավարի, կը նշէ. «Նա ուսանողին սովորեցնում էր մտածել, համեմատել, բաղդատել, առաջադրանքները դիտարկել թէ՛ մասնակիի, թէ՛ ընդհանուրի համատեքստում, երբեք չմոռանալ ճարտարապետութեան գեղարուեստական կողմի մասին» (էջ 244):

Ռոմէն Զուլիակեան միշտ գործակցած է իր ժամանակակից անուանի մտաւորականներու, արուեստագէտներու և ուրիշ ճարտարապետներու հետ: Արժանացած է բոլորին յարգանքին ու սիրոյն, ստացած է ազգային թէ՛ միջազգային մրցանակներ, եղած է Միջազգային ճարտարապետական ակադեմիայի անդամ և Հայաստանի ճարտարապետական



Աշոտ Հայկազուն Գրիգորեան

սկադեմիայի թղթակից անդամ, վերջապես՝ ՀՀ վաստակավոր ճարտարապետ, կոչում, որ ստացած է 1988-ին՝ իր բազմաթիվ և ինքնատիպ ստեղծագործական գործունեության համար:

Այդ ստեղծագործական արգասիքին հանգամանորեն կ'անդրադառնայ սոյն գիրքը: Կ'արժէ նախ ամփոփ ներկայացնել անոր բովանդակությունը:

«Ճարտարապետ Ռոմեո Ջուլիակեան» հատորը կը բաղկանայ երեք գլխավոր մասերէ, որոնք, սակայն, այդպէս չեն առանձնացուած: Առաջին մասը կը վերաբերի գիրքի ստեղծման պարագաներուն, Ջուլիակեանի արժանիքներուն և մտքերուն, ինչպէս նաև իր ժամանակաշրջանի բնութագրման, որ կարելի է նկատել սոյն հատորի ամենէն յատկանշական ներդրումներէն մէկը:

Երկրորդ բաժինը, որ կը գրաւէ գիրքին առիծի բաժինը, յատկացուած է ճարտարապետին իրականացած ու չիրականացած ստեղծագործութիւններուն՝ ներառելով ոչ միայն շէնքերը, այլև արուեստի ու մասնատրապէս կիրարական արուեստի գործերը, ինչպէս՝ յուշակոթողներ, շիրմաքարեր, ճեպանկարներ, գիրքերու և այլ գեղարուեստական ձևաորումներ, տառատեսակներ, յուշամետալներ և այլն, և այլն:

Երրորդ բաժինը կ'ընդգրկէ նախ բոլոր համապարփակ ցուցակները իր վերոնշեալ ստեղծագործութիւններուն, ապա՝ հատորին մէջ գետեղուած լուսանկարներուն, օգտագործուած աղբիւրներուն, անուններուն և տեղանուններուն:

Այստեղ յիշեմ նաև, որ գրքին մեկենասը ամերիկաբնակ ճարտարապետ Արամ Ալաջաջեանն է, որուն ուսուցիչ է եղած Ջուլիակեանը:

Գրիգորեան իրաւամբ կը նշէ, որ, ի տարբերութիւն Խորհրդային Միութեան միւս ազգերուն, հայ

ճարտարապետը չէր կրնար անտարբեր մնալ իր ժողովուրդի դառն ճակատագրին նկատմամբ ու «չխթանել վերածնմանը, չարթնացնել հայոց ինքնութեան պահպանման միտումը համազգային իղձերը» (էջ 18), չէր կրնար «տէր չկանգնել իր նախնիների ճարտարապետական վիթխարի ժառանգութեանը» (անդ), բայց միաժամանակ չէր կարող չզգալ ժամանակի շունչը, «առաջ չնայել, չարձագանգել արտաքին աշխարհի հետ հաղորդակցման, ազատական մտածելակերպի արտայայտման և դրսևորման այն բնական պահանջներին, որոնք առաջադրում էր 20-րդ դարը» (անդ):

Ապա կ'աւելցնէ. «Խօսել Ռոմեո Ջուլիակեանի մասին նշանակում է խօսել 20-րդ դարի երկրորդ կէսի մտաւորականութեան մասին ընդհանրապէս: Նա մտաւորական էր այս բառի ամենաընդգրկուն իմաստով» (էջ 20): Անոր կերպարը «իր մէջ էր ամփոփել պատմական ոչ վաղ անցեալի այդ ժամանակահատուածի ողջ անցուղարձը, նրա զգայուն հոգին կրում էր իրարամերձ փիլիսոփայութիւնների, սոցիալ-կենցաղային, աշխարհաքաղաքական բոլոր հակասութիւնների ազդեցութիւնները, որոնք անպայման իրենց արտայայտութիւնն էին գտնելու նրա ստեղծագործութիւններում» (անդ): Եւ համայնաւար գաղափարախօսութեան համահարթեցման ընդհանուր մթնոլորտին մէջ, «երբ ակնյայտօրէն յետին պլան էին մղում նախագծի նորարարականութիւնը, ճարտարապետական ասելիքը, գեղագիտական նոր որակներ ստանալու հեռանկարները, Ջուլիակեանն իր նախագծերով առաջարկում էր եթէ ոչ յեղաշրջումային մօտեցումներ, ապա գոնէ ելակէտային ճարտարապետական նոր ուղիների ուրուագծեր, ինչը համատարած միապաղաղութեան մէջ ճարտարարուեստի տարբեր ուղղութիւնների կիրառման հնարաւորութիւն կը տար» (էջ 21):

Հետաքրքրականն այն է, որ իրարու հակադրուող հոսանքներուն մէջ գերակշռող աւանդապաշտ կամ աւանդապաշտութեան մօտ առաջադրուող լուծումներն էին, որ կ'իրականանային՝ գրեթէ տեղ չձգելով Ջուլիակեանի նմաններուն յօրինումներուն: Անոնց կարգին՝ այս վերջինին գլուխգործոցը համարուող «Հիւրանոցը», որ «իր ազատ, օղեղէն, ծաւալատարածական լուծումներով, թոյլատրելի վերապահ աւարտուող ծաւալով տեղ չգտաւ Գլխավոր պողոտայով» (էջ 27): Գրքին կողքին ահա այդ հիւրանոցի գծագրութիւնն է գետեղուած:

Գրիգորեան շատ ճիշտ դիտել կու տայ, որ «Ջուլիակեան, իր ժամանակի ծնունդը լինելով հանդերձ, նրա բարդոյթների կրողն էր, ըմբոստացողն ու գոհը» (էջ 29): Այս տեսանկիւնէն է, որ հեղինակը կ'առաջադրէ փորձել «ներկայացնել նրա գործունեութեան արդիւնքում ստեղծուած նախագծերն ու դրանց իրականացումները, գրքերի ու մետալների ձևաւորումներն ու դրանց տարբերակները, բաղդատելով դրանք ըստ տիպաբանական, գեղագիտական առանձնայատկութիւնների, համեմատելի

եզրեր գտնել ժամանակի ճարտարապետական մտածելակերպի և ապագայ տեսլական-կանխատեսումների միջև, գնահատել ջուլիակեանական արուեստի աղերսները համամարդկայինի, ազգայինի և միջազգայինի հետ, դրանց դերն ու նշանակությունը և որպես ընդհանրացման փորձ, առաել արժանաւոր և արժանապատուօրէն ներկայացնել Ռոմէո Ջուլիակեան արուեստագէտ-մտաւորականի սքանչելի կերպարն իրեն բնորոշ բազմերանգ ներկայականի բոլոր գոյներով» (անդ): Եւ Աշոտ Գրիգորեան լաւապէս կը յաջողի իր այս առաջադրանքին մէջ՝ այս հատորին տալով վկայաբանական կարևոր արժէք մը: Ընթերցողը պարտաւոր է ձեռք ձգել այս գիրքը և անձամբ կարդալ՝ ըմբռնելու համար զայն ու ամբողջական պատկերացում մը ունենալու Ջուլիակեան ճարտարապետին մասին: Ատով հանդերձ՝ կ'արժէ յանելալ կարգ մը մէջբերումներով Ջուլիակեանը ընթերցողին ծանօթացնել այս յօդուածի սահմաններուն մէջ:

Այս գալիք տողերը, որքան Ջուլիակեանի ստեղծագործական ճիգը կամ տաղանդը կը բնորոշեն, նոյնքան ալ գաղափար մը կու տան բանաստեղծ-ճարտարապետ Գրիգորեանի ոճին մասին: Կու տամ կրճատումներով, ի հարկէ՝ հասկնալի պատճառներով:


«Միայնակ ծխողը սուրճի գաւաթով: Հետեւել ծխախոտի ծխին, որն ազատ սահելով իր երկնային պարն է բռնում օդելէն անսահմանում և վեր, դէպի երկնային անհունութիւնը ճախրելով հեռանում է իր երազների մէջ՝ սա հէնց այն է, ինչը նշանակում է

խօսել ինքդ քեզ հետ, նշանակում է ծխի գալարների մէջ փորձել գտնել գծի ուրուապատկերը, և որ աւելի խորհրդաւոր է՝ նրա ասելիքը: Սակայն սա հեշտ ձեռնարկ չէ, քանզի սուրճի թանձր զանգուածը քեզ քաշում է դէպի երկրի խորքերը և երկաթբետոնի ամրութեամբ փորձում է քարացնել հոգուդ ճախրանքը, մտքերիդ ազատ ընթացքը, և դու մոլորում ես իրականութեան և երազների արանքում.... Մինչ այդ ծխախոտի ծուխը շարունակում է ազատ ճախրել, ծիծաղելով սուրճի թանձրացած նստուածքի ոչինչ չատող զանգուածի վրայ. ինչքան էլ բախտագուշակները փորձեն նրա մէջ տեսնել վաղուայ երազների ուրուագծեր, պատկերներ և թուացեալ իրողութիւններ: Իսկ նախագիծը... խորհուրդներով լեցուն, թղթի վրայ է մնացել և մնալու է, ցաօք, ընդմիշտ» (էջ 32):

«Նախագծելը բարդ, հետազօտական աշխատանք է: Տեսէք, եկելեցի նախագծելիս մինչնախագծային հետազօտութիւն ես կատարում, ինքդ քեզ համար փորձում ամփոփել, ի մի բերել տեսածդ, զգացածդ, կարդացածդ, բաղդատել, թէ քեզնից առաջ ով ինչ և ինչպէս է արել:միննոյն է, դու չես կարողանում դուրս գալ այդ գայթակղիչ բեռի ծանրութեան և խորհրդի տակից, ու քո առաջին փնտրտութային էսքիզները կամայ-ակամայ դրանց ազդեցութիւնն են կրում: Յետոյ միայն գիտակցում ես, որ եկելեցու ծանր պատերի միջից քո երազներն են փորձում հասցնել աստծուն, ու ցանկութիւն է առաջանում գոռալ և քանդել պատերը, դրանք էլ պոկել գետնի ձգող ծանրութիւնից, բաց թողնել, որ ճախրեն դէպի երկինք, փորձում ես պայթեցնել նոյնիսկ յատակագծային չորս պատերի կաշկանդող քառանկիւնը, ազատ լինել որևէ նախապաշարումից ու կաղապարից, ինչպէս «Նարեկը» խօսել երկնքի հետ» (էջ 32-33):

Հայ ճարտարապետները, որոնք հպարտ էին իրենց պատմական ժառանգութեամբ, պաշտամունքային նոր շէնք մը յօրինելու պահուն կ'իյնային հինն ընդօրինակելու, նմանակելու թակարդը: «Դա ուղի էր ուրիշների համար, բայց ոչ Ջուլիակեանի» (էջ 68),– դիտել կու տայ Գրիգորեան: Ինչո՞ւ: «...խոչընդոտը հեղինակների աշխարհընկալման աթէիստական պատկերացումների, եկելեցուց, նրա պատմութիւնից, դասաւաբանութիւնից հեռու լինելու, պակաս կամ ոչ ճիշտ ու լիարժէք տեղեկացած ըլլալու մէջ էր» (էջ 69):

Ըստ Գրիգորեանի՝ Ռոմէո Ջուլիակեան իր աշխատանքին կը մօտենար՝ միշտ հաւատարիմ մնալով իր աշխարհընկալումին, մարդու կեանքի իմաստասիրութեան իր պատկերացումներուն: Ան իր գործերը կը դիտէր «ազգային աւանդականի և արդիականի յարատևող մարտահրաւերներու ենթատեքստում» (էջ 34): Նոյնիսկ բնակարաններու նախագիծերը պատրաստած ատեն կը փորձէր «գտնել կահոյքի, բովսարու, սեան, աստիճանավանդակի կամ աստիճանի, պատուհանի բացուածքի նոր, ինքնատիպ, չկրկնուող լուծում: Ոչինչ չի անտեսում՝ փողոց, բակ, այգի, հանգստի գօտի, ծաղկանոց, տուն, տանիք, շէնքի ճակատ, պատի զարդանախշ, լոյս ու



Ռոմէո Ջուլիակեան



Ռոմեո Ջուլիակեանի նախագծած յուշահամալիրը
Լիբանանի հայկական Այնճար գիղին մէջ

ստուներ և այլն» (էջ անդ):

Ջուլիակեան ատելորդապաշտութիւններու կամ ձևապաշտութիւններու գացող մէկը չէր: Ահա թէ ինչ կ'ըսէ հեղինակը այս մասին. «Ջուլիակեանի «քախօս» ճարտարապետական հէնքը հայ միջնադարեան պաշտամունքային ճարտարապետութիւնից է գալիս. պարզ, անպաճոյճ ձևեր, բայց հզօր գեղարուեստական մոնումենտալութիւն: Ջուլիակեանի մօտ դէկորը գեղարուեստական պարզունակ հնարանք չէ, այլ կերպարի արտայայտչականութեան անբաժան մաս՝ իր խորհրդով: Ասումը հաւասարապէս վերաբերում է նրա ներկայակալի բազմերանգութեան արդիւնքում ստեղծուած բոլոր գործերին, լինեն դրանք նախագծեր, ճարտարապետական փոքր ձևեր թէ ձևաւորումներ կամ այլ յօրինուածքներ» (էջ 36):

Ահա իր իսկ բառերով Ջուլիակեանի ստեղծագործական դիրքորոշումը. «Ես ճարտարապետութիւնն ընկալում եմ որպէս հասարակական կեանքի կազմակերպական տարածութիւն, որպէս այդ կեանքի բարեկեցիկ գոյատևման ապահովման իրատեսակ թաղանթ: Ճարտարապետի խնդիրն է այդ թաղանթի ներքին տարածութիւնը կազմակերպել հարմոնիկօրէն օրէնքներով, դարձնել այն հոյակերտ, արժանապատուօրէն պահանջարկուած և անել այնպէս, որ նրա ներսում կեանքն ընթանայ իր բնական պարզ տրամաբանութեամբ» (էջ 39):

Ան ճարտարապետական իր ըմբռնումներն ու ակնկալիքները ամփոփած է հետևեալ կոտ ձևով՝

1. արտայայտչական ձևերի պարզութիւն,
2. յօրինուածքի կառուցողական կատարելութիւն,
3. օգտագործուող նիւթերի արտայայտչականութիւն,
4. այս ամենի գեղարուեստական գրաւչութիւն:

Այս պարզ հաստատումները կրնան ունէ՛ ճարտարապետի՝ հայ թէ ոչ հայ, հաւատոյ հանգանակը ըլլալ:

Այս լոյսին տակ ալ Աշոտ Գրիգորեանի կողմէ կը ներկայացուին Ջուլիակեանի իրականացած թէ

թողթի վրայ մնացած գլխաւոր գործերը, ներառեալ անոր զուլսգործոցը: Նշենք կերտուած գործերէն մի քանին՝ առանց մտնելու մանրամասնութիւններու մէջ.

- Երևանի գետնուղիի «Շէնգաւիթ» կայարանը (համահեղինակներ՝ Սուրէն Բուրխաջեան և Ալբերտ Միրզոյեան, 1978-1979),

- Երևանի գետնուղիի «Ջօրավար Անդրանիկ» կայարանը (համահեղինակներ՝ Սուրէն Բուրխաջեան և Վարդան Փիլոսեան, 1982-1983),

- Յովհաննէս Թումանեանի սիրտն ամփոփող մատուռը (Դսեղ, 1994),

- Ղարաքիլիսայի հերոսամարտին նուիրուած Վանաձորի զանգակատուն-յուշարձանը (1996),

- Երևանի Սայաթ-Նովա փողոցի վրայ շինուած մենատունը (1996),

- Մուսա լեռան ինքնապաշտպանութեան 70-ամեակին նուիրուած յուշահամալիրը Այնճարի մէջ (Լիբանան, 1996),

- Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ կից առաջնորդարանի մուտքը և մոմավառութեան սրահով զանգակատունը (համահեղինակ՝ Զիւմ Թորոսեան, 2001),

- Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մուտքը (Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասը (համահեղինակ՝ Զ. Թորոսեան, քանդակագործ Երուանդ Գոճապախչանի հարթաքանդակներով, 2001) և բաց խորանը (համահեղինակ՝ Զ. Թորոսեան, 2001),

- Մայր Աթոռի մկրտարանի շէնքը (համահեղինակ՝ Զ. Թորոսեան, 2004):

Աշոտ Գրիգորեան հանգամանօրէն կը ներկայացնէ նաև Ռոմեո Ջուլիակեանէն այլ ստեղծագործութիւններ՝ հարիւրաւոր լուսանկարներով և գծագրութիւններով:

Մեզի կը մնայ վայելել այս հատորը և երախտապարտ ըլլալ հեղինակին՝ իր այս կենսական աշխատանքն ընթերցողին մատուցած ըլլալուն համար՝ միշտ ակնկալելով, որ ուրիշ նման հատորներ ևս ան յաջողի դնել մեր սեղանին: ■



Սրբ. Գրիգոր Լուսաւորչի կամարը և Սրբ. Տրդատ Արքայի բաց խորանը (Մայր Աթոռ Սրբ. Էջմիածին)

27 ՄԱՅԻՍ 1907
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ
115-ՐԴ ՏԱՐԵԼԻԳ

ԳԷՈՐԳ ԶԱԽՈՒՇԻ ՆԱՄԱԿԸ

Սարուստանի* զինուոր ընկերներին.

Սիրելիք

Ցաւում ենք արեան մէջ մկրտուած ընկերներ, որ դուք մոռացած Տաճկաստանի ու Կովկասի այս տագնապալի դրութիւնը, մոռացած ձեր ընկեր նահատակների վրէժը, ընկած էք այնպիսի ցնորքների յետեւ, որ կորստաբեր է երկար ու ձիգ տարիների ընթացքում ստեղծուած այն կազմակերպութեան, որի անունն է Դաշնակցութիւն.- ընկերներ. դուք պէտք է գիտնաք, որ ձեզ յաջորդող ընկերները, որ արեան ծովի մէջ լողացող նահատակ հայ ժողովուրդը, ձեր ճակատին պիտի դրոշմեն դաւաճանի սեւ անունը, եթէ դուք այնքան նեղ, այնքան կուսակցական լինիք, որ մոռանաք, կլանիք միմիայն կովկասեան կամ Տաճկահայ հարցով: Ձեզնից կոյր են նրանք, որ չեն ընդունում Տաճկաստանի գործի կարեւորութիւնը եւ Կովկասեան հարցի անհրաժեշտութիւնը,- դա դէմ է յեղափոխութեան, դա կոյր հոսանք է, որ արհամարհում են արեան մէջ խեղդող ձեր ընկերները.- մեզ թշուառներիս, կենդանի նահատակներիս հարկաւոր չեն նեղ կուսակցականներ, մեզ պէտք են յեղափոխականներ, որ ըմբռնում են ժամանակի պահանջները, որ մտածում են Տաճկահայ եւ Կովկասահայ ժողովրդեան վրայ հաւասարապէս: Յաջողութիւն ենք մաղթում ազատութեան համար նահատակուող այն զինուոր ընկերներին, որ Դաշնակցութեան դրօշին, սկզբունքներին հաւատարիմ ընկնում են յանուն հայութեան՝ վիշտը իւր կրծքին: Իսկ մեր արիւնը թող անէժք լինի այնպիսիներին, որոնք կլանուած միմիայն Տաճկահայ կամ Կովկասահայ դատով, ուզում են քայքայել Դաշնակցութեան հոյակապ կազմակերպութիւնը:

Դուրան 1906, 17 Հոկտեմբերի

Իսկականը կնքուած է իւր անձնական կնիքով

*Սարուստան: Ռուսաստան

Ի. դ. Դուրան-Բարձրաւանդակի
Կենտ. Կոմիտէի
ԳԷՈՐԳ ԶԱԽՈՒՇ

ԴՐՕՇԱԿ

«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան համար»
Ե. Հատոր



ԴՐՈՇԱԿ

Երևան, մայիս, 2022 թ.